



*Եզդի երեխաներ (Արագածոտնի մարզ)*
*Ֆիոլետովո գյուղի մոլոկանները*
ՌՈՒԲԵՆ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ / PATKER AGENCY
WWW.PATKERPHOTO.COM

# Հարավային Կովկաս.

## Ազգայնականություն, հակամարտություններ և փոքրամասնություններ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**


2 Առնչվող միջազգային փաստաթղթեր
3 Նախաբան
4 Տարածաշրջանի քարտեզը
5 Ներածություն
6 Պատմություն և քաղաքականություն
7 Քարտեզի վերագծում. Մեկուսի գոյատևում
8 Հետագա մասնատումների հնարավոր շրջանակները
9 Փոքրամասնությունները նոր պետություններում
10 Վերջաբան
11 Առաջարկություններ
12 Ծանոթագրություններ
13 Գրականության ցանկ


ԱՆՆԱ ՄԱՏՎԵԵՎԱ

MRG

# Խնդրին առնչվող միջազգային փաստաթղթեր

**Հռչակագիր ազգային, էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին /ընդունված է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից, բանաձև թիվ 47/135, 18 դեկտեմբերի, 1992 թ./**

**Հոդված 1**

1. Պետությունները պաշտպանում են իրենց տարածքում բնակվող փnfrամասնությունների կենսագործունեությունը և նրանց ազգային, էթնիկ, մշակութային և լեզվական յուrօrինակությունները և նպաստավոr պայմաններ ստեղծում այդ յուrօrինակությունների զարգացման համար:
2. Պետությունները ընդունում են համապատասխան օrենսդրություն և այդ նպատակների իրագործման համար ձեռնարկում այլ միջոցներ:

**Հոդված 2**

1. Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փnfrամասնություններին պատկանող անձինf /հետայսու փnfrամասնություններին պատկանող անձինf/ իրավունf ունեն պահպանելու իրենց մշակույթը, դավանելու և fաrոզելու իրենց կրոնը, խոսելու իրենց լեզվով ինչպես մեկուսի, այնպես էլ hrապարակավ, ազատoրեն, առանց միջամտության կամ խտրականության որևէ այլ ձևի ենթարկվելու:
2. Փnfrամասնություններին պատկանող անձինf իրավունf ունեն ակտիվoրեն մասնակցելու /սվյալ երկրի/ մշակութային, կրոնական, սոցիալական, տնտեսական և հասարակական կյանfին:
3. Փnfrամասնություններին պատկանող անձինf իրավունf ունեն ներpետական կամ համապատասխան դեպfերում տարածաշrջանային մակարդակով գործնականոrեն մասնակցելու այն որոշումների ընդունմանը, որոնf վերաբերում են այն խմբին, որը նրանf ներկայացնում են կամ այն տարածաշrջանին, որտեղ նրանf բնակվում են: Սույն գործընթացները իրականացվում են ներpետական օrենսդրությանը համապատասխան:
4. Փnfrամասնություններին պատկանող անձինf իրավունf ունեն հիմնելու կամ պահելու իրենց սեփական միությունները /կազմակերպությունները/:
5. Փnfrամասնություններին պատկանող անձինf իրավունf ունեն առանց որևէ խտրականության, ազատ և խաղաղ եղանակով կապեր հաստատելու և պահպանելու իրենց խմբի անդամների, այլ փnfrամասնությունների ներկայացուցիչների, ինչպես նաև այլ երկրների fաղաfացիների հետ, որոնց հետ ունեն ազգակցական, էթնիկ, կրոնական կամ լեզվական առնչություններ:

**Հոդված 3**

1. Փnfrամասնություններին պատկանող անձինf կարող են իրագործել իրենց իրավունfները, ներառյալ սույն Հռչակագրում ամրագրված իրավունfները, ինչպես իրեն անհատ անձինf, այնպես էլ համակարգված` իրենց խմբերի այլ անդամների հետ մեկտեղ` առանց խտրականության ենթարկվելու:
2. Փnfrամասնությանը պատկանող ոչ nf չի կարող տուժել սույն Հռչակագրով նախատեսված իրավունfների կիրարկման կամ չկիրարկման հետևանfով:

**Հոդված 4**

1. Պետությունները, անհրաժեշտության դեպfում, միջոցներ են ձեռնարկում փnfrամասնություններին պատկանող անձանց կողմից մարդու իրավունfների և հիմնարար ազատությունների լիարժեf և գործուն իրականացումն առանց որևէ խտրականության ենթարկվելու և օrենfի առջև բացարձակ իրավահավասարության պայմաններում ապահովելու ուղղությամբ:
2. Պետությունները fայլեր են ձեռնարկում փnfrամասնություններին պատկանող անձանց իրենց յուrօrինակությունը դրսևորելու, մշակույթը, լեզուն զարգացնելու, կրոնը, ավանդույթները ու սովորույթները պահպանելու համար բարենպաստ պայմաններ ստեղծման ուղղությամբ, բացառությամբ այն դեպfերի, երբ յուրահատուկ ծեսերի կատարումը հակասում է ներpետական օrենսդրությանը կամ միջազգային չափանիշներին:
3. Պետությունները հնարավորինս fայլեր են ձեռնարկում, որպեսզի փnfrամասնություններին` պատկանող անձինf պատշաճ հնարավորություններ ունենան ուսանելու իրենց մայրենի լեզուն կամ ուսում ստանալու իրենց մայրենի լեզվով:
4. Պետությունները, անհրաժեշտության դեպfում, fայլեր են ձեռնարկում կրթական բնագավառում` խրախուսելով իրենց տարածfում ապրող փnfrամասնությունների` իրենց պատմության, ավանդույթների, լեզվի և մշակույթի իմացությունը: Իսկ փnfrամասնությունների ներկայացուցիչներին համապատասխանաբար հնարավորություն է ընձեռվում գիտելիfներ ձեռf բերելու հասարակության որպես մեկ ամբողջության մասին:
5. Պետությունները ձեռնարկում են միջոցներ, որպեսզի ապահովեն փnfrամասնությունների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը երկրի տնտեսական առաջընթացի և զարգացման գործում:

**Հոդված 5**

1. Ազգային fաղաfականությունը և ծրագրերը մշակվում և կենսագործվում են ի պատշաճ հաշվի առնելով փnfrամասնությունների ներկայացուցիչների օrինական շահերը:
2. Պետությունների միջև համագործակցության ու աջակցության ծրագրերը մշակվում և իրականացվում են ի պատշաճ հաշվի առնելով փnfrամասնությունների ներկայացուցիչների օrինական շահերը:

**Հոդված 6**
Պետությունները փոխըմբռնումն ու վստահությունը խրախուսելու նպատակով փոխգործակցում են փոքրամասնություններին պատկանող անձանց առնչվող՝ inter alia, տեղեկատվության և փորձի փոխանակման բնագավառներում:

**Հոդված 7**
Պետությունները համագործակցում են ի շահ սույն Հռչակագրում նշված իրավունքների նկատմամբ հարգանքի խրախուսման:

**Հոդված 8**
1. Սույն Հռչակագրում շարադրված որևէ կետ չի կարող խոչընդոտել պետությունների միջազգային այն պարտավորությունների կատարմանը, որոնք առնչվում են փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքներին: Մասնավորապես, պետությունները անվերապահորեն կատարում են իրենց այն հանձնառությունները ու պարտավորությունները, որոնք ստանձնել են միջազգային պայմանագրերով կամ ստորագրված համաձայնագրերով:
2. Սույն Հռչակագրով ամրագրված իրավունքների իրագործումը չի կարող խոչընդոտել որևէ անձի կողմից միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացմանը:
3. Այն միջոցները, որոնք կձեռնարկվեն պետությունների կողմից սույն Հռչակագրում շարադրված իրավունքների իրագործումն ապահովելու համար, չեն կարող prima facie դիտարկվել որպես Մարդու իրավունքների համաշխարհային հռչակագրի հավասարության սկզբունքին հակասող:
4. Սույն Հռչակագրի ոչ մի կետ չի կարող այնպիսի մեկնաբանություն ստանալ, որը կարող է հանգեցնել Միացյալ Ազգերի Կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին, այդ թվում լիիրավ իրավահավասարության, տարածքային ամբողջականության և պետությունների քաղաքական անկախության սկզբունքներին հակասող գործողությունների:

**Հոդված 9**
Մասնագիտացված գործակալությունները ու Միացյալ Ազգերի Կազմակերպության համակարգի այլ հաստատությունները իրենց իրավասության շրջանակներում նպաստում են սույն Հռչակագրով նախատեսված իրավունքների և սկզբունքների ամբողջական իրագործմանը:

**Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագիր /ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից, բանաձև 2200A [XXI], 16 դեկտեմբերի 1966 թ./**

**Հոդված 27**
Այն պետություններում, որտեղ գոյություն ունեն էթնիկ, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, փոքրամասնությունների խմբերին պատկանող անձինք չեն կարող զրկված լինել իրենց խմբի այլ անդամների հետ մեկտեղ իրենց մշակույթը պահպանելու, իրենց կրոնը դավանելու և քարոզելու, կամ իրենց լեզվով խոսելու իրավունքից:

**Ռասայական խտրականության բոլոր տեսակների վերացման մասին կոնվենցիա /ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմիք, բանաձև 2106 [XX], 21 դեկտեմբերի 1965 թ./**

**Հոդված 2**
2. Անդամակցող պետությունները ըստ հանգամանքների սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում ձեռնարկում են հատուկ և կոնկրետ քայլեր որոշակի ռասայական խմբերի կամ դրանց պատկանող անհատների համապատասխան զարգացումն ու պաշտպանվածությունն ապահովելու ուղղությամբ: Վերոնշյալ քայլերի անհրաժեշտությունը պայմանավորված է փոքրամասնությունների խմբերի կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք և հավասար իրագործումը երաշխավորելու նպատակով: Այն նպատակների իրագործումը, ի շահ որոնց իրականացման ձեռնարկվել են այս քայլերը, ոչ մի դեպքում չպետք է նպաստեն տարբեր ռասայական խմբերի միջև անհավասար իրավունքների կամ խտրականության գոյացմանը: Նպատակադրված խնդիրների լուծումից հետո կիրառվող միջոցները ոչ մի դեպքում չեն կարող իբրև հետևանք հանգեցնել տարբեր ռասայական խմբերի համար անհավասար կամ առանձին իրավունքների գոյացմանը:

# Նախաբան

Այս զեկույցի նպատակներից մեկն է լույս սփռել մի տարածաշրջանի վրա, որը սակավ է լուսաբանվում և օտարների համար, թերևս, մնում է անըմբռնելի։ Երկրորդ, սակայն, ըստ էության, առավել կարևոր նպատակն է ներկայացնել Հարավային Կովկասի տարածաշրջանում մեծամասնություններին և փոքրամասնություններին առնչվող առկա իրադրությունը և խրախուսել նրանց՝ իրենց միջև եղած տարբերությունների հաղթահարմանը և առկա ընդհանրությունների հիման վրա համագործակցություն հաստատմանը միտված համատեղ ճիգերը։

Վերոնշյալ երկրորդ նպատակն առանձնակի կարևորվում է՝ մասնավորապես հաշվի առնելով Հարավային Կովկասում ազգայնականության զգալի խորացումը։ Ընդամենը մեկ տասնամյակ առաջ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը, որոնք նախկինում Խորհրդային Միության հանրապետություններ էին, անկախացան։ Անկախությանը զուգընթաց ուժգնացավ և առավել արմատացավ էթնիկ պատկանելության գիտակցությունը, որն ավանդաբար ամուր արմատներ ուներ Կովկասում։ Ազգայնականության խորացումն իր հետ բերեց իր գաղափարախոսությունը, և հաճախ գերիշխող խմբերի կրոններն ու լեզուները ճանաչվեցին որպես նորմ, իսկ փոքրամասնություններն անտեսվեցին և դուրս մղվեցին։ Ի հավելումն դրան, ելնելով ազգայնականության և ճնշամիջոցների աճի հանգամանքից, տեսակետ է ձևավորվել, որ հակամարտությունները սովորական երևույթ են դարձել Հարավային Կովկասում՝ սկսած Աբխազիայից մինչև Լեռնային Ղարաբաղ ու Հարավային Օսիա։ Բնակչության բռնի տեղաշարժերն ու առանձին հանրապետությունների ստեղծումը տարածաշրջանում համածին /միաէթնիկ/ բնակչության ձևավորման միտման երկու ակնառու դրսևորումներն են, իսկ առկա զարգացումները կարող են հանգեցնել մասնատվածության հետագա խորացմանը։

Դեռ ավելին՝ շատերը կասկածի տակ են առնում, որ անցած տասը տարիների ընթացքում կենսապայմանները տարածաշրջանում բարելավվել են։ Անկախությունն իր հետ բերեց տնտեսական և սոցիալական մեծ դժվարություններ, և Հարավային Կովկասում համեմատաբար սակավաթիվ մարդիկ են լիարժեք օգտվում ժողովրդավարական իրավունքներից։ Հատկապես տուժել են փոքրամասնությունները, որոնք ապրում են չքավորության, մեկուսացման և, հաճախ, վախի մթնոլորտում։ Շատերն արտագաղթել են Ռուսաստանի Դաշնություն, որը դեռևս ամուր կապեր և ազդեցություն ունի տարածաշրջանի վրա։

ՓԻԽ-ի նոր զեկույցում, որի հեղինակն է Աննա Մատվեևան, ներկայացվում է Հարավային Կովկասի և նրա ժողովուրդների արդի իրադրության հանգամանալից և սուր վերլուծություն։ Զեկույցն ուրվագծում է տարածաշրջանի մեծամասնությունների ակունքները, նրանց նախախորհրդային պատմությունն ու Խորհրդային Միության կողմից կրած ազդեցությունը, ինչպես նաև քննության է առնում տարածաշրջանի պետությունների քաղաքական զարգացումն անկախանալուց ի վեր։ Հեղինակը պնդում է, որ փոքրամասնությունների ապագան ուղղակիորեն կախված է տարածաշրջանի երկրների ներպետական, սոցիալական, քաղաքական և տնտեսական իրավիճակի հետագա զարգացումներից։ Հեղինակը մասնավորապես քննության է առնում տարածաշրջանի «սառեցված» հակամարտությունների հանգուցալուծման ու փակուղիների վերացման համար գործադրվող ջանքերը՝ գնահատելով տվյալ հակամարտությունների կարգավորման հնարավորությունները։

Զեկույցում մասնավորապես շեշտը դրվում է այն տարաբնույթ և բարդ կացության վրա, որում գտնվում են Հարավային Կովկասի ազգային տարբեր փոքրամասնությունները։ Տարածաշրջանի կառավարությունները հաճախ չեն ցանկանում ճանաչել փոքրամասնությունների իրավունքները, իսկ մեծամասնություն կազմող բնակչության շատ ներկայացուցիչներ անտարբեր են փոքրամասնությունների հիմնահարցերի նկատմամբ, մյուս կողմից էլ չեն ճանաչում նրանց ներդրումը հասարակության կյանքում։ Փոքրամասնություններն իրենց հերթին գրեթե չեն հավատում, որ պետությունները կպահովեն իրենց բարեկեցությունը և իրենց օտարված են զգում։ Բազմաբնույթ միջազգային միջամտությունն այս հարցերում առ այսօր հակասական արդյունքների է հանգեցրել։ Շատ երկրներ Հարավային Կովկասը դիտարկում են որպես կարևոր ռազմավարական տարածաշրջան և, միաժամանակ, շահագրգռություն են ցուցաբերում Կասպից ծովի էներգառեսուրսների նկատմամբ։ Հայաստանին և Վրաստանին ԱՄՆ-ի կողմից հատկացվող տարեկան օգնությունը կազմում է մոտ մեկ միլիարդ դոլար։ 2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո սկսված «ահաբեկչության դեմ պատերազմն» իր ազդեցությունն է գործել տարածաշրջանում վարվող քաղաքականության վրա և անհանգստություն է պատճառում տեղի մուսուլմանական փոքրամասնություններին։ Ավելին, տարածաշրջանի երկրների Եվրոպայի Խորհրդին անդամակցությունից բխող մարդու իրավունքների բնագավառում բարեփոխությունների ակնկալիքները դեռևս չեն իրականացել։

Հուսով ենք, որ զեկույցի վերջում բերվող առաջարկությունները կնպաստեն Հարավային Կովկասում

խաղաղության, կառուցողական հաշտության հաստատմանը և կայուն զարգացմանը միտված քայլերի ձեռնարկմանը: Առաջարկությունները հիմնականում հասցեագրված են տարածաշրջանի երկրների կառավարություններին և ժողովուրդներին, սակայն չպետք է անտեսել նաև այլ պետությունների և միջազգային կառույցների շահերի ու ազդեցության դերը: Միջազգային դերակատարներն էլ պետք է հետամուտ լինեն, որպեսզի իրենց ազդեցությունն այդ տարածաշրջանում դրական իմաստով ի նպաստ դրվի Հարավային Կովկասի բոլոր ժողովուրդների շահերի պաշտպանությանը:

**Մարկ Լաթիմեր**
Տնօրեն
Ապրիլ 2002 թ.


Հարավային Կովկաս

# Ծանոթություն

Հարավային Կովկասը, որը ներառում է Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը և նախկինում Խորհրդային Միության /ԽՍՀՄ/ մասն էր կազմում, վերջինիս փլուզումից հետո միջազգային հանրությանը հայտնի դարձավ իր հակամարտություններով: Գտնվելով Եվրասիայի տափաստանների և Մերձավոր Արևելքի բարձրավանդակների հատման կետում Սև և Կասպից ծովերի միջև, այս տարածաշրջանը մասնատված է Կովկասյան լեռներով: Աշխարհագրական այսպիսի առանձնահատուկ դիրքը սահմանափակել է տարածաշրջանի ժողովուրդների ձուլման ընթացքը և նպաստել տարբեր տարածքներում ընդգծված յուրահատկությունների պահպանմանը:

Պատմականորեն այս տարածքը պատերազմների բեմահարթակ է եղել, որտեղ իրենց տիրակալությունն են հաստատել Պարսկական, Օսմանյան և Ռուսական կայսրությունները, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին այստեղ թողել է իր մշակութային և քաղաքական ժառանգությունը: Պատմությունը տարածաշրջանի աշխարհագրական դիրքի հետ մեկտեղ նպաստել է էթնիկ բազմատարրության և /միջ/կրոնական բազմազանության գոյացմանը:

Երեք երկրներն էլ իրենց անմիջական հարևանների Իրանի, Ռուսաստանի և Թուրքիայի համեմատությամբ փոքր պետություններ են, որն էլ նրանց առանձնապես զգայուն է դարձնում արտաքին ազդեցությունների նկատմամբ: Հայաստանի բնակչության թիվը կազմում է 3 336 100 մարդ /ըստ 2001 թ. հունիսի տվյալների, 2001 թ. հոկտեմբերի մարդահամարի տվյալները դեռևս չեն հրապարակվել/, որի 97-98 տոկոսը հայեր են: Բնակչության մնացյալ մասը հույներ են, ռուսները և եզդի քրդեր[1] : Ադրբեջանի բնակչության թիվը կազմում է 7 953 400 մարդ /ըստ 1999 թվականի մարդահամարի/, որից 91 տոկոսը ադրբեջանցիներ են: Երկրի հիմնական ազգային փոքրամասնություններից են լեզգիները /2.2 %/, ավարները /0.6%/ և հյուսիսկովկասյան այլ ժողովուրդներ ու ռուսներ /1.8 %/: Վրաստանի բնակչության թիվը հասնում է գրեթե 5 միլիոնի /2001 թվականի հուլիսի տվյալներով/[2] , որտեղ հիմնական ազգային փոքրամասնություններն են աբխազները, հայերը, ադրբեջանցիները, օսերն ու ռուսները /տոկոսային հարաբերակցությունը վիճահարույց է/:

Քսաներորդ դարում կոմունիստական ղեկավարությունը փորձեց ստեղծել վերազգային համընդհանուր խորհրդային առանձնահատկություն փորձելով մեծ խումբ կազմող փոքրամասնություններին տալ խիստ հակասական կառուցվածք ունեցող ինքնավարություն: Գորբաչովի ղեկավարման ժամանակաշրջանում Մոսկվայի հսկողության թուլացումը ի դերև հանեց վերնշյալ համընդհանուր առանձնահատկության թուլությունը և էթնիկ կապերի տևական ուժը:

1980-ական թ.թ. տարածաշրջանում առկա անկախության ձգտումներն իրենց դրսևորումը գտան միմյանց հետ մրցակցող ազգայնական միտումների խորացման մեջ, իսկ խորհրդային մտավորականությունը սկսեց ծայրահեղական էթնոցենտրիզմ քարոզել: Դրան հաջորդեցին Աբխազիայի, Լեռնային Ղարաբաղի ու Հարավային Օսիայի էթնիկ պատերազմները, որոնք բնակչության տեղահանումների և մասսայական տառապանքների պատճառ դարձան: Ցավոք, միջազգային իրավունքը պատրաստի լուծումներ չի առաջարկում մի այնպիսի խնդրի համար, ինչպիսին է տարածքային ամբողջականության և ազգային ինքնորոշման իրավունքների հակասությունը: Մինչդեռ, տարածաշրջանի քաղաքական զարգացումները նպաստել են, որպեսզի միջազգայնորեն ճանաչված պետություններից անջատված միավորներն առավել ևս օտարվեն:

Ազատվելով ռուսական տիրապետությունից Հարավային Կովկասում մեծամասնություն կազմող ժողովուրդները հայերը, ադրբեջանցիներն ու վրացիները, սկսեցին կառուցել ժամանակակից պետություններ, որոնք հիմնականում կազմված են հիշյալ ազգերից ու արդեն ամրագրված սահմաններ ունեն: Միաժամանակ, տնտեսական ճգնաժամերը և կենսամակարդակի կտրուկ անկումը հանգեցրեցին անկախության նկատմամբ հիասթափության: Տարածաշրջանի ազգային մեծամասնությունները իբրև անկախության նվազագույն արդյունք ստացան իրենց սեփական ճակատագիրը տնօրինելու ազատություն, մինչդեռ նրանց հետ ապրող փոքրամասնությունների բաժին ընկան առավել մեծ դժվարություններ և անորոշություն: Հիմնական խմբերի կողմից ստեղծվող նոր քաղաքական կառույցներն ու գաղափարախոսությունը նպաստեցին արտագաղթի ու միաէթնիկ միտումների սաստկացմանը, և ազգային փոքրամասնությունների շատ ներկայացուցիչներ սկսեցին իրենց տվյալ պետություններից օտարված զգալ:

Մինչ պետություններն ու հասարակություններն ավելի ու ավելի էին հեռանում ընդհանուր խորհրդային արմատներից, ավելի շուտ բաժանողականությունը, քան միասնականությունը Հարավային Կովկասում դարձավ հիմնական միտումը: Օտարերկրյա մեկնաբաններն ու քաղաքական գործիչները հակված են չափից ավելի շեշտադրելու կովկասյան երեք պետությունների ընդհանրությունները: Անշուշտ, տարածաշրջանի մշակույթների, արժեքների ու ավանդույթների միջև նմանություններ կան, սակայն, անկախ հանրապետությունների ստեղծումից ի վեր եղած տարբերություններն առավել խորացել են:

Տարածաշրջանային ինտեգրումը և երկկողմ կառավարվող ինքնավարությունները հաճախ իբրև ելք են ներկայացվում ազգամիջյան հակասությունների լաբիրին-

թուից: Սակայն, Կովկասում այդօրինակ տարբերակները դրական արձագանքի չեն կարող արժանանալ: Ե՛վ կառավարությունները և՛ մեծամասնություններին պատկանող հասարակ մարդիկ այնպիսի ծանրակշիռ ներդրումներ են ունեցել պետականության կառուցման գործում, որ, արդ, ցանկացած գաղափար, որը կարող է որևէ փոփոխության հանգեցնել, պարզապես սրբապղծություն է համարվում: Ավելին, տարածաշրջանի երկրների հասարակությունները դարձել են այնքան ներհակ և իրենց ներքին հիմնահարցերի վրա կենտրոնացած, որ բացարձակապես հետաքրքրություն չեն ցուցաբերում այն իրադրության նկատմամբ, որում գտնվում են իրենց անմիջական հարևանները:

Հաջորդ միտումը տարածաշրջանում գոյություն ունեցող հիմնահարցերը Ռուսաստանի շարունակական միջամտությանը վերագրելն է: Այդ առնչությամբ տեսակետ կա, որ ազգային փոքրամասնությունները չափազանց զգայուն են Ռուսաստանի կողմից գործադրվող մեքենայություններին ենթարկվելու առումով: Ըստ որոշ կարծիքների, եթե Մոսկվային համոզեն դադարեցնել իր միջամտությունը տարածաշրջանի հարցերին, ապա Հարավային Կովկասում խաղաղություն կհաստատվի և այն կբարգավաճի: Եվ թեպետ Ռուսաստանի Կովկասից հեռանալու եղանակը, որը դեռևս ընթացքի մեջ է, չի կարելի «փափուկ» համարել, այնուամենայնիվ, որոշակի դժգոհությունների բացակայության պայմաններում բավականին դժվարին խնդիր է այդ եղանակին հակադիր որևէ առաջարկություն ներկայացնել: Ավելին, Կովկասում հանդուրժողականության և բազմակարծության նկատմամբ հարգանքի կուլտուրայի բացակայության պայմաններում դժվարին խնդիր է կայունության հաստատումը:

Սույն զեկուցը հիմնականում անդրադառնում է Հարավային Կովկասի ներտարածաշրջանային զարգացումներին՝ համառոտ ուրվագծելով վերջիններիս նկատմամբ ձևավորված միջազգային դիրքորոշումը: Այն ծրագրվել է որպես Հարավային Կովկասի ազգային փոքրամասնությունների խնդիրներին առնչվող ներածություն:

# Պատմություն և քաղաքականություն

## Նախախորհրդային պատմություն

Մինչ խորհրդային իշխանության հաստատումը Հարավային Կովկասում բառիս արդիական իմաստով պետություններ գոյություն չունեին։ Որոշ ժողովուրդներ, ինչպես օրինակ հայերն ու վրացիները, պետականություն ունեին միջին դարերում, որն էլ համարում են իրենց ներկայիս պետականության կառուցման հիմքը։ Աբխազները ևս պետական կազմավորման ստեղծման նմանօրինակ փորձ ունեցել են, որը սակայն միտումնավոր մոռացության էր մատնվել խորհրդային ժամանակաշրջանում։ Իսկ, ասենք ադրբեջանցիներն, անգամ պետականության կառուցման այդքան հեռու գնացող փորձ չեն ձեռնարկել։ Այդուամենայնիվ, վերոնշյալ բոլոր ժողովուրդներն ունեն մի ընդհանուր պատմություն, քանի որ բոլորն էլ երկար ժամանակ եղել են տարբեր կայսրությունների տիրապետության ներքո, որոնք տարածաշրջանում կառավարման սեփական մոդելն են ներդրել։ Սակայն, քանզի այս տարածաշրջանը շարունակ ձեռքից ձեռք էր անցնում, ուստի ներդրված մոդելները չեն արմատավորվել։ Ընդհուպ մինչև խորհրդային ժամանակաշրջանը Հարավային Կովկասը հանդիսանում էր համեմատաբար մեկ ամբողջություն՝ առանց ամրագրված սահմանների, որտեղ էթնիկ խմբերը կարող էին ազատ տեղաշարժվել։ Տարածքի և էթնիկ պատկանելության փոխկապակցվածությունն ամրագրվեց միայն խորհրդային ժամանակաշրջանում, որն էլ արդի ազգայնամոլությանը ծնունդ տված սկզբնապատճառը դարձավ։

**Հայեր**

Հայերենը[3] հնդեվրոպական լեզվաընտանիքում մի առանձին խումբ է կազմում։ Հայերին դեռևս մ.թ.ա. 400 թվականին հիշատակում է Քսենոփոնը։ Հայերը պատկանում են ամենահին քրիստոնյա ժողովուրդների թվին և քրիստոնեությունն ընդունել են մ.թ. 301 թվականին[4]։ Նրանց սեփական այբուբենը ստեղծվել է հինգերորդ դարի սկզբներին։ Հայկական քրիստոնեական դավանանքն ուրույն է և հետևում է միածնության ուսմունքին։ Տարբեր ժամանակաշրջաններում հայկական թագավորությունները զբաղեցրել են տարածքներ, որոնք արդ գտնվում են այժմյան Հայաստանում, Ադրբեջանում, Իրանում և Թուրքիայում։ Արևելյան Հայաստանն Իրանի տիրապետության տակ է գտնվել մինչև 1828 թվականը, երբ այն միացվեց Ռուսական Կայսրությանը։ Արևմտյան Հայաստանը գտնվում էր Օսմանյան Կայսրության կազմում, որտեղ հայերը հալածանքների ենթարկվեցին 1895 թվականին, որին հաջորդեց 1915 թվականին իրագործված, ըստ հայկական տեսակետի ցեղասպանությունը, ինչը սակայն հերքվում է Թուրքիայի կողմից։ Այդ ժամանակաշրջանում բազմաթիվ հայեր գաղթեցին Արևելյան Հայաստան[5] ։ 1915 թվականի իրադարձությունների զոհերի թիվն ըստ տարբեր հաշվարկների, տատանվում է 600 000-ից 2 միլիոնի միջև։ Արևմտյան Հայաստանում նախապատերազմական ժամանակաշրջանում հայկական բնակչության թիվը նույնպես տատանվում էր 1.75-ից 3 միլիոնի միջև / մինչ 1915 թվականը Անատոլիայի հայ բնակչության ներկայացվող թիվը վիճահարույց է/։ Այդ ժամանակաշրջանին վերաբերող և անհատական ու միասնական հիշողությունները շատ զորեղ են հայության մեջ և հանդիսանում են ժամանակակից հայկական ինքնության անկյունաքարերից մեկը։ Հայերը, հրեաների նման, սփյուռքի ժողովուրդ են և հզոր համայնքներ ունեն Ֆրանսիայում, Ռուսաստանում ու ԱՄՆ-ի արևմտյան ափին։ Շատ հայեր են ապրում նաև Մերձավոր Արևելքում և Պարսկաստանում։ Սփյուռքի հովանավորությունն ու քաղաքական ազդեցությունը կարևոր, երբեմն հակասական դեր ունեն Հայաստանի քաղաքականության մեջ։ Խորհրդային Միության մաս կազմելուց առաջ երկիրը կարճատև և անհանգիստ անկախություն էր ձեռք բերել /1918-21 թ.թ./։ Այդ ժամանակաշրջանում Հայաստանը պատերազմում էր հարևան երկրների՝ Ադրբեջանի և Վրաստանի հետ։ Հայ հեղափոխական դաշնակցությունը /Դաշնակցություն կամ դաշնակներ/ Հայաստանի ամենահին կուսակցությունը, փորձում էր այդ անհանգիստ ժամանակաշրջանում կառավարել երկիրը՝ հենվելով ազգայնականության և սոցիալիզմի գաղափարների վրա։ 1920 թվականին Օսմանյան կայսրության փլուզումից հետո արևմտյան դաշնակիցներն ու Թուրքիան ճանաչեցին Հայաստանի անկախությունը և նախկին կայսրության տարածքից վերջինիս վիճելի տարածք հատկացրեցին։ Այնուամենայնիվ, Հայաստանի տարածքների մի մասը մնաց Թուրքիային։

**Ադրբեջանցիներ**

Ադրբեջանցիների էթնիկ ակունքները հստակ չեն։ Գերակայող կարծիք կա, որ ադրբեջանցիները թուրքական ժողովուրդ են։ Բայց կա նաև տեսակետ, ըստ որի ադրբեջանցիները թուրքացած կովկասցիներ են կամ, ինչպես վկայում է Իրանի պաշտոնական պատմությունը, թուրքացած արիացիներ։ Պատմության ընթացքում ադրբեջանցիները գտնվել են Սասանյանների, թուրք սելջուկների, Կենտրոնական Ասիայի Թիմուրիդների /14-15 դ.դ. Լենկթեմուրի հաջորդներ-խմբ./ և Իրանական Սեֆեյանների հզոր կայսրությունների տիրակալության ներքո։ Այդ հանգամանքը դարձավ հետագայում ադրբեջանական ժողովրդի էթնիկ բազմակերպության զարգացման պատճառը[6] ։ Այսօր ադրբեջանական ժողովուրդը բա-

ժանված է Ադրբեջանի Հանրապետության և Իրանի միջև: Վերջինս էթնիկ ադրբեջանցիների մեծամասնության հանգրվանն է /մոտ 20 միլոն/, թեպետ Իրանում բնակվող ադրբեջանցիների թվաքանակը փաստող հավաստի տվյալներ առ այսօր հայտնի չեն: Ռուսաստանը Հյուսիսային Ադրբեջան մտավ 18-րդ դարում և այժմյան հանրապետության տարածքը գրավեց դեռևս 1828 թվականին, երբ ամրագրվեց Իրանի հետ սահմանագիծը: Իսլամը մուտք գործեց Ադրբեջան մ.թ. 8-րդ դարում, իսկ տեղի բնակիչներն Իսլամի շիական ուղղությունն ընդունեցին 16-րդ դարում՝ առավելապես Սեֆյան Իրանի ազդեցության հետևանքով:

Տասնիններորդ դարում Ադրբեջանում նավթ հայտնաբերվեց՝ երկիրը դարձնելով աշխարհի նավթարդյունաբերության կարևորագույն կետերից մեկը: Նավթի արտադրությունը Ադրբեջանի մայրաքաղաք Բաքու գրավեց շատ հայերի, հրեաների, ռուսների և այլ փոքրամասնությունների, որը նպաստեց տարածքի բարգավաճմանը և հանգեցրեց բազմատարրության ձևավորմանը: 1918-20 թ.թ. Ադրբեջանը նույնպես կարճատև անկախություն ձեռք բերեց, որն ուղեկցվեց խռովություններով և բռնություններով, որոնց ընթացքում սպանվեցին հազարավոր հայեր ու ադրբեջանցիներ: Երկիրը վերանվաճվեց Կարմիր բանակի կողմից 1920 թվականին՝ Բաքվի բոլշևիկների բազմազգ խմբի օգնությամբ:

## Վրացիներ

Վրացական ժողովուրդը[7] կազմված է այն խմբերից, որոնց մայրենի լեզուն վրացերենն է, ինչպես նաև մինգրելերեն, լազերեն և սվաներեն լեզուների կրողներից: Վրացերենն ունի իր սեփական այբուբենը: Աջարացիները պատմականորեն վրացի մուսուլմաններն են /Աջարիայի տարածքը Օսմանյան կայսրությունը զիջել էր Ռուսաստանին 1878 թվականին/: Նրանք խոսում են վրացերենի բարբառով, որը որոշ ընդհանրություններ ունի մինգրելերենի ու լազերենի հետ: Այս լեզվական, աշխարհագրական և պատմական փոխկապակցությունն արդ Վրաստանում գոյություն ունեցող հակամարտությունների հիմնական պատճառն է: Եվ մինչ վրացերեն լեզվի կրողները փորձում են ժխտել այդ առանձին ինքնությունների գոյությունը, վերջիններս, ընդհակառակը, շեշտում են իրենց բացառիկությունը:

Հայերի նման, վրացիները նույնպես հնագույն քրիստոնյա ժողովուրդներից են: Նրանց «ոսկե դարը» համարվում է տասներկուերորդ դարում Թամար թագուհու տիրապետության շրջանը: Սակայն, 1236 թվականին Վրաստանի նվաճումը մոնղոլների կողմից դարավոր մասնատվածության ու պառակտման, ինչպես նաև մուսուլմանական Օսմանյան և Պարսից կայսրությունների տիրապետության սկիզբը դրեց: Տասնութերորդ դարից ի վեր վրաց տիրակալները ռուսական ցարերի հովանավորությունն էին փնտրում, որն էլ ի վերջո հանգեցրեց Վրաստանի տարածքի միացմանը Ռուսական Կայսրությանը: 1811 թվականին վրացական ուղղափառ եկեղեցին կորցրեց իր ավտոկեֆալ կարգավիճակը, իսկ վրացական ազնվականությունը հետզհետե ավելի և ավելի ռուսամետ դարձավ: Տասնիններորդ դարում Ռուսաստանի կողմից Կովկասում մղվող պատերազմները հանգեցրեցին տեղի մուսուլման ժողովուրդների՝ աբխազների ու լեզգիների զանգվածային արտագաղթին դեպի Օսմանյան Կայսրություն: Նրանց ժառանգներն այսօր բավականին մեծ սփյուռք են կազմում Թուրքիայում: 1810 թ. Աբխազիան ընդունեց Ռուսական ցարի հովանավորությունը, բայց մնաց ինքնավար մինչև 1864 թվականը, երբ վերջնականորեն Ռուսական Կայսրության մաս դարձավ:

Միևնույն ժամանակ, Վրաստանի հայկական փոքրամասնությունը տասնիններորդ դարում ստեղծեց մի նոր բուրժուական համայնք, որը դարձավ երկրի քաղաքային կյանքի հիմնաքարն ու տնտեսական հզոր լծակների տիրացավ: Ռուսաստանը, վախենալով Վրաստանում հզորացող էթնիկ հայերից, ուժեղ հսկողություն հաստատեց հայերի կրոնական և քաղաքական կառույցների վրա: Հայերի և վրացիների միջև ստեղծված այդ լարվածությունը գոյատևում է առ այսօր: Քսաներորդ դարի շեմին մի շարք վրացի մտավորականներ որդեգրեցին մարքսիստական գաղափարախոսությունը: Նրանցից մեկն էր երիտասարդ Ստալինը /Իոսիֆ Ջուղաշվիլի/ : Ցարական ռեժիմի անկումից հետո բարեփոխիչ մենշևիկները ստանձնեցին Վրաստանի իշխանությունը և հիմնեցին անկախ վրացական պետություն: Սակայն, այնուհետև, անտեսելով Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված միմյանց վրա չհարձակվելու մասին դաշնագիրը, 1921 թ. Կարմիր բանակը նվաճեց երկիրը:

## Աբխազներ

Աբխազերենը պատկանում է հյուսիս-արևմտյան կովկասյան լեզվաընտանիքին և շատ մոտ է չերքեզերենին և աբազերենին: Աբխազիան ժողովրդագրական կտրուկ փոփոխություններ է կրել: Բնակչության թիվը 1860-ական թվականներին գրանցված 140 000-ից 1886 թվականին նվազել էր՝ հասնելով մինչև 58 000 մարդու, այնուհետև կրկին աճել՝ հասնելով մինչև 103 000 մարդու/ըստ 1989թ. մարդահամարի/: Միասնական աբխազերեն այբուբենը ստեղծվել է 1928 թվականին, որի հիմքը լատիներենն էր: Այնուհետև այն 1938թ. փոխարինվել է վրացական տառերով: 1944-54 թ.թ. հասարակական ոլորտում աբխազերենը փոխարինվեց վրացերենով, ինչը նպատակ էր հետապնդում վրացիացնել աբխազներին: Ներկայումս գործածվող սլավոնական այբուբենը ներկայացվել է 1954թ., որում վերականգնվել են նախկինում մոռացված որոշ աբխազական նշաններ:

Պատմության ընթացքում Աբխազիան գտնվել է տարբեր կայսրությունների կազմում: Որպես առանձին քաղաքական և մշակութային միավոր այն գոյություն է ունեցել Բյուզանդիայի փլուզումից հետո, իսկ այնուհետև միացվել է վրացական տերությանը: Տասնհինգերորդ դարում օսման նվաճողներն իրենց հետ Աբխազիա ներմուծեցին իսլամը: Վրացիներն ու աբխազները միաց-

յալ ուժերով փորձեցին ազատվել օսմանյան լծից տասնութերորդ դարում, իսկ 1810 թվականին Աբխազիան դարձավ Ռուսաստանի պրոտեկտորատը[8]:

## Խորհրդային ժամանակաշրջան

Ի տարբերություն Միջին Ասիայի՝ բոլշևիկյան ուժերը համեմատաբար արագ վերանվաճեցին Հարավային Կովկասը, ինչին մասամբ նպաստեցին տեղացիներից կազմավորված կոմունիստական խմբերը: Բոլշևիկները, հատկապես Ստալինը, լավատեղյակ լինելով Կովկասի բարքերին, մեծ վարպետությամբ օգտագործում էին փոքրամասնությունների դժգոհությունները իշխող մեծամասնությունների դեմ: Խոստանալով տարբեր ժողովուրդների, որ իրենց ազգային պահանջները կընդունվեն՝ բոլշևիկներին հաջողվեց ճնշել փոքրամասնությունների դիմադրությունը: 1922-1936 թ.թ. Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը միավորվեցին ԽՍՀՄ կազմում ընդգրկված Անդրկովկասյան Սովետական Դաշնության մեջ, իսկ այնուհետև բաժանվեցին առանձին միավորների: Ադրբեջանն ու Վրաստանը բաժանված էին ավելի մանր վարչական միավորների, որն առավել դյուրին էր դարձնում ազգային փոքրամասնությունների պաշտպանությունն իրենց էթնիկ հայրենիքում, ինչպես նաև էթնիկ բազմատարրությամբ տարածքների կառավարումը:

Խորհրդային համակարգը գիտակցում էր ազգային պատկանելության ուժը և օգտագործում այն հասարակության մեջ առկա լարվածությունը թուլացնելու համար: Այնուամենայնիվ, էթնիկ պատկանելության հողի վրա ծագած ազգայնական միտումների և քաղաքական պահանջների արտահայտությունները ճնշվեցին: Նույնիսկ բարձրաստիճան կոմունիստների վրացական արմատները չփրկեցին վրացիներին իրենց հայրենիքում 1920-ական ու 1930-ական թվականներին իրականացված զտումներից, որոնց հետևանքով ոչնչացվեց վրաց մտավորականության մի խոշոր զանգված: Սակայն, Վրաստանը և ողջ Հարավային Կովկասն ընդհանրապես, խորհրդանշական կարևորություն ձեռք բերեցին Խորհրդային Միությունում: Այդ տարածաշրջանին պետությունը տրամադրում էր հատուկ տնտեսական օժանդակություն և իրականացնում գնային կանոնակարգման քաղաքականություն, որի նպատակն էր ապահովել բարձր կենսամակարդակ: Խորհրդային համակարգն այնպես խորը չարմատացավ Կովկասում, ինչպես օրինակ, ԽՍՀՄ-ի կազմում գտնվող սլավոնական երկրներում: Մասնավոր գործարարությունն ու սև շուկաները կովկասյան տարածաշրջանում երբեք արմատապես չոչնչացան, իսկ կոռուպցիայի գոյությունը մեղմեց ավտորիտար համակարգի ազդեցությունը:

Ավելի վաղ իրականացված վարչական կանոնակարգումներն էլ ԽՍՀՄ-ի մասնատման ժամանակ էթնո-տարածքային վեճերի վերազարթոնքի հիմքը հանդիսացան: 1920-ական թվականներին Ստալինը փորձում էր զարգացնել կապերը Թուրքիայի հետ և այդ իսկ պատճառով սատարում Ադրբեջանի՝ առավելապես հայաբնակ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի տարածքների հանդեպ ներկայացրած հավակնություններին: Ի դեպ, վերոնշյալ տարածքների բնակչությունը կիսով չափ մուսուլմական էր, կիսով չափ՝ հայազգի: Ադրբեջանի քաղաքական նկրտումները հակասում էին հայերի՝ իրենց այն պատմական տարածքները, որտեղ հայերը դեռևս մեծամասնություն էին կազմում, միավորելու ցանկությանը, որը և վատթար ներազդեցություն ունեցավ Մոսկվայի հետ հայերի հարաբերությունների վրա:

Բազմազգ Վրաստանը դարձավ խորհրդային էթնոդաշնային կառույցի մի մասը, մի կառույց, որի մեջ միութենական հանրապետություններն առաջնային կարգավիճակ ունեին, իսկ ինքնավար հանրապետությունները՝ երկրորդական: Սև ծովի ափին գտնվող Աբխազիան 1921 թվականին ձեռք բերեց ԽՍՀՄ առանձին հանրապետության կարգավիճակ, բայց նույն թվականին միացվեց Վրացական ԽՍՀ-ին որպես համադաշնային միավոր: Սակայն, այդուհետ Աբխազիան ավելի ցածր կարգավիճակ ստացավ, երբ 1931 թվականին հռչակվեց որպես ինքնավար հանրապետություն Վրաստանի կազմում: 1930-ականներից սկսած և մասնավորապես Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո մեծ թվով վրացիներ տեղափոխվեցին Աբխազիա: 1989 թվականին աբխազ բնակչությունը, ընդամենը 93 000 մարդ, կազմում էր ինքնավար մարզի բնակչության ընդամենը 17 տոկոսը, մինչդեռ բուն վրացիները /առավելապես մեգրելներ/ կազմում էին 45 տոկոս: Վրացիները դժգոհ էին, որ աբխազներն իրենց տարածքում «հատուկ վերաբերմունքի» էին արժանանում, որը դրսևորվում էր աշխատանքի ընդունելիս աբխազների նախընտրությամբ, տեղի կոմունիստական կուսակցության անդամակցության թվային հարաբերակցությամբ, ինչպես նաև աբխազերեն լեզվին և մշակութային կառույցներին ցուցաբերվող աջակցությամբ /չնայած այն հանգամանքին, որ 1930-1950-ական թվականներին աբխազական դպրոցները փակվել էին, իսկ աբխազերեն լեզվով խոսելն արգելված և մեծ թվով աբխազների արտաքսում էր սպառնում/: Հարավային Օսիան, որը գտնվում է Կովկասյան լեռնաշղթայի ստորոտում և ունի ավելի փոքրաթիվ բնակչություն քան Աբխազիան, ստացել էր Վրաստանի կազմում ինքնավար մարզի կարգավիճակ /օբլաստ- ավելի ցածր կարգավիճակ քան ինքնավար հանրապետությունը/, որը և էթնիկ լարվածությունների մեկ այլ պատճառ էր: Հարավային օսերը ղեկավարվում էին Թբիլիսիից և բաժանված էին մնացյալ օսեթ ժողովրդից, որի մեծ մասն ապրում է Ռուսաստանի Դաշնությունում:

Մոսկվան խորհրդային ժամանակաշրջանում մշտական դատավորի դեր էր ստանձնել, որը կոչված է հարթելու փոքրամասնությունների և մեծամասնությունների միջև ծագած լարվածությունները: Որոշ դեպքերում Մոսկվան առաջնություն էր տալիս մեծամասնություններին, իսկ այլ դեպքերում՝ փորձում պահպանել էթնիկ հավասարակշռությունը՝ աշխատակազմերում նշանակումներ կատարելու, ինչպես նաև տեղացիներին անվանակարգության համակարգով իրականացվող աջակ-

ցության միջոցով: Մոսկվան աշխատանքի էր նշանակում փոքրամասնության ներկայացուցիչներին հանրապետությունների մայրաքաղաքներում և Մոսկվայում՝ նպատակ ունենալով նրանց հետագայում ընդգրկել խորհրդային քաղաքական վերնախավի կազմում: Հետագայում այդ կադրերի մեծ մասն աշխատանքի էր նշանակվում էթնիկ հակամարտություններ ունեցող տարածքներում:

Էթնիկ փոքրամասնությունները Խորհրդային Միությունում ենթարկվում էին խիստ սահմանափակումների, որոնց սահմանված շրջագծից դուրս ազգային ինքնության դրսևորումների իրավունք ընձեռված չէր: Անհանդուրժելի էր համարվում վարչական ինքնավարության ցանկացած պահանջ: Սակայն, լեզվի և մշակույթի ոլորտներում որոշ իրավունքներ, այնուամենայնիվ, ընձեռված էին: Խորհրդային քաղաքականությունը մշակույթի բնագավառում, որը սլավոնական այբուբենի հիմքի վրա գրավոր տարբերակներ ստեղծեց այն լեզուների համար, որոնք չունեին իրենց սեփական գիրը, արագորեն բարձրացրեց գրագիտության մակարդակը, իսկ պետականորեն հովանավորվող մշակութային և կրթական հիմնարկները պահպանեցին Կովկասի բազմազանությունը՝ միաժամանակ միավորելով էթնիկ գիտակցությունը:

Խորհրդային իշխանության յոթանասուն տարիները ստեղծեցին կայուն կառավարում՝ բերելով արդիականացում և զարգացում, ինչպես նաև ֆիզիկական և սոցիալական ապահովություն մարդկանց մեծ մասի համար: Խորհրդային իշխանությունը խթանեց նաև ազգային լեզուների, մշակույթների ու կրթության զարգացումը: Սակայն, դրա հետ մեկտեղ խորհրդային իշխանությունը կովկասցիներին զրկել էր իրենց ուղին ընտրելու իրավունքից, թույլ չէր տալիս կովկասցիներին ազատորեն դավանելու իրենց կրոնը, ուժային եղանակներով արդիականացման ծրագրեր էր իրականացնում, համընդհանուր ճնշում էր գործադրում կրոնի վրա, մասնագետների զտումներ էր կատարում և արգելակում էր արտաքին աշխարհի, մասնավորապես տարածաշրջանի հարավային հարևանների, իսկ հայերի դեպքում՝ սփյուռքահայ հայրենակիցների հետ կապերը:

Անկախություն հաստատելիս Կովկասի ժողովուրդների մեծ մասը Խորհրդային Միության ժամանակաշրջանը բնութագրում էր որպես կոմունիստական լծի և ռուսականացման տարիներ՝ համարելով, որ այդ ժամանակաշրջանը բացարձակապես վնասաբեր է եղել: Սակայն անկախության առաջին տասնամյակից հետո, երբ ավելի բարեկեցիկ կյանքի հասնելու հույսերը չարդարացան, շատերը կարոտախտով համակվեցին խորհրդային ժամանակների հանդեպ:

Վերակառուցման /պերեստրոյկա/ գործընթացներով պայմանավորված ազատությունը ցանկացած բողոքների, ներառյալ ազգային պահանջատիրության, արտահայտման հնարավորություն ընձեռեց, չստեղծելով սակայն դրանց լուծման մեխանիզմները: 1980-ական թվականների վերջերին տեղ գտած վայրիվերումները և կենտրոնական իշխանության թուլացումն աննախադեպ հնարավորություններ ընձեռեցին, որոնք էլ Հարավային Կովկասի քաղաքական գործիչները առավելագույնս օգտագործեցին՝ փորձելով իրականացնել կարելվույնս ամեն ինչ:

Սկզբում էթնիկ դժգոհությունները Կովկասում առավելապես բովանդակում էին ներքին հարցերում առավել անկախացման, քան քաղաքական անկախության ձեռք բերման պահանջներ: Այդ ժամանակահատվածում փոքրամասնությունների մշակութային իրավունքների ընդլայնման պահանջներն այդ օրերին արդիական համարվող ժողովրդավարական գործընթացի օրակարգի մասն էին կազմում: Սակայն, վերակառուցման հետ համընթաց և ի հուսախաբություն ռուս ժողովրդավարների ընդհանրապես և Գորբաչովի մասնավորապես, խորանում էին նաև ազգայնական զգացումները: Կովկասում առկա էթնիկ դժգոհությունների լուծման պատշաճ եղանակներ գտնելու Գորբաչովի ցուցաբերած անկարողությունը և խորհրդային զորքերի դաժան գործողությունները, որոնք պատասխանատվություն են կրում խաղաղ բնակչության ջարդերի համար Թբիլիսիում 1989 թվականի ապրիլին և Բաքվում 1990 թ. հունվարին, բացահայտեցին, որ Մոսկվան ի զորու չէ վերահսկել իրադրությունը: 1991 թվականի դրությամբ խորհրդային իշխանությունը Հարավային Կովկասում արդեն փլուզվել էր, և Վրաստանում ու Հայաստանում իշխանության գլուխ բարձրացան անկախություն քարոզող քաղաքական գործիչները: Իսկ Ադրբեջանում իշխանության եկավ «բարեփոխված» կոմունիստական ղեկավարությունը:

# Անկախություն

### Հայաստան

Հայաստանը Կովկասի միակ պետությունն է, որը գրեթե համածին /միաէթնիկ/ է /98 տոկոսով/: Խորհրդային տարիներին հանրապետության 93 տոկոսը հայեր էին: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը հարևան Ադրբեջանի հետ /տե՛ս քարտեզի վերագծումը, էջ 11–14/ հանգեցրեց էթնիկ ադրբեջանցիների և մուսուլման քրդերի վտարմանը, իսկ ծանր տնտեսական իրավիճակը դարձավ երկրից ռուսների արտագաղթի պատճառը:

Անկախության հետ զուգընթաց երկրի քաղաքական վերնախավի փոփոխություն տեղի ունեցավ: Նոր իշխանությունը, որը ծնունդ էր առել ղարաբաղյան պայքարից, իր կազմում ներառում էր պատերազմի հերոսների, որոնք զինված պայքարի մասնակիցներ կամ անվտանգության ուժերի ներկայացուցիչներ էին: Խորհրդային Միության վերջին տարիներին իշխանությունը de facto կոմունիստներից անցավ ազգայնականներին: Հայոց Համազգային Շարժումը /ՀՀՇ/ այլախոհներից կազմված մի խումբ էր, որ ստեղծվեց 1988 թվականին որպես ազգային համախմբման, իսկ ավելի ուշ՝ պետականության կառուցման մի հզոր գործիք: ՀՀՇ ղեկավար Լևոն Տեր-Պետրոսյանը 1991 թվականի հոկտեմբերին ընտրվեց Հայաստանի առաջին նախագահի պաշտոնում: Իշխանության գալով 1990 թվականին՝ ՀՀՇ-ն հանգու-

ցային դեր խաղաց Հայաստանի անցումային շրջանում, ապահովելով երկրի կայուն կառավարումն ու պարտիզանական ջոկատների վերաձևավորումը կանոնավոր բանակի:

Ղարաբաղի պատերազմական ճգնաժամը /սկսված 1988-89 թ.թ./, որը հանգեցրեց Հայաստանի սահմանների փակմանը Ադրբեջանի և Թուրքիայի հետ, ուժեղ հարված էր երկրի համար: Երկրի բնակչությունը զրկվեց ջեռուցումից ու էներգամատակարարումից: Ուրբանիզացված և զարգացած արդյունաբերություն ունեցած երկրի բնակչության համար դժվար էր անցում կատարել դեպի գոյությունը հազիվ ապահովող գյուղատնտեսության, հատկապես հաշվի առնելով, որ մինչ այդ վտարված ֆերմերների զգալի մասը ադրբեջանցիներն ու քրդերն էին: Տնտեսական և սոցիալական զրկանքների ողջ պատասխանատվությունը բարդվում էր իշխանության վրա: Երկրի էներգետիկ ճգնաժամը հաջողվեց հաղթահարել Մեծամորի ատոմակայանի վեճեր հարուցած վերագործարկումից հետո միայն /այն կանգնեցվել էր 1988 թվականին/, քանզի վերջինս գտնվում է Երևանին մերձակա սեյսմիկ վտանգ ներկայացնող տարածքում: Սփյուռքի ֆինանսական օգնությունն ու քաղաքական ազդեցությունը որոշ չափով մեղմեցին իրավիճակը, սակայն հայերի մեծամասնությունը, որը լուրջ ցնցում ապրեց այդ շրջանում, շարունակում է կրած զրկանքների համար մեղադրել առաջին նախագահին:

Կորցնելով ժողովրդի աջակցությունը՝ Տեր-Պետրոսյանն ու ՀՀՇ-ն սկսեցին հետապնդել ընդդիմությանն ու լրատվամիջոցներին: Հայ հեղափոխական դաշնակցության գործունեությունը երկրում արգելվեց 1994 թ. դեկտեմբերին, իսկ ղեկավարները բանտարկվեցին: 1996 թվականի նախագահական ընտրություններում կատարված զանգվածային ընտրախախտումները Տեր-Պետրոսյանին զրկեցին լեգիտիմությունից և դարձրեցին երկրի ուժային կառույցների պատանդը, որոնց շնորհիվ էլ նա պահպանեց իշխանությունը:

Բայց և այնպես, ի տարբերություն հարևան Ադրբեջանի ու Վրաստանի, Հայաստանը կարողացավ անկախության անցումնային շրջանում զերծ մնալ քաղաքացիական պատերազմից: Քաղաքական բախումները, որոնց մի մասը բավականին սուր էին, տեղ գտան միայն քաղաքական վերնախավի շրջագծում: Նախագահ Տեր-Պետրոսյանին հարկադրեցին հրաժարական տալ 1998 թվականի փետրվարին, որի համար հիմք հանդիսացավ Ղարաբաղյան հարցում զիջումների գնալու վերաբերյալ նրա հայտնած պատրաստակամությունը, ինչպես նաև Հայաստանում ավտորիտար ղեկավարման հետզհետե սաստկացող միտումը: Ռոբերտ Քոչարյանը՝ նախկինում Ղարաբաղի ղեկավարը, 1998 թվականի մարտին ընտրվեց Հայաստանի երկրորդ նախագահ, թեպետ առկա էին պնդումներ, որ կատարվել են բազմաթիվ ընտրակեղծիքներ: 1999 թվականի հոկտեմբերին զինված մարդկանց մի խումբ Ազգային Ժողովի շենքում գնդակահարեց երկրի վարչապետին և վեց քաղաքական այլ գործիչների: 2000 թվականի մարտին մահափորձ կատարվեց Լեռնային Ղարաբաղի չճանաչված հանրապետության «նախագահ» Արկադի Ղուկասյանի վրա, և տեղի զինվորական դատարանը 2001 թվականի փետրվարին սպանության համար մեղավոր ճանաչեց Ղարաբաղի այդ ժամանակի պաշտպանության նախարարին, որի կարծիքով սակայն, ներկայացված մեղադրանքը քաղաքական շարժառիթներ ունի:

Հայաստանի ազգային յուրահատկություններն ու փոքրամասնությունների փաստացի բացակայությունը նպաստեցին ազգայնականության ներքին ներդաշնակմանը, նպատակաուղղելով ժողովրդի էներգիան ստեղծարար գործունեության, այլ ոչ ներքին թշնամիների հետ պատերազմի: Հայաստանում իշխանության և ժողովրդի միջև տարանջատվածությունն այնքան խորը չէ, որքան Ադրբեջանում և Վրաստանում, որտեղ դեռևս իշխում են կուսակցական նախկին անվանակարգության ցուցակի /նոմենկլատուրա/ ներկայացուցիչները[9]: Եվ թեև Հայաստանի քաղաքական վերնախավի անդամները դեռևս սկսնակներ են քաղաքականության բնագավառում, սակայն նրանք որոշակի պատասխանատվություն են ստանձնել իրենց երկրի հանդեպ, իսկ տնտեսական հզորությունները բաժանված են մի շարք մարդկանց միջև: Քաղաքականությունն, անկասկած, հաճախ կոպիտ եղանակներով է իրականացվում և հարկադրվում, սակայն զարգացումը կայուն է, իսկ մարդկանց անվտանգության ապահովումը այլևս հիմնահարց չէ:

Հանրապետության գոյության համար կարևոր դեր են խաղում միջազգային լավ հարաբերություններն ու սփյուռքի գոյությունը: Հայ քաղաքական գործիչներին հաջողվել է ամուր հարաբերություններ հաստատել և՛ Ռուսաստանի և՛ ԱՄՆ-ի հետ: Հայ Դատի հարցում հերթական հաջողությունն է գրանցվել 2001 թվականին, երբ Ֆրանսիայի Ազգային Ժողովը ճանաչեց հայոց ցեղասպանությունը:

### Ադրբեջան

Անկախության առաջին տարիներն Ադրբեջանում ընթացան քաղաքական բուռն վայրիվերումներով, իսկ Ղարաբաղյան ճակատում ծայր առած պատերազմական գործողությունները ծանր հարված հասցրեցին պետությանը: Ադրբեջանի նախկինում կոմունիստ առաջին նախագահը ստիպված եղավ հրաժարական տալ 1992 թվականի փետրվարին Խոջալուում տեղ գտած ադրբեջանցի խաղաղ բնակչության ջարդերի հետևանքով: Ընդդիմադիր Ադրբեջանական ժողովրդական ճակատը /ԱԺՃ/ եկավ իշխանության, բայց անկարող եղավ հաստատելու տարրական օրինականություն և կարգուկանոն: ԱԺՃ-ի հակառուսական և թուրքամետ կողմնորոշվածությունն անբարենպաստ մթնոլորտ ստեղծեց տեղական փոքրամասնությունների համար, քանզի տեղի փոքրամասնութփյուններից և ոչ մեկը թուրքական ակունքներ չուներ և ավելի շատ հակված էր դեպի Ռուսաստանը: Ոչ բնիկ փոքրամասնությունները, ինչպես օրինակ՝ ռուսները, հրեաները և հայերը, արտագաղթեցին երկրից, մասնավորապես՝ դեպի Ռուսաստան: Իսկ Ղարաբաղյան պատերազմը արտագաղթի նոր պատճառ դարձավ:

1993 թվականին իրականացված իշխանության բռնազավթումը, որ կազմակերպված էր տեղի ռուսական զինվորականության գաղտնի աջակցությամբ և գնդապետ Հուսեյնովի գլխավորությամբ, որը բնիկ գյանջացի էր, կրկին իշխանության բերեց Հեյդար Ալիևին՝ Ադրբեջանի կոմունիստական կուսակցության նախկին քարտուղարին: Ալիևը համակարգից զրկվել էր վերակառուցման /պերեստրոյկա/ տարիներին, սակայն կարողացել էր վերականգնել քաղաքական հեղինակությունը հայրենի Նախիջևանում: Քաղաքական գործիչների ծննդավայրը Ադրբեջանի քաղաքական մշակույթում կարևոր գործոն է և մեծ դեր է խաղում քաղաքական և տնտեսական ցանցերի կազմավորման գործընթացներում:

Ալիևի իշխանությունը երկրին բերեց կայունություն, համեստ բարգավաճում և հանդուրժողական կեցվածք փոքրամասնությունների հանդեպ: Քաղաքական և տնտեսական ուժը սակայն, կենտրոնացված է Ալիևի և նրա ընտանիքի անդամների ձեռքում: Ալիևը /ծնված 1923 թ./, որի առողջությունից կախված է Ադրբեջանի ներքին կայունությունը, ներկայումս մտահոգ է այն հարցով, թե ինչպիսի՞ զարգացումներ են ակնկալվում իր հեռանալուց հետո: Նրա որդին՝ Իլհամը, ներկայումս հասարակությանը ներկայացվում է որպես Ալիևի ժառանգորդ: Սակայն, տեղական դիտորդների կարծիքով դա խուսավարում է, որը նպատակ ունի շեղելու ուշադրությունը իշխանության իրական ժառանգորդից:

Ալիևի վարչակազմի ժողովրդավարական հավաստիքներն իրականում շատ թույլ են: Ցարդ կայացած խորհրդարանական և նախագահական ընտրությունների արդյունքները կեղծվել են: Եվ, թեպետ պաշտոնապես գրաքննությունը վերացվել է 1998 թվականին, երկրում ազատ լրատվամիջոցներ այդպես էլ չկայացան, իսկ ինքնագրաքննությունը մեծ ծավալների է հասնում: Սովորական են ընդդիմության ակտիվիստների, լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների նկատմամբ բռնությունների գործադրման դեպքերը «անհայտ անձանց» կողմից: Իսկ երկրի անվտանգության ուժերը հետևում ու ճնշում են գործադրում այն անձանց վրա, ովքեր չափն անցնող ազատություն են դրսևորում: Նախագահի խորհրդականներն ու նախարարները հաճախ կորցնում են իրենց պաշտոնները: Խաղի այս բոլոր կանոնները սահմանում է Ալիևն ինքը:

Բայց և այնպես, երկրի կյանքը հեռու է գորշ լինելուց: Շատերը գնահատում են օրինականությունն ու անվտանգությունը, որն ապահովում է Ալիևի իշխանությունը: Թեպետ նրան չի հաջողվել արմատախիլ անել կոռուպցիան, սակայն, այն ինչ-որ տեղ մեղմում է երկրի քաղաքական ավտորիտար համակարգի ազդեցությունը: Իսկ արտերկրից եկող ներդրումներն էներգետիկայի բնագավառում, առևտուրը տարածաշրջանում, կապուղիների լայն հնարավորություններն ու դրսից եկող ֆինանսական հոսքերը նպաստում են տնտեսական իրադրության բարելավմանը:

Ադրբեջանական ընդդիմության ներքին պառակտվածությունն ավելի է ուժեղացնում Ալիևի իշխանությունը: Ըստ մարդու իրավունքների տեղական կազմակերպությունների՝ ընդդիմադիր կուսակցությունների նվիրվածությունը ժողովրդավարական արժեքներին չի կարելի անկեղծ համարել: Ըստ նրանց Ալիևը գեթ թույլ է տալիս, որ մարդու իրավունքների պաշտպանները գործեն, ինչը սակայն կասկածի տակ է առնվում այն դեպքում, եթե իշխանության գլուխ անցնի ընդդիմությունը[10]: Վերոնշյալ կարծիքը հավաստում է նաև Ղարաբաղյան հարցի առնչությամբ ընդդիմության որդեգրած մարտական կեցվածքը: Այդ իսկ պատճառով Ադրբեջանի գիտակից քաղաքացիները, ինչպես նաև Արևմուտքի քաղաքական ակտիվ համայնքը, նախապատվություն տալով չարյաց փոքրագույնին, առավելապես հակված են սատարելու Ալիևի վարչակազմին:

**Վրաստան**

ԽՍՀՄ փլուզման պահին Վրաստանը Կովկասի ամենաբազմազգ երկիրն էր: Ըստ 1989 թվականի մարդահամարի տվյալների վրացիները կազմում էին երկրի բնակչության 69 տոկոսը: Վրաստանի մյուս ազգությունների առանձին գրանցումը, ինչպես օրինակ մեգրելներինը, արգելված էր: Հայերը՝ երկրի ամենամեծ փոքրամասնությունը, կազմում էին 9 տոկոս, իսկ ռուսները՝ 7 տոկոս, կենտրոնացած լինելով մեծամասամբ Թբիլիսիում: Վրացիների ներքին մասնատվածությունն ու բավականին մեծ թիվ կազմող փոքրամասնությունների առկայությունը հիմք է տալիս տեսակետ հայտնելու, որ Վրաստանում ազգային միասնության հաստատումը բավականին խրթին գործընթաց կպահանջի:

Վրաստանի ուղին դեպի անկախություն ուղեկցվեց ներքին հակամարտություններով, քաղաքացիական պատերազմով և քաղաքական սպանություններով: 1990-91 թվականների ազգային զարթոնքը իշխանության բերեց Զվիադ Գամսախուրդիային իր ծայրահեղական «Կլոր սեղան-ազատ Վրաստան» դաշինքի հետ միասին, որոնք իրենց հետ շեշտված ազգայնական մտածողություն բերեցին: Փոքրամասնությունները հայտարարվեցին «հյուրեր Վրաստանի տարածքում», որին հաջորդեցին էթնիկ ընդհարումները: Գամսախուրդիայի պաշտոնավարման շրջանում հետզհետե զարգացող ավտորիտար միտումները հակասություններ ստեղծեցին նրա և նախկին աջակիցների միջև, որն էլ հանգեցրեց քաղաքացիական պատերազմի /1992-93 թ.թ./, որի հետևանքով պետությունը մասնատվեց: Վերոնշյալ դեպքերը համընկան Հարավային Օսիայում /1991թ./ և Աբխազիայում /1992թ./ փոքրամասնությունների հետ ծագած հակամարտություններին: Հաջողելով մայրաքաղաքից դուրս քշել Գամսախուրդիային՝ ազդեցիկ զինվորական հրամանատարներ Կիտովանին ու Իոսելիանին հրավիրեցին Էդուարդ Շևարդնաձեին, որը նախկինում Վրաստանի կոմկուսի ղեկավարն էր, ապա ԽՍՀՄ արտգործնախարարը, ստանձնելու երկրի կառավարումը:

Սկզբնական շրջանում Շևարդնաձեն թույլ դիրքեր ուներ զվիադականների /Զվիադ Գամսախուրդիայի աջակիցների/ և իր տաքարյուն դաշնակիցների միջև ըն-

թացող քաղաքացիական պատերազմի պատճառով: Սակայն, 1995 թվականին Ռուսաստանի ռազմական օգնության շնորհիվ զվիադականները պարտություն կրեցին: Շևարդնաձեի նախաձեռնությամբ 1995 թվականին Վրաստանն անդամակցեց Անկախ Պետությունների Համագործակցությանը /ԱՊՀ/, որը գրեթե խորհրդանշական նշանակություն ունեցող և Ռուսաստանի գերիշխող դերն ամրագրող կազմակերպություն է և իր կազմում ընդգրկել է նախկին ԽՍՀՄ հանրապետություններին՝ բացառությամբ Բալթյան երկրների: Այնուհետև, Շևարդնաձեն մաքրեց կառավարությունը զինվորական հրամանատարներից ու իր հնարավոր հակառակորդներից:

Օգտագործելով իր ԽՍՀՄ նախկին արտգործնախարարի վայելած հեղինակությունը, Շևարդնաձեն կարողացավ մեծ աջակցություն ստանալ, այդ թվում՝ ֆինանսական, ինչպես Արևմուտքից, այնպես էլ ԱՄՆ-ից: Այսպես, 2000 թվականին Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գրասենյակը /USAID/ Վրաստանին միջին հաշվով մեկ շնչի համար հատկացրել է 200 ԱՄՆ դոլար: Եվրո-Ատլանտյան դաշնակիցների հանդեպ հակվածությունն ու հակառուսական դիրքորոշումը Վրաստանի համար շատ օգտակար գործոն դարձան դրսից ֆինանսական աջակցություն ստանալու հարցում՝ այդ եղանակով ծածկելով թույլ տնտեսական աճը, մեծ ծավալների հասնող կաշառակերությունը և 1999 թվականի խորհրդարանական ու 2000 թվականի նախագահական խոշոր կեղծիքներ արձանագրած ընտրությունները[11]:

Շևարդնաձեի վարչակարգը իրականում գրավեց պետությունը, այլ ոչ թե վերափոխեց այն: Եվ թեպետ արտաքուստ ժողովրդավարությունը պահպանվում է, տնտեսական և քաղաքական ուժային լծակները գտնվում են հիմնականում նախագահի աջակիցների ու հարազատների ձեռքում: Ընտանեկան հավատարմության գաղափարի վրա խարսխված խարդավանքներով գործող հովանավորչական ցանցը, որն արմատացած էր դեռևս խորհրդային շրջանում, լուրջ խոչընդոտներ է ստեղծում՝ ծնելով անարդյունավետ վարչարարություն և կաշառակերություն[12]:

Այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են ազգային ինքնությունն ու անկախությունը, մնում են չլուծված, այդպիսով խնդիրներ ստեղծելով պետության և ազգի համախմբման համար: Փոքրամասնությունների վրացական ազգի օրինական մաս կազմելու իրավունքի վերաբերյալ ընթացող վեճերը դեռևս շարունակվում են: Կասկած են հարուցում նաև Ռուսաստանից ներկայիս անկախ վիճակի հարատևությունը և որդեգրված նոր ուղղվածությամբ պետության կայացման հնարավորությունը:

Մինչ վերջերս երկրի բնակչությունը բավական կրավորական էր, թեև ապրում էր ծանր պայմաններում, այդ թվում՝ իննը ձմեռ առանց կանոնավոր ջեռուցման ու լուսավորության: 1990-ական թվականների սկզբին ծայր առած ներքին հակամարտությունները բավականին հզոր արգելակի նշանակություն ունեցան սոցիալական դժգոհությունների արտահայտման հարցում: Այդ կապանքների ուժը որոշ չափով նվազեց 2001 թվականի աշնանը: Կառավարության ճգնաժամը, որը ծագեց անվտանգության ուժերի կողմից անկախ հեռուստակայանի վրա գործած հարձակման և Աբխազիայում սաստկացող բռնությունների հետևանքով, լուրջ փոփոխությունների հանգեցրեցին: Շևարդնաձեն պաշտոնազուրկ արեց ներքին գործերի նախարարին և երկրի գլխավոր դատախազին /ցուցադրելով կոռուպցիայի դեմ պայքարելու իր պատրաստակամությունը/, ինչպես նաև կարողացավ հասնել այն բանին, որպեսզի խորհրդարանի նախագահ Զուրաբ Ժվանիան և նրա գլխավորած Վրաստանի քաղաքացիների միություն կուսակցության անդամները հրաժարական տան՝ լքելով խորհրդարանը /այդ կերպ նաև թուլացնելով հավակնություններ ունեցող իր դաշնակիցներին[13]: Եվ մինչ Վրաստանի քաղաքական համայնքն անկարող է լուծելու քաղաքական իրական հիմնահարցերը[14]՝ երկրի նախագահը կրկին իր հարատևումը պահպանելու հիանալի ունակություններ ցուցաբերեց:

Վրաստանում Շևարդնաձեին փոխարինելու հարցը մտահոգում է բոլորին: Ոմանք վախենում են, որ նրա պաշտոնաթողությունից հետո կստեղծվի վակուում, որը կգան լրացնելու ծայրահեղական գործիչները, իսկ մյուսները հույս ունեն, որ, ընդհակառակն, բարեփոխումների գործընթաց կսկսվի, և որ Շևարդնաձեի խաղից դուրս գալը կնպաստի Աբխազիայի հակամարտության շուտափույթ լուծմանը:

## Տարածաշրջանային իրադրությունը

Երեք երկրների համար էլ վճռորոշ նշանակություն ունեն հարաբերությունները Ռուսաստանի՝ նախկին գաղութատիրոջ և տարածաշրջանի ամենահզոր հարևանի հետ: Ռուսաստանը կովկասցի արտագնա աշխատողների համար աշխատանքային մեծ շուկա, ինչպես նաև կովկասյան ապրանքների սպառման կետ է: Ռուսաստանը նաև տարածաշրջանի էներգամատակարարն ու ներդրումային ուժն է, ինչպես նաև մշակութային ու սոցիալական ժառանգության կրողը շատ և շատ մարդկանց համար, ովքեր ցարդ մեծամասամբ տեղեկատվություն են ստանում ռուսական հեռուստաընկերություններից: Ռուսաստանը նաև ռազմական ուժ է, որը ցանկացած պահին պատրաստ է պաշտպանելու իր շահերը տարածաշրջանում:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանը չորս ռազմակայան ուներ Վրաստանում Բաթումիում /Աջարիա/, Ախալքալաքում /Ջավախք/, Գուդաուտաում /Աբխազիա/ և Վազիանիում /Թբիլիսիի մոտակայքում/: Վրաստանը ցանկանում է, որպեսզի ռուսական զորքերը դուրս բերվեն իր տարածքից՝ դիտարկելով վերջիններիս ներկայությունն իր տարածքում որպես խոչընդոտ երկրի ինքնիշխանությանը: Համաձայն այն պարտավորությունների, որոնք ռուսական կառավարությունը ստանձնել էր Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության /ԵԱՀԿ/ 1999 թվականի Ստամբուլյան գագաթնաժողովում, 2001 թվականի հուլիսին Ռուսաստանը փակեց իր ռազմակայանը Վազիանիում և այնտե-

ղից դուրս բերեց իր զորքերը, իսկ կայանի սարքավորումների մեծ մասը տեղափոխվեց Գյումրիի մոտ /Հայաստան/ տեղակայված ռուսական ռազմակայան: Գուդաութայի ռազմակայանը փակվեց 2001 թվականի նոյեմբերին: Մյուս երկու ռուսական ռազմակայանները գտնվում են Վրաստանի ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածքներում, որտեղ բնակչությունը ողջունում է ռուսական ներկայությունը ինչպես տնտեսական նկատառումներով, այնպես նաև դիտարկելով այն որպես վրացական ազգայնականության դրսևորումների չվերսկսման երաշխիք: Վրացիների մեծ մասը համոզված է, որ փոքրամասնությունները ղեկավարվում են ռուսների կողմից և ենթարկվում նրանց: Ռուսաստանի դերը Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտություններում և զվիադականներին ճնշելու հարցում Շևարդնաձեին ցուցաբերած աջակցությունը մեծապես նպաստել են Վրաստանում այն կարծիքի ձևավորմանը, թե Վրաստանը դեռևս գտնվում է նախկին գաղութատիրական պետության իշխանության ներքո: Հակառակ կարծիք կա, որ Վրաստանի քաղաքական վերնախավի հրապուրանքը ռուսական նեոիմպերիալիզմով խոչընդոտում է երկրի ներքին խնդիրների վերաբերյալ առավել իրատեսական մոտեցումների ձևավորմանը:

Չեչնիայում Ռուսաստանի վարած երկրորդ պատերազմը /1999թ- սկսած/ և Վլադիմիր Պուտինի իշխանության գալը կարևոր հետևանքներ ունեցան Հարավային Կովկասի համար: Հիշյալ զարգացումները ազդանշանեցին, որ Ռուսաստանը մտադիր է Կովկասում համաձայնեցված քաղաքականություն իրականացնել: 2000 թ. դեկտեմբերին Ռուսաստանը կյանքի կոչեց Ռուսաստան մեկնող վրացի քաղաքացիների համար պարտադիր մուտքի արտոնագրի պայմանակարգը, որը ուժգնորեն հարվածեց վրացի արտագնա աշխատողներին: Հիշյալ հանգամանքից ելնելով՝ Ալիևն անմիջապես ձեռնամուխ եղավ Մոսկվայի հետ ադրբեջանցիների համար առանց մուտքի արտոնագրի Ռուսաստան մուտք գործելու վերաբերյալ պայմանագրի առնչությամբ բանակցային գործընթացի մեկնարկին: Կողմերը միմյանց հետ համաձայնության եկան այն պայմանով, որ Ալիևը կհամագործակցի Մոսկվայի հետ Հյուսիսային Կովկասից իսլամիստների ներհոսքի դեմ պայքարելու հարցում: Համաձայնություն կայացավ նաև առ այն, որ համագործակցություն հաստատվի ռուսական և ադրբեջանական հատուկ ծառայությունների միջև, ինչպես նաև առ այն, որ Ռուսաստանին արտոնվի օգտագործել Ադրբեջանում գտնվող Գաբալայի ռազմական ռադիոտեղորոշիչ /ռադարային/ կայանը: Ի պատասխան Ռուսաստանն Ալիևին իր աջակցությունը խոստացավ Ղարաբաղյան հակամարտության շուրջ վարվող բանակցություններում:

Այս մերձեցումն անհանգստացրեց Հայաստանին, որին մտահոգություն է պատճառում իր մեկուսացումը: Հայաստանը, որը Ռուսաստանին համարում է իր ռազմավարական դաշնակիցը, ողջունում է ռուսական ռազմական ներկայությունն իր տարածքում: Հայաստանը Ռուսաստանի հետ ունի օդային պաշտպանության միացյալ համակարգ և մեծապես շահում է Գյումրիում տեղակայված ռուսական ռազմակայանի առկայությունից:

ԽՍՀՄ փլուզումը Թուրքիային հնարավորություն ընձեռեց ամրապնդելու իր դիրքերը Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Այդուհանդերձ, տարածաշրջանն ունի տնտեսական բազում խնդիրներ, մինչդեռ Թուրքիայի տնօրինած ռեսուրսները չեն կարող մրցակցության մեջ մտնել Արևմուտքի ռեսուրսների հետ: Թուրքիայի կացությունն ի մասնավորի բարդ է նաև տարածաշրջանի երկրների հետ պատմական և էթնիկ կապերի առումով: Ղարաբաղի և հարակից տարածքների բռնակցումը Հայաստանին խոչընդոտում է երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, թեև գործարար կապերը բավական ակտիվ են[15] : Թուրքիան սատարում է Ադրբեջանին ղարաբաղյան հակամարտության հարցում առավելապես քաղաքական, քան ռազմական օգնության տրամադրման ճանապարհով: Իսկ կովկասյան սփյուռքի, մասնավորապես՝ աբխազական, լեզգինական և չեչենական համայնքների առկայությունը Թուրքիայում, գործոն է, որը նպաստում է կացության առավել բարդացմանը: Թեև թուրք-վրացական պաշտոնական հարաբերությունները բարենպաստ են, թուրքական մասնավոր ձեռնարկությունները գործարքներ են իրականացնում աբխազական ղեկավարության հետ, այդ ճանապարհով օգնելով վերջինիս հաղթահարելու մեկուսացումը, որը փորձում է պահպանել Թբիլիսին: Եվ, ի վերջո, ռուս-թուրքական զարգացող հարաբերություններն այնքան են կարևորվում, որ անիմաստ է համարվում դրանց վտանգումը Կովկասին առնչվող վեճի պատճառով:

Իրանն իր հերթին փորձեց օգտագործել Կովկասն ու Կենտրոնական Ասիան որպես միջազգային մեկուսացումը հաղթահարելու միջոց[16]: Բացի այդ, Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսների բաշխումը ևս առնչվում էր Իրանի շահերին, ինչպես օրինակ՝ 2001թ. Ադրբեջանի նավթահորերի հետ կապված վեճը: Իրանը զգուշավոր քաղաքականություն է վարում ղարաբաղյան հակամարտության շուրջ չեզոք դիրքորոշում պահպանելու հարցում՝ միաժամանակ լավ հարաբերություններ պահպանելով Հայաստանի հետ, որը մասամբ պայմանավորված էր Իրանում հայկական սփյուռքի գոյությամբ, ինչպես նաև Թուրքիայի հետ ունեցած հակասություններով: Իրանում ամենազգային խնդիրներից մեկը իրանցի ադրբեջանցիների առկայությունն է, որոնց թիվն իրականում գերազանցում է նրանց հայրենակիցների թվաքանակը բուն Ադրբեջանում: Իրանում ձևավորված է կարծիք, թե առկա է պետության հանդեպ իրանցի ադրբեջանցիների հնարավոր անհավատարմության վտանգ, իսկ Ադրբեջանը կասկածվում է այդ տարածքների հանդեպ պահանջատիրական դիրքորոշում ունենալու մեջ: Այդուհանդերձ, ցարդ այս լարվածությունները բացահայտ դրսևորումներ չեն գտել:

# Քարտեզի վերագծում. Վերապրելով մեկուսի

Սկզբնական շրջանում անջատողական Կովկասում առկա հակամարտությունները հանգեցրին քաոսի և տառապանքներ պատճառեցին մարդկանց: Սակայն, անջատված հանրապետություններ Աբխազիային, Հարավային Օսիային և Ղարաբաղին հաջողվել է  շուրջ մեկ տասնամյակ տևած փաստական անկախության ժամանակաշրջանում իրենց շուրջը քաղաքական միջավայր ստեղծել, ինչպես նաև անհրաժեշտ տնտեսական միջոցներ հայթայթել: Հիշյալ առանձնացած պետությունների բնակչությունն ավելի վատթար պայմաններում չի ապրում, քան այն պետությունների հասարակությունը, որոնցից իրենք անջատվել են: Վերոնշյալ հանրապետություններում բարձր աստիճանի է հասել ներքին համախմբվածությունը, որի համար զորեղ ազդակ է շրջափակման մեջ գտնվելու հանգամանքը:

Աբխազիայի, Հարավային Օսիայի և Ղարաբաղի հակամարտությունների լուծման հեռանկարները խիստ վիճահարույց են: Այդ հակամարտությունների ներազդեցությունը երկրների բնակչության առօրյա կյանքի վրա առանձնապես մեծ չէ: Եվ թեպետ Ադրբեջանի ու Վրաստանի ներքին գաղթականների /ներրում տեղահանված մարդիկ-ՆՏՄ/ մեծ մասը շարունակում է ապրել թշվառության մեջ, նույն կացության մեջ են նաև տեղի բնակչության շատ ներկայացուցիչներ: Տնտեսության մեջ առկա նոր զարգացումները ստվերային տնտեսություն մեջ գործարքներ կատարելու հնարավորություններ են ընձեռնում: Իսկ պատերազմների ամենավատթար հետևանքները արդեն իսկ հաղթահարվել են:

Սակայն, զգացմունքային ու գաղափարական ոլորտին պատկանող դրսևորումները դեռևս զգալի են: Իշխող է այն տեսակետը, թե չլուծված հակամարտությունները խոչընդոտում են կենսունակ պետականության կառուցմանն ու արդյունավետ տնտեսության կայացմանը: Երկրների ղեկավարության համար քաղաքականապես ձեռնտու է իրենց անհաջողություններն ու ժողովրդավարության սահմանափակումները վերագրել պատերազմական իրադրությանը: Իսկ այն մարդկանց շրջանում, ովքեր ձախողություն են կրել, իշխանությունների կողմից որդեգրած այս քաղաքականությունը նպաստում է ցածր  ինքնագնահատականի ձևավորմանը՝ առնվազն ազգային ինքնության տեսանկյունից:

## Լեռնային Ղարաբաղ

Հակամարտությունը Լեռնային Ղարաբաղում, որը հիմնականում էթնիկ հայերով բնակեցված շրջան է Ադրբեջանի տարածքում, սկիզբ է առել 1988 թվականին: Խորհրդային իշխանության հսկողության թուլացմանը զուգընթաց սկսեցին թափ առնել Ղարաբաղի հայերի դժգոհությունները: Ներկայացվող գանգատների թվին էին պատկանում հայերի մշակութային իրավունքների նկատմամբ Ադրբեջանի  վարած անհանդուրժողական քաղաքականությունը, ինչպես նաև էթնիկ ադրբեջանցիների վերաբնակեցումը Ղարաբաղում /1921 թ. հայերը Ղարաբաղի 94 տոկոսն էին կազմում, մինչդեռ 1979 թ. կազմում էին ընդամենը 76 տոկոս/: Ղարաբաղի հայ բնակչությունը բողոքում էր նաև, որ Ադրբեջանը դիտավորությամբ թերի է ֆինանսավորում շրջանը: Անկախ այս փաստարկների հիմնավորվածությունից՝ վերոնշյալ հիմնահարցերը մտահոգություն էին պատճառում տեղի հայերին: Իսկ վերոնշյալ հակադրության հիմքը շրջանի՝ Ադրբեջանից Հայաստանի ենթակայության տակ անցնելու ցանկությունն էր[17]:

1988 թ. փետրվարին՝  լարվածության սրման շրջանում, ադրբեջանական Սումգայիթ քաղաքում տեղի ունեցան տեղի հայ բնակչության սպանություններ, որոնց դրդապատճառը էթնիկ տարբերությունն էր: Մոսկվան անկարող գտնվեց այդ զարգացումներին հակազդելու հարցում: Ազգամիջյան հակասությունների հետագա սրումը 1988-89 թ.թ. հանգեցրեց 185 000 ադրբեջանցիների և 11 000 մուսուլման քրդերի արտաքսմանը Հայաստանից: Նույնօրինակ իրադարձությունների հետագա ընթացքը 1990 թ. հանգեցրեց 300 000 հայերի արտագաղթին Ադրբեջանից: Սույն զարգացումները հանգեցրեցին պատերազմական գործողությունների Ղարաբաղում, որի հետևանքով 1991-92 թթ. 47 000 ադրբեջանցիներ փախուստի դիմեցին Ղարաբաղի տարածքից: 1991թ. Ղարաբաղը հռչակեց է իր անկախությունը, սակայն չմիացավ Հայաստանին[18]:

Խորհրդային իշխանության տարիներին Մոսկվան մշտապես սատարում էր ադրբեջանական ղեկավարությանը՝  ընդդիմանալով Ղարաբաղի հայերի անջատվողական միտումներին: 1990-ական թվականների առաջին տարիներին պատերազմող երկու կողմերն էլ  փոփոխական հաջողություններ ունեցան, սակայն 1993 թ. հայերին հաջողվեց ադրբեջանցիներին դուրս մղել Ղարաբաղից և, ավելին, գրավել ադրբեջանական ևս վեց շրջան: 1994 թ. մայիսին զինադադարի կնքումից հետո  գրավյալ տարածքներից մոտ 520 000 ադրբեջանցիներ լքեցին իրենց բնակավայրերը: Նույն թվականի հուլիսին Ռուսաստանի միջամտությամբ  Հայաստանն ու Ադրբեջանը պարտավորվեցին զինադադար պահպանել: Վերոնշյալ վեց շրջաններից իրենց տները լքած ադրբեջանցիների մեծ մասը ցանկանում է հետ վերադառնալ, մինչդեռ այլոք, ովքեր փախուստի էին

դիմել Ղարաբաղի տարածքից, հազիվ թե ցանկանան ապրել հայերի հետ կողք-կողքի: Բացի այդ, բազմաթիվ երիտասարդ ադրբեջանցի գաղթականներ /ՆՏՄ/ արտագնա աշխատանքի են մեկնել Ռուսաստան: Ադրբեջանի պաշտոնական քաղաքականության հիմքում դրված է բոլոր ներքին գաղթականների իրենց նախկին բնակավայրերը վերադարձնելու ձգտումը: Իսկ այն հայերը, ովքեր Ադրբեջանից են գաղթել, անհնարին են համարում իրենց հետդարձն այդ երկիր:

Ռուսաստանի նոր ղեկավարությունը /հետկոմունիստական/ աջակցեց հայկական կողմին՝ մատակարարելով վերջինիս մեկ միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ զենք[19]: Տրամադրված զինամթերքը կարևոր նշանակություն ունեցավ հայերի կողմից հաղթանակ տանելու համար:

1990-ական թ.թ. Հայաստանն ու Ղարաբաղը փաստորեն միացյալ պետություն էին կազմում: Ղարաբաղցի ռազմական և քաղաքական գործիչները, այդ թվում՝ այժմյան նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Հայաստանում կարևոր պաշտոններ էին զբաղեցնում: Ղարաբաղյան պատերազմը հզորացրեց հայերի ազգային ինքնագիտակցությունը: Հայաստանի ռազմական գերազանցությունը /համեմատած Ադրբեջանի հետ/ նվազեցնում է երկրի անվտանգության առնչվող տագնապը: Իսկ հայկական սփյուռքը ֆինանսավորում է Ղարաբաղի վերակառուցման ծրագիրը: Իր կողմից, Ադրբեջանը կտրել է Հայաստան տանող ցամաքային, երկաթուղային ու էներգետիկ ուղիները, որին զորակցում է նաև Թուրքիան՝ նույնպես փակելով Հայաստանի հետ իր սահմանները: Ի պատասխան շրջափակման՝ Հայաստանն իր հերթին փակել է իր սահմանն Ադրբեջանի անկլավը հանդիսացող Նախիջևանի հետ:

## Քի Վեսթյան բանակցություններն ու հետագա զարգացումները

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման նպատակով 1992 թ. ստեղծվեց ԵԱՀԿ Մինսկի խումբը: Ռուսաստանը Մինսկի խմբի մշտական համանախագահող երկիր դարձավ 1994թ- դեկտեմբերին: 1997 թ. նախագահներ Ալիևն ու Տեր-Պետրոսյանը միջազգային բավական լուրջ ճնշման տակ ընդունեցին ԵԱՀԿ-ի «փուլ առ փուլ» կարգավորման տարբերակը, որին սակայն ընդդիմացավ Հայաստանի քաղաքական վերնախավը: Ղարաբաղյան խմբի ճնշման ներքո, որը գլխավորում էր Քոչարյանը, Տեր-Պետրոսյանը ստիպված եղավ հրաժարական տալ:

Մինչ այժմ լուծում չեն ստացել հակամարտությանն առնչվող հետևյալ խնդիրները[20].

- Ղարաբաղի կարգավիճակը. Ղարաբաղն ու Հայաստանը դեմ են Ղարաբաղի որևէ տեսակի ենթակայությանը Ադրբեջանին, մինչդեռ վերջինս համաձայն է լավագույն դեպքում Ղարաբաղին տալ ինքնավարության բարձրագույն աստիճան.
- Ղարաբաղի բուն տարածքից բացի հայկական ուժերի դուրս բերումը ադրբեջանական մյուս տարածքներից.
- Ղարաբաղի անվտանգությունը. Հայկական կողմն անվտանգության հուսալի երաշխիքներ է պահանջում իր հսկողության տակ գտնվող ադրբեջանական տարածքներից դուրս գալու պարագայում.
- ադրբեջանական գաղթականների և ներքին գաղթականների վերադարձը իրենց բնակավայրեր, հատկապես՝ Շուշի:

2001թ. սկզբին ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ ընթացող բանակցությունները բավականին աշխուժացան և իրենց գագաթնակետին հասան ապրիլին տեղի ունեցած Քի Վեսթյան գագաթնաժողովում, որտեղ հանդիպեցին Ադրբեջանի ու Հայաստանի ղեկավարները: Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ՝ Ֆրանսիան, Ռուսաստանն ու ԱՄՆ-ն որոշակի համաձայնեցված ճնշում գործադրեցին այս հարցում:

Հակամարտող երկրների նախագահները գիտակցում են, որ հակամարտության ներկայումս պահպանվող ստատուս քվոն երկու երկրների համար էլ բացասական հետևանքներով է հղի: Նախագահ Ալիևը ծերանում է և հակված է խաղաղության պայմանագիր կնքելու դեռևս իր պաշտոնավարության ժամանակ: Նախագահ Քոչարյանի համար այն անցանկալի է այն պատճառով, որ հակամարտության հետևանք հանդիսացող շրջափակումը հարվածում է տնտեսական ներուժին և հանգեցնում Հայաստանից բնակչության արտագաղթին:

Հնարավոր համաձայնությունը կարող է ուրվագծվել հետևյալ կերպ[21]. Ադրբեջանին վերադարձվում են գրավված յոթ տարածքներից վեցը, ինչպես նաև տրամադրվում է Նախիջևանի հետ միջազգային հսկողության տակ գտնվող կապի միջանցք: Դրա փոխարեն Ղարաբաղին ու Լաչինի միջանցքին տրվում է ինքնավար կարգավիճակ, որը Ղարաբաղի դե ֆակտո անկախություն է ենթադրում[22]:

Սակայն, Քի Վեսթյան բանակցություններից հետո խաղաղ կարգավորման գործընթացը տեղընթաց է ապրում: Իսկ դրա հիմնական պատճառը երկու երկրների հանրության մեջ արմատացած մոտեցումներն են: Երկու նախագահներն էլ կարծես «առաջ են անցել իրենց ժողովուրդներից» փոխզիջումների անհրաժեշտության գիտակցման հարցում, սակայն ի զորու չեն իրենց երկրների բնակչությանը փոխզիջումների կարևորությունը հավաստող համոզիչ փաստարկներ ներկայացնել[23]:

Երկու նախագահներն էլ մտավախություն ունեն, որ փոխզիջման պայմանագրի ստորագրման դեպքում իրենց կտապալի ժողովրդական դիմադրությունը: Ադրբեջանում կարգավորման տարբերակների առնչությամբ լուրջ բանավեճեր չեն վարվում: Ադրբեջանի քաղաքական գործիչներն ի վիճակի չեն հրապարակավ կարծիք հայտնել, թե, թերևս, կարելի է զոհաբերել Ղարաբաղը հանուն այն բանի, որպեսզի տեղահանված ադրբեջանցիները հնարավորություն ստանան վերադառնալու իրենց հին բնակավայրերը:

Արդ, անհնարին է որոշել, թե Ադրբեջանում որ չափի են հասնում պատերազմը վերսկսելու տրամադրությունները: Երկրում կյանքը բարելավվել է, և մարդիկ առավելապես հետաքրքրված են տնտեսական նոր հնարավորություններով: Ադրբեջանը ռազմատենչ հակումներ չի ցուցադրում, թեև որոշ դիտորդներ կարծում են, որ ռազմական ոլորտը

կզարգանա։ Այդ տեսակետի հիմքում դրված է երկրում տիրող հիասթափության մթնոլորտը, որի պատճառն այն մտավախությունն է, թե ներկայիս խաղաղության գործընթացը երկրին զարգացում չի բերի։ Ադրբեջանում իրենց պատերազմից հանգստացող չեչենների առկայությունն ու նրանց անկոտրում ոգին կարող են խթանել ռազմատենչ միտումները։

Ադրբեջանական բանակը թույլ է, և Ալիևը, հնարավոր է, չի ցանկանում ամրապնդել այն՝ վախենալով բռնի իշխանափոխությունից, ինչպես դա եղավ իր իշխանության գալու պարագայում։ Իսկ երկրում առկա է էթնիկ անջատողականության հետագա զարգացման վտանգ։Հնարավոր է, որ փոքրամասնություններից լեզգիներն ու թալիշները չսատարեն Ղարաբաղի համար մղվող պայքարին, քանզի նրանք իրենց դժգոհություններն ունեն Բաքվի իշխանությունների հանդեպ։ Թե ինչպիսին կլինի նրանց վերաբերմունքը նոր պատերազմի նկատմամբ, նույնպես պարզ չէ։

Սա նաև ներքին քաղաքականության խնդիր է։ Ալիևը խաղաղ կարգավորման կողմնակից է, ուստի ընդդիմությունը հակված է պատերազմ քարոզելու[24]։ Ալիևի հեռանալուց հետո ղարաբաղյան հիմնահարցը կարող է իշխանության հասնելու նպատակ հետապնդող շահարկումների հիմք դառնալ և իշխանատենչ հավակնորդներին դեպի խնդրի լուծման պատերազմական ճանապարհ մղել։

Հայաստանում պատերազմում հաղթող կողմ լինելու գիտակցությունը դեռևս այնքան զորեղ է, որ առայժմ ոչ ոք չի փորձում ճնշում գործադրել հայկական կողմի վրա՝ Ղարաբաղի հանդեպ իր նկրտումներից հրաժարվելու պահանջով։ Հայաստանն այնքան էլ չի տառապում շրջափակումից։ Ադրբեջանից փախուստի դիմած և Հայաստանում հաստատված գաղթականները հետ վերադառնալու ցանկություն չունեն։ Ղարաբաղցի հայերի համար, որոնք կարող են հույսը դնել Հայաստանի ու հայ սփյուռքի աջակցության վրա, զարգացման ավելի ցածր մակարդակում գտնվող Ադրբեջանը հրապուրիչ այլընտրանք չի ներկայացնում։

Եվ թեև Հայաստանում շատերն են բողոքում ղարաբաղյան հիմնահարցի լուծման առկախ լինելու հանգամանքից, այդուհանդերձ, Ղարաբաղը հանձնելով ինչ-ինչ տնտեսական շահեր ստանալու հեռանկարը հայկական հասարակության մեջ աջակցություն չի կարող գտնել։ Հայերը, որոնք պատմության ընթացքում շարունակ զոհի կացության մեջ են գտնվել, արդ, վերջապես հնարավորություն են ստացել տնօրինելու սեփական ճակատագրերը։

Ուստի, հակամարտության կարգավորման փակուղային իրավիճակը կարող է պահպանվել անորոշ ժամկետով։

## Աբխազիա

Աբխազիայի հակամարտությունը նույնպես սկիզբ է առնում դեռևս խորհրդային ժամանակաշրջանից։ Վրացաբխազական ազգամիջյան հարաբերությունները, որոնք Ստալինյան ժամանակաշրջանից հետո արդեն իսկ լարված էին, 1988-ից հետո էլ առավել սրվեցին՝ հանգեցնելով կենտրոնական ղեկավարության /Թբիլիսի/ և Սուխումի /Աբխազիայի մայրաքաղաք/ միջև հարաբերությունների վերջնական վատթարացմանը։ Մշակութային ու լեզվական իրավունքների մասին վեճերին հետևեցին իշխանության իրավասությունների առնչվող հակասությունները[25]։

1992 թվականի օգոստոսին Վրաստանի Պետական Խորհուրդը հրաման արձակեց, որպեսզի վրացական զորքերը, որոնք կազմված էին զինվորական հրամանատար Կիտովանիի հրամանատարության ներքո գտնվող ռազմականացված ջոկատներից, մտնեն Աբխազիա[26]։ Եվ, թեև Շևարդնաձեն սկզբում հերքում էր, որ հետագա պատերազմի սկզբնաղբյուր դարձած այդ քայլը ձեռնարկվել է իր գիտությամբ և թույլտվությամբ, ի վերջո ստիպված եղավ ընդունել, որ մասնակից է եղել որոշման ընդունմանը։ Աբխազները ուժեր էին հավաքագրում Հյուսիսային Կովկասում բնակվող ազգակից այլ ժողովուրդների շրջանակներում։ Նրանք օգտվում էին նաև ռուսական ռազմական օժանդակությունից, որի համար հիանալի հնարավորություն ընձեռեց Գուդաուտայում տեղակայված ռուսական ռազմակայանը։

Սկզբում Աբխազները կորցրեցին իրենց պատկանող գրեթե բոլոր տարածքները, սակայն 1993 թ. մարտին նրանց հաջողվեց հակահարված հասցնել։ Նույն թվականի սեպտեմբերին 200 000 վրացիներ ստիպված եղան լքել Աբխազիան[27]։ Իսկ 1999 թ. նոյեմբերին Աբխազիայի ղեկավարությունը հռչակեց երկրի ֆորմալ անկախությունը։

Ռուսական պետական ապարատի տարբեր ճյուղեր Աբխազիայի հակամարտության ընթացքում սատարում էին հակամարտության տարբեր կողմերին։ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունն ու զինվորական ղեկավարությունը ստանձնել էին միջնորդի դեր, մինչդեռ որոշ ռազմական միավորումներ հետամուտ էին սեփական քաղաքական և տնտեսական շահերին։ Աբխազիան հետ ստանալու համար Վրաստանը փորձում էր ճնշում գործադրել աբխազական կառավարության վրա միջազգային ատյանների միջոցով։ Վրաստանը հասավ այն բանին, որ Ռուսաստանը Աբխազիայի նկատմամբ տնտեսական սահմանափակումներ կիրառելու վերաբերյալ վճիռ կայացրեց, իսկ ռուսական ազդեցությունը հավասարակշռելու նպատակով խաղաղության գործընթացի մեջ ներգրավվեցին Արևմուտքի ուժերը։ Վրացական ղեկավարությունը ծածուկ օժանդակություն էր ցուցաբերում նաև զինված խմբավորումներին, որոնք գործում էին աբխազա-վրացական սահմանում՝ նպատակ ունենալով խարխլել Աբխազիայի անվտանգությունը։ Աբխազիայից արտագաղթած վրացիները ներկայացնում են բացահայտ լոբբիստական խումբ, որը լուրջ ազդեցություն ունի վրացական խորհրդարանում, ինչպես նաև կապեր՝ Աբխազիայում գործող զինված խմբավորումների հետ։

Աբխազիայի ապագա քաղաքական կարգավիճակի և վրաց գաղթականների վերադարձի վերաբերյալ երկկողմանի բանակցություններում գրեթե առաջընթաց չի գրանցվել։ Թբիլիսին ցանկանում է, որպեսզի Աբխազիան ընդունի իր ենթակայությունը Վրաստանին ՝ խոստանալով վերջինիս որոշակի ինքնավարություն։ Իսկ աբխազական ղեկավարությունը պահանջում է ներքին լիակատար ինք-

նիշխանություն Վրաստանի հետ համադաշնության կազմում, կամ լիակատար անկախություն: 2001թ. աշնանը Աբխազիան հայտարարեց, որ ցանկանում է ստանալ «անդամ պետության կարգավիճակ» Ռուսաստանի Դաշնության կազմում[28]:

Աբխազները չեն ցանկանում միացյալ պետություն ստեղծել Վրաստանի հետ՝ համոզված լինելով, որ այդպիսով կկորցնեն անվտանգությունն ու իրենց գերակայող քաղաքական դիրքը: Միացումը Վրաստանի հետ կնշանակի վրացիների վերադարձը Աբխազիա, որոնք, ըստ աբխազների, կարող են վրեժխնդիր լինել արտաքսման համար և, ի վերջո, քանակական գերազանցության հասնել Աբխազիայում: Այնժամ չի լինի այն գերագույն դատավորը, որը կպաշտպանի աբխազների իրավունքները: Վրացական կողմը այս խնդրի լուծմանն ուղղված տարբերակներ բնավ չի քննարկում: Աբխազական ղեկավարությունը պնդում է, որ այլևս երբեք թույլ չի տա, որպեսզի աբխազները փոքրամասնություն դառնան իրենց երկրում, բացահայտորեն շեշտելով, որ Վրաստանի կազմում գտնվելը բացառվում է[29]:

Պատերազմից հետո «նախագահ» Արձինբան ամրապնդել է իր դիրքերը: Էթնիկ աբխազները գլխավոր դիրքեր են զբաղեցնում և՛ քաղաքական և՛ տնտեսական բնագավառներում: Աբխազիայի փոքրամասնությունների կացությունը, որոնց թվին են պատկանում նաև վրացիները, հեռու է կատարյալ լինելուց: Իշխանությունը լիովին աբխազների ձեռքում է, թեև իրականում ամենամեծ ազգային խումբը հայերն են կազմում: Այդուամենայնիվ, բացառությամբ վրացիների, մյուս էթնիկ խմբերի միջև հարաբերությունները կայուն են, և Աբխազիան պահպանում է բազմազգ հասարակության իր բնույթը:

Անջատված այս երկրի տնտեսական կենսունակությունը վերականգնվել է շնորհիվ պտղաբեր հողերի, Ռուսաստանի և Թուրքիայի հետ առանձնահատուկ առևտրական հարաբերությունների և սևծովյան հանգստավայրերից ստացվող որոշակի եկամուտների: Եվ թեպետ տնտեսական կյանքը շատ ավելի դժգույն է, քան ակնկալվում էր, այն շատ չի տարբերվում Վրաստանի սահմանամերձ շրջաններում առկա պայմաններից: Իսկ Ռուսաստանի կողմից արտոնագրային պայմանակարգի կիրառումը վրաց քաղաքացիների նկատմամբ և ազատ մուտքի արտոնումը Աբխազիայի և Հարավային Օսեթիայի բնակիչներին խթանեցին վերջիններիս հետագա ընդգրկումը Ռուսաստանի տնտեսական և սոցիալական գործընթացներում:

Միացյալ Ազգերի Կազմակերպությունը /ՄԱԿ/ ստանձնեց Աբխազիայի հակամարտության կարգավորման պարտավորությունը և 1992 թ. ի վեր Ռուսաստանի պաշտոնական միջնորդների համագործակցությամբ, որի ընթացքը բավականին խոչընդոտված է, քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ: Այդ համագործակցության շրջանակներում 1994 թ. մայիսին ԱՊՀ երկրների հանձնարարականով որոշվեց Աբխազիա մտցնել ռուսական խաղարարար ուժեր /ԽՈՒ/: Ռուսական խաղարարար ուժերի դիտարկումը իրականացնում է ՄԱԿ-ի դիտորդական առաքելությունը /ՄԱԿԴԱՎ-Միացյալ ազգերի կազմակերպության դիտորդական առաքելություն Վրաստանում/: ԽՈՒ-ի և ՄԱԿԴԱՎ-ի մանդատները ենթադրում են բոլոր վրաց գաղթականների վերադարձը, ինչպես նաև Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանումն ըստ վերջինիս 1991թ. սահմանների:

Մոսկվան նախաձեռնել էր բարձրաստիճան վրաց և աբխազ պաշտոնյաների մի շարք հանդիպումներ, որոնք 1997թ. ի վերջո հանգեցրին զինադադարի մասին պայմանագրի կնքմանը: Այդուամենայնիվ, վրացիները ԽՈՒ-ին մեղադրում են վրաց գաղթականների վերադարձը չապահովելու, սահմանների թույլ վերահսկման և Գուդաուտայի ռազմակայանից դուրս գալու չկամության համար: Ռուսաստանը պնդում է, որ տեղացիների դիմադրությունը խոչընդոտում է ռազմակայանից զենքերի անվտանգ տեղափոխմանը[30]:

Աբխազական ղեկավարության քաղաքականությունը նպատակաուղղված է երկրի sataus quo-ի պահպանմանը: Վրացական կողմի կրած հիասթափության հետևանքով Վրաստանում ձևավորվել է հակադրական մոտեցում: 1990-ականների վերջերին վրաց զինված միավորումները Վրաստանի անվտանգության ուժերի ծածուկ օժանդակությամբ Աբխազիա մտան և հասան մինչև Սուխում: Ի պատասխան աբխազական կառավարությունը պատժիչ քայլեր ձեռնարկեց Աբխազիա վերադարձած վրաց բնակչության հանդեպ: 1998թ. մայիսին Գալիի շրջանում տեղի ունեցած ռազմական գործողությունների արդյունքում վրաց ռազմականացված ջոկատները և երեսունից - քառասուն հազար ազգությամբ վրացի տեղաբնակներ արտաքսվեցին Աբխազիայից[31]: Արդ, իրավիճակը շարունակում է խոցելի մնալ անվտանգության առումով: Տեղաբնակների առևանգումներն ու սպանությունները սովորական բնույթ են կրում, և շուրջ իննսուն ռուս խաղաղապահ զինվորներ են սպանվել դարանակալ հարձակումների կամ ականների պայթյունների հետևանքով: ՄԱԿԴԱՎ-ի անձնակազմը նույնպես հարձակման թիրախ է դարձել, որի հետևանքով 2001թ. հոկտեմբերին սպանվել է վեց զինվորական:

Լարվածությունն էլ ավելի սրվեց 2001թ-ի աշնանը, երբ չեչեն գրոհայինները նահանջեցին Պանկիսի կիրճ /տես էջ 19-20/ և միացան վրաց ռազմական ջոկատներին: Ապա, երբ ռուսները սպառնացին ստուգումներ անցկացնել Պանկիսի կիրճում /որը իբրև «պատերազմ ահաբեկչության դեմ»կարող էր արժանանալ Արևմուտքի հավանությանը/, Վրաստանի ներքին գործերի նախարարությունը կազմակերպեց այդ ջոկատների տեղափոխումը Կոդորի, որտեղից վերջիններս ներխուժեցին Աբխազիա: Աբխազները արագ հավաքագրեցին ուժերը և կարողացան փախուստի մատնել հարձակվողներին: Երկու կողմերը կրկին հայտնվեցին պատերազմի շեմին, սակայն, այնուհետև իրադրությունը որոշակիորեն հանդարտվեց: Այնուամենայնիվ, հետագա սահմանամերձ բախումների վտանգը բավարար իրատեսական հիմքեր ունի:

Վրացական խորհրդարանը քվեարկեց ԽՈՒ-ի մանդատի դադարեցման օգտին, պատճառաբանելով, որ ռուսական խաղաղապահները օժանդակում են ինչպես աբխազների կողմից տարածքների գրավմանը, այնպես էլ էթնիկ վրացիների տեղահանումներին: Շևարդնաձեն նաև սպառնացել է, որ Վրաստանը դուրս կգա ԱՊՀ-ի կազմից և կվերահաստատի Հյուսիս - Ատլանտյան Դաշնագրին

/ՆԱՏՕ/ անդամակցելու իր ցանկությունը: Ռուսաստանը համարում է, որ Վրաստանը կամ ի զորու չէ, կամ էլ չի ցանկանում պայքարել իր երկրի ներսում կազմակերպվող «ահաբեկչական» գործողությունների դեմ: Վրաստանի անկայունությունը հանդիսանում է անվտանգության այնպիսի սպառնալիք, որ Ռուսաստանն այն անտեսել չի կարող: Այստեղից էլ բխում է Ռուսաստանի՝ իր խաղաղարար ուժերը Աբխազիայից դուրս բերելու չկամությունը, ինչպես նաև Վրաստանի հետ իր սահմանների ամրապնդմանը միտված քայլերի ձեռնարկումը: Միաժամանակ, հարկ է նշել, որ Ռուսաստանը հետզհետե կորցնում է հետաքրքրությունը Վրաստանի ներպետական զարգացումների նկատմամբ:

Մոսկվան հավաստել է, որ չի հակառակի Վրաստանի ԱՊՀ-ի անդամակցության դադարեցմանը և ազատել է Գուդաուտայի ռազմակայանը[32]: Պուտինը հայտարարել է, որ քննության կառնի ռուս խաղաղարարներին հետ կանչելու հարցը, միաժամանակ կոչ անելով վրացիներին՝ ՄԱԿ-ի օգնությամբ զինադադարի խնդրի լուծմանը միտված քայլեր ձեռնարկել: Դեռևս անորոշ է, թե արդյո՞ք Մոսկվան կսահմանափակի վրաց արտագնա աշխատողների ներկայությունը Ռուսաստանում՝ սույն կերպ նոր ճնշում գործադրելով Վրաստանի վրա:

## Հարավային Օսիա

Հարավային Օսիայի հակամարտությունը սկսվեց նույն հողի վրա, ինչ աբխազականը, որը զուգակցվում էր երկկողմանի հողային պահանջատիրության, ինչպես նաև օսերի՝ «վրաց ազգին» ձուլվելու մտավախության հետ: Ըստ վրացիների Օսիային ավելի շահեկան պայմաններ էին ընձեռված, քան Վրաստանի մյուս շրջաններին, որը պայմանավորված էր խորհրդային շրջանում փոքրամասնությունների նկատմամբ իշխանությունների հատուկ ուշադրությամբ: 1989-91թթ. վրացիները սկսեցին ամրապնդել Թբիլիսիի իշխանության, ինչպես նաև վրացերեն լեզվի և վրացական մշակույթի գերակա դիրքերը Օսիայում:

1990թ. օգոստոսին Հարավային Օսիան հռչակեց իր ինքնիշխանությունը և պահանջեց Մոսկվայից, որպեսզի շրջանը ճանաչվի որպես Խորհրդային Միության առանձին սուբյեկտ: Թբիլիսին, այս քայլին ի պատասխան, զրկեց Հարավային Օսիային վարչական միավորի կարգավիճակից: Այդ քայլերին հաջորդեցին զինված ընդհարումները օսական և վրացական ոստիկանների միջև, որի հետևանքով վրացիներն արտաքսվեցին Ցխինվալիից՝ Հարավային Օսիայի մայրաքաղաքից: Այնուհետև, վրացիները շրջապատեցին և ռմբակոծեցին Ցխինվալին շրջակա բլուրներից[33]:

Մարտերը շարունակվեցին մինչև օսերը հյուսիսային կովկասցիների օգնությամբ ռազմական հաջողության հասան 1992 թվականին: Կայացավ բնակչության փոխանակություն՝ Վրաստանի մյուս շրջաններից օսերը տեղափոխվեցին հարավային կամ հյուսիսային Օսիա, իսկ հարավային Օսիայի ազգությամբ վրացի բնակիչների մեծ մասը լքեց այդ շրջանը:

1992թ. հունիսին զինադադար կնքվեց: Զինադադարի կնքումը դիտարկվում էր Միացյալ վերահսկիչ հանձնաժողովի /ՄՎՀ/ ղեկավարության ներքո գործող ռուսական, վրացական և օսեթական համատեղ խաղաղարար ուժերի կողմից: Այդ կառույցում Ռուսաստանի և հակամարտության մյուս կողմերի հետ մեկտեղ ներկայացված էր նաև Հյուսիսային Օսիան: Տեղի ունեցան բանակցություններ Ռուսաստանի հովանու ներքո և 1992-ին հիմնված ԵԱՀԿ-ի առաքելության աջակցությամբ: 1994 թ. երկարացվեց խաղաղարար գործողությունները դիտարկելու նպատակով ԵԱՀԿ-ին տրված մանդատի գործողության ժամկետը: 1996թ. հակամարտող կողմերը ստորագրեցին ուժի գործադրումից զերծ մնալու և աստիճանական ապառազմականացմանն աջակցելու մասին հուշագիրը: 1997թ. փետրվարի դրությամբ գրանցված մարտական գործողությունների նվազումը հնարավորություն տվեց կրճատելու խաղարար և դիտարկման գործողությունները:

Հարավային Օսիայում հայրենադարձության խնդիրը այնքան սուր բնույթ չունի, որքան Աբխազիայում, քանի որ կողմերը մինչ այդ բնակիչների փոխանակություն էին կատարել, և որոշ վրացիներ նույնիսկ հնարավորություն էին ունեցել վերադառնալու Հարավային Օսիա: Բացի այդ, աբխազների համեմատությամբ օսերի և վրացիների միջև էթնիկ թշնամանքն առավել նվազ է դրսևորված, և երկու ժողովուրդների ներկայացուցիչները փոխայցելություններ են կատարում ու համատեղ գործարարությամբ զբաղվում: Հարավային Օսիայի ղեկավարությանը հաջողվում է Ռուսաստանում ապրող էթնիկ օսերի և վրացիների հարաբերություններում հավասարակշռություն պահպանել: Կողմները համամիտ են, որ հակամարտության վերսկսումը նվազ հավանական է:

Այդուհանդերձ, քաղաքական կարգավիճակի և այլ կարևոր խնդիրների առումով առաջընթաց չի գրանցվել: Հարավային Օսիային շնորհված՝ Ռուսաստան ազատ մուտքի պայմանակարգը դրական ազդեցություն է գործել շրջանը Ռուսաստանի տնտեսական և սոցիալական ոլորտներին ինտեգրելու գործընթացի վրա[34]: 2001թ. կայացած նախագահական ընտրությունները Հարավային Օսիայի քաղաքական ապագան դրեցին նոր հարթության վրա: Հարավային Օսիայի նորընտիր «նախագահ» Էդուարդ Կոկոևը շեշտված օսեթամետ և ռուսամետ դիրքորոշում ունի:

# Հետագա մասնատման հավանականությունը

Բացի միէթնիկ Հայաստանից, Հարավային Կովկասում գոյություն ունի բավականին լայն էթնիկ և կրոնական բազմազանություն: Միևնույն ժամանակ, տեղի քաղաքական մշակույթին հատուկ է էթնիկ ազգայնականությունը, որն այնքան խորն է արմատացած, որ ինքնավար միավորների կենսունակությունը ավելի մեծ դաշնային կառույցների կազմում վստահություն չի ներշնչում: Իշխանության տարաբաժանման սկզբունքը տարածաշրջանում չափազանց թույլ ավանդույթներ ունի, և անիմաստ է այն դաշնային կառույցների հիմքում դնել, իսկ խորհրդային ժամանակաշրջանի կենսափորձը նպաստել է տարածաշրջանում ազգայնական նկրտումների ձևավորմանը: Մեծամասնությունների ներկայացուցիչները հիմնականում ունակ չեն հանդուրժողական վերաբերմունք դրսևորել փոքրամասնությունների նկատմամբ, իսկ վերջիններս չեն վստահում պետություններին իրենց բարեկեցության ապահովման հարցում:

Տարածաշրջանի կառավարությունները դասեր քաղեցին 1990-ական թվականների անջատողական հակամարտություններից: Նրանք ըմբռնեցին, որ եթե իրենք ի սկզբանե մերժողական կեցվածք որդեգրեին էթնիկ ինքնագիտակցության կարևորման հարցում ու փորձեին ճնշել ծագող անջատողական միտումներն արդեն իսկ ձևավորման փուլում, թերևս, հնարավոր լիներ կանխել անջատողականության վերաճումը համախմբող գործոնի: Այդ պատճառով, արդ, վերջիններս չափազանց զգուշավոր մոտեցում են որդեգրել որևէ աղբյուրից ներկայացվող էթնիկ պահանջների ճանաչման հարցում: Փոքրամասնությունները տարածաշրջանում դիտվում են որպես արտաքին ուժերի խաղարկումներին հեշտությամբ ենթարկվող տարրեր, քանզի նրանցից շատերը բնակվում են հարևան երկրների հետ իրենց ազգակիցներով բնակեցված սահմանամերձ գոտիներում: Այս հանգամանքը ևս թույլ չի տալիս ընդունելու փոքրամասնությունների դժգոհությունների իրավացիությունը: Այսպիսի մոտեցումը էապես տարբերվում է այն տեսանկյունից, որի ջատագովը ի թիվս այլոց հանդիսանում է Փոքրամասնությունների իրավունքների միջազգային խումբը /ՓԻԽ/: ՓԻԽ-ի մոտեցման հիմքում դրված է այն համոզումը, որ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն ու խրախուսումը կարող է չեզոքացնել լարվածություններն ու նվազեցնել դժգոհությունները՝ այդպիսով կանխելով հնարավոր հակամարտությունները:

## Նոր զարգացումներ

Հարավային Կովկասի անկախության ժամանակաշրջանի բնորոշիչ իրողությունների թվին են պատկանում երկու հզոր հոսանքներ՝ բնակչության թվի անկումն ու միաէթնիկության գոյացման միտումը: Մոտ 3,5 միլիոն աշխատավոր միգրանտներ լքեցին տարածաշրջանի երեք հանրապետությունները՝ մեծամասամբ ուղևորվելով դեպի Ռուսաստան: Շուրջ երկու միլիոն ադրբեջանցիներ, ավելի քան մեկ միլիոն հայեր և բավականին պատկառելի, ցարդ չճշտված թվաքանակով վրացիներ ներկայումս աշխատում են Ռուսաստանում: Որոշ ադրբեջանցի և վրացի աշխատողներ մեկնում են նաև Թուրքիա, սակայն շատերը փորձում են արտագաղթել արևմտաեվրոպական երկրներ:

Փոքրամասնություններն ավելի են հակված են արտագաղթին, քան մեծամասնության ներկայացուցիչները[35]: Կրթություն և մասնագիտություն ստանալու նրանց ընձեռված հնարավորությունները հետզհետե նվազում են, ինչը պայմանավորված է վերջիններիս տվյալ երկրների պետական լեզուների ոչ գերազանց իմացությամբ, ինչպես նաև ռուսերեն լեզվի դերի նվազմամբ, որը դեռևս պահպանում է Կովկասի ժողովուրդների ընդհանուր լեզվի նշանակությունը: Հասարակական վերաբերմունքի ճնշումն ու լրատվամիջոցների լուսաբանումները, հովանավորչական խմբերի և մեծամասնությունների առանձնացած լինելը և նորելուկ կրոնական միտումները միահյուսվելով ձևավորում են մի մթնոլորտ, որտեղ փոքրամասնությունները իրենց անվստահ են զգում և երկյուղով են վերաբերում իրենց երեխաների ապագայի սահմանափակ հնարավորություններին:

Նրանք ովքեր կարող են լքել տարածաշրջանը, այդպես էլ վարվում են: Ռուսները և մյուս սլավոնական ժողովուրդների ներկայացուցիչները, հրեաներն ու հույները արագորեն անհետանում են տարածաշրջանից: Հայաստանում ապրող ռուսների մեծ մասն արդեն լքել է երկիրը[36], որտեղ նրանք բնակչության 2.7 տոկոսն էին կազմում 1989 թվականին: Ռուսները հեռանում են նաև Վրաստանից, որտեղ 1989 թվականին կազմում էին բնակչության գրեթե 7 տոկոսը: Ըստ 1999թ. մարդահամարի, Ադրբեջանի ռուս բնակչության թիվը 1979 թվականի համեմատությամբ, որն ըստ պաշտոնական տվյալների հասնում էր 141 700-ի, կրճատվել է մեկ երրորդով: Ըստ արդի տվյալների այժմ ընդամենը 100 000 ռուսներ են ապրում Ադրբեջանում[37]: Այդ բնակչության մեծ մասը մեծահասակներ են, ռուս կանայք, որոնք ամուսնացած

են այլազգիների հետ, կամ այրիներ: Խորհրդային ժամանակաշրջանին բնորոշ՝ տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչների միջև ամուսնությունների թիվը նույնպես հետզհետե կրճատվում է:

Այս միտումն իր ազդեցությունը ունի նաև ավելի փոքրաթիվ բնիկ ժողովուրդների վրա, ինչպիսին են ավարները, լազերը, թաթերն ու ցախուռները: Այս խմբերի լեզվին և մշակույթին ցուցաբերվող պետական աջակցության աստիճանական նվազումը հետզհետե սաստկացող մտավախություն է առաջացնում, որ այդ խմբերը կարող են դադարել իրենց՝ որպես առանձին գոյություն ունեցող համայնքների, գոյությունը: Փոքրամասնությունների ներկայացուցիչների որոշ մասի գրանցումը որպես մեծամասնություն հանդիսացող ժողովրդի անդամներ, ազդում է այդ խմբերի պաշտոնական թվաքանակի և այլ խմբերի հետ համամասնության վրա, ինչը պետությունների կողմից դիտարկվում է որպես ազգակերտման կարևոր տարրերից մեկը:

Էթնիկ հակամարտությունները ևս խթանել են միաէթնիկ միտումների զարգացմանը: Ղարաբաղյան հակամարտության բռնկումից առաջ հայերը կազմում էին ադրբեջանի թվով երրորդ փոքրամնասնությունը /390 000 կամ 5,6 տոկոս 1989-ին/, որից 180 000-ը ապրում էր Բաքվում: Իսկ 1999 թվականին ըստ պաշտոնական տվյալների ընդամենը 645 հայեր էին ապրում Ադրբեջանում, այն դեպքում, երբ նրանց իրական թվաքանակը մոտ 3 000 է[38], քանզի նրանցից շատերն ապրում են խառնազգի ընտանիքներում կամ փոխել են հայկական ազգանունները: Իսկ Հայաստանում փաստորեն ադրբեջանցի չի մնացել:

Անկախություն ձեռք բերելով խորհրդային իշխանությունից և հնարավորություն ստանալով կառուցելու իրենց ազգային պետությունները՝ Կովկասի հասարակ բնակչության մեծ մասը փաստորեն զրկվել է սոցիալական և տնտեսական բարեկեցությունից: Մեծ անկում է ապրել առողջապահության, կրթության և սոցիալական ապահովության մակարդակը, նվազել է նաև սոցիալական ապահովության համակարգից օգտվելու հնարավորությունը: Երկրների մարզերում սոցիալական ապահովության մակարդակը շարունակում է անկում ապրել: Այդ պատճառով շրջանների աղքատ ընտանիքները սկսել են դպրոց ուղարկել միայն արու զավակներին:

Եվ, ի հակառակ այն իրողության, որ Կովկասի վերնախավերը առավել աշխարհաքաղաքացիական /կոսմոպոլիտ/ միտումներ են դրսևորում, հասարակ բնակչությունն էլ ավելի ներփակ է դարձել: Լրատվությունից և ավելի լայն տեղեկատվական ցանցերից օգտվելու հնարավորությունը հետզհետե առավել մեծ խնդիրներ է հարուցում ռուսերենի՝ որպես ընդհանուր լեզվի աստիճանական նահանջի հետևանքով: Ադրբեջանում այս միտումը թերևս առավել թույլ է արտահայտված, քանզի ռուսերենը շարունակում է երկրում ժողովրդականություն վայելել: Բացի այդ, ազդեցիկ գործոն է ադրբեջաներեն և թուրքերեն լեզուների նմանությունը, որը նպաստում է նաև Ադրբեջանի կապերի ամրապնդմանը Թուրքիայի հետ:

Քանի որ փոքրամասնությունները մեծամասամբ ապրում են հեռավոր շրջաններում, մեծապես տուժում են վատթար վիճակում գտնվող ճանապարհների ցանցից, ինչն իր հերթին նպաստում է նրանց մեջ մեկուսացված լինելու զգացողության ձևավորմանը: Այս հանգամանքը լուրջ խոչընդոտ է նաև առևտրի զարգացման համար և շատ դեպքերում հանգեցնում է տարբեր շրջանների միջև բնամթերային փոխանակության հարաբերությունների ձևավորմանը: Ֆինանսական հոսքերը փոքրամասնություններով բնակեցված շրջաններ մեծամասամբ ապահովում են արտասահմանում աշխատող ընտանիքի անդամները: Նշանակալիորեն փոխակերպվել է նաև փոքրամասնությունների համայնքներում կնոջ վերապահվող դերը: Նախ, այն պատճառով, որ ավանդաբար տղամարդկանց վերապահվող շատ աշխատատեղեր այլևս գոյություն չունեն, և կանայք ստանձնել են ընտանիքի համար ապրուստի միջոցներ վաստակելու հոգսը: Երկրորդ, զգալիորեն նվազել են ավանդաբար կանանց վերապահված երեխաների խնամքի, առողջապահության և կրթության ոլորտներում գործելու կարելիությունները: Երրորդ, տղամարդկանց արտագնա աշխատանքի մեկնելու հետևանքով շատ կանայք միայնակ են մնացել, փաստորեն հայտնվելով մի կացության մեջ, երբ նրանք զրկված են բնականոն ամուսնական կյանքից, սակայն ազատ չեն, մինչդեռ նրանց ամուսինները հաճախ նոր ընտանիքներ են կազմում արտերկրում: Եվ չորրորդ, նահապետական /հայրիշխանական/ հասարակությունների հիմքում ընկած ավանդական նորմերն ու արժեքները վերահաստատվում են: Այսպիսով, կանայք կարծես ծուղակի մեջ են հայտնվել, այն է՝ ստիպված են ապահովել ընտանիքի գոյությունը՝ ունենալով սահմանափակ սոցիալական ազատություն: Ինչ վերաբերում է փոքրամասնությունների կանանց, ապա նրանք բախվում են նույն խոչընդոտներին, որոնք հաճախ ավելի խրթին բնույթ են կրում:

## Հայաստան

Փոքրամասնությունները կազմում են Հայաստանի ժողովրդագրական համակարգի չափազանց համեստ հատվածը: Քրդերից հետո /մեծամասամբ եզդիներ/ իրենց թվաքանակով երկրորդ փոքրամասնությունն են կազմում ռուսները: Հայաստանում ապրող ռուսները հարաբերականորեն երկու խմբի են բաժանվում: Նրանց մի մասը, որն ամուսնացած է հայերի հետ, ապրում է քաղաքներում, հիմնականում՝ Երևանում: Ռուսների մյուս խումբն են ներկայացնում մոլոկանների կրոնական համայնքները, որոնք Հայաստան են եկել 19-րդ դարի սկզբներին, փախչելով ցարական Ռուսաստանում նրանց նկատմամբ կիրառվող կրոնական հետապնդումներից: Ըստ Ռուս հայրենակցական աջակցության կազմակերպության, Հայաստանում այժմ բնակվում են մոտ 5 000 մոլոկաններ: Նրանց մեծ մասը իրեն ռուս չի համարում, քանի որ ունի իր սեփական կրոնը[39]:

**Քրդեր և եզդիներ**

Համաձայն քրդական աղբյուրների Հարավային Կովկասում բավականին մեծաթիվ քրդական համայնքներ կան: Մարդու իրավունքների քրդական ծրագիրը /ՄԻՔԾ/ պնդում է, որ մոտ 75000 քրդեր /բնակչության 1,8 տոկոսը/ ապրում են Հայաստանում և 200 000 /2,8 տոկոս/ Ադրբեջանում: Ադրբեջանի վերաբերմունքը տեղի քրդական բնակչության հանդեպ /ինչպես օրինակ, նրանց ազգային ինքնության չճանաչումը/ մեծապես պայմանավորված է Ղարաբաղյան հակամարտությամբ[40]:

Հայաստանում ապրող քրդերի մեծ մասը եզդիներ են[41]. մուսուլման քրդերի մեծ մասը լքել է Հայաստանը ղարաբաղյան հակամարտության սկզբից /1988-89/: Քրդերը եզդիներին քուրդ ազգի մասն են համարում[42], ինչը համահունչ է խորհրդային այն ավանդույթին, ըստ որի էթնիկ խմբերը գրանցվում էին լեզվական պատկանելության, այլ ոչ ազգային ինքնագիտակցության հատկանիշներով: Հայաստանի եզդիները շեշտում են իրենց քրդերից տարբեր ազգային պատկանելությունը՝ հիմք ընդունելով կրոնական դավանանքի տարբերությունը, որն իր մեջ ներառում է և՛ արևապաշտության և՛ քրիստոնեության և զրադաշտության տարրեր: Հայաստանից դուրս, սակայն, եզդիները պնդում են, որ քրդական ինքնություն ունեն[43]: Այդուհանդերձ, անհերքելի է, որ քրդերն ամուր կապեր ունեն Հայաստանի հետ: Այսպես օրինակ, Աբդուլա Օջալանի Քուրդիստանի Աշխատավորական Կուսակցության /ՊԿԿ/ ղեկավարի, ձերբակալությունից հետո Երևանում զանգվածային բողոքների ցույցեր տեղի ունեցան, որոնց նպատակը քրդական ազգային ազատագրական շարժմանն աջակցելն էր[44]:

Քրդերի առաջին ներգաղթը Հայաստան տեղի էր ունեցել տասնիններորդ դարի կեսերին, իսկ շատ եզդիներ բնակություն են հաստատել Հայաստանում 1915-20 թվականներին Օսմանյան կայսրության փլուզումից հետո: 1989 թ. Հայաստանում կար 56 000 քուրդ /1.8 տոկոս/, մինչդեռ արդ նրանց թիվը հազիվ 50 000-ին է մոտենում: Եզդիները մեծամասամբ ապրում են գյուղական վայրերում /նրանց ընդամենը ութ տոկոսն է բնակվում քաղաքներում/: Նրանցից շատերը ներկայումս ապրում են Հոկտեմբերյանի /այժմ Արմավիրի – խմբ./ և Էջմիածնի շրջաններում և առավելապես զբաղվում են անասնապահությամբ: Հայաստանի որոշ գյուղերում բնակվում են միայն եզդիներ, բայց կան նաև խառը բնակչությամբ գյուղեր: Եզդիների համայնքները կառուցված են կրոնական և կլանային սկզբունքների վրա՝ յուրաքանչյուր համայնք ղեկավարվում է շեյխի կողմից, որի «պաշտոնը» փոխանցվում է սերնդե-սերունդ, և որի իշխանությունը ընդունվում է բոլորի կողմից: Եզդիների կրթական մակարդակը շատ ավելի ցածր է, քան հայերինը: 1989-ի դրությամբ եզդիների ընդամենը 1,3 տոկոսը բարձրագույն կրթություն ուներ, իսկ քսան տոկոսն անգամ միջնակարգ կրթություն չուներ: Գրանցված իրավիճակն արդ ավելի է վատթարացել, հատկապես աղջիկների դեպքում, որոնք ամուսնանում են դեռևս մատաղ տարիքում /13-14 տարեկան/:

Հայերի և եզդիների միջև շփումները խիստ նվազել են, և խառը ամուսնությունները գրեթե բացառված են: Փոխարենն առավել բարեհաջող զարգացումներ են դրսևորվում մոլոկանների հետ եզդիների հարաբերություններում, և եզդիներով ու մոլոկաններով բնակեցված գյուղերում կարելի է խորացված կապերի օրինակների հանդիպել: Անկախությունից հետո եզդիների վիճակը ավելի է վատթարացել, որը պայմանավորված է նրանց և հայերի միջև սոցիալական և մշակութային տարբերության խորացմամբ: Իսկ փոքրամասնությունների հանդեպ հատուկ վերաբերմունքի նվազումը բերել է սոցիալական հնարավորությունների կրճատմանը /տես Փոքրամասնությունները նոր պետություններում, էջ 22-24/:

1990-ական թվականների սկզբներից եզդիները սկսեցին տնտեսական պատճառներով արտագաղթել Հայաստանից առավելապես դեպի Ռուսաստան և Գերմանիա, որտեղ գործում է քրդական սփյուռքը: Եզդիները, սակայն, կարծում են, որ արտագաղթը ժամանակավոր բնույթ ունի, և որ իրենք Հայաստանից բացի այլ Հայրենիք չունեն:

## Ադրբեջան

Ադրբեջանում փոքրամասնություններն առավելապես ընկալվում են աստիճանաբար աճող կրոնական նկրտումների համատեքստում: Հարավկովկասյան խմբերը ավարները, չեչենները, լեզգիներն ու ցախուրները, մեծամասամբ մահմեդական սուննիների հետևորդներ են: Կարծիք կա, որ այս խմբերի վրա մեծ է ծայրահեղական իսլամի ազդեցությունը: Իսկ Ադրբեջանի հարավում բնակվող թալիշ ժողովրդի՝ Իրանի սահմանի մոտ գտնվելու հանգամանքն առավել սաստկացնում է այն մտավախությունը, թե հետզհետե աճում է Իրանի կրոնական ազդեցությունը նրանց վրա:

Իսլամական նոր շարժումները, որոնք մասնավորապես զարգացում ապրեցին Դաղստանում և Կենտրոնական Ասիայում 1980-ական թվականներին, ուղղված էին աշխարհիկ իշխանությամբ քաղաքական համակարգի դեմ: Պերեստրոյկայի շրջանում այդ դրսևորումները ներկայացվում էին որպես ժողովրդավարության ձայն քաղաքացիական հասարակության պայմաններում: 1990-ական թվականների ընթացքում իսլամական ծայրահեղականության մի նոր դրսևորում երևան եկավ: Առաջին ռուսական արշավը Չեչնիայի դեմ և դրան հետևած հետպատերազմական քաոսը ծնունդ տվեցին իսլամական ծայրահեղականությանը, որը կոչ էր անում քաղաքական հարցերը լուծել Ասծո /Ալլահի – խմբ./ կողմից շնորհված իրավունքների հիման վրա: Իսլամի մարտիկների դերը ռուսներին հաղթելու գործում նրանց հանդեպ հարգանք ծնեց, հատկապես երիտասարդների շրջանում, իսկ վերջիններիս տնօրինած միջազգային ցանցերը, ֆինանսական աջակցությունը, կազմակերպվածությունն ու քաջությունը նպաստեցին նրանց նկատմամբ համակրանքի ձևավորմանը[45]: Երկրորդ ռուս-չեչենական պատերազմի ժա-

մանակ իսլամի մարտիկները կազմեցին պաշտպանության հիմնաքարը, իսկ անկախության համար պայքարը վերածվեց «կրոնական» պատերազմի:

Ադրբեջանական իշխանություններն ու բնակչության մեծ մասն խորապես անհանգստացած են հարավկովկասյան ժողովուրդների մեջ ծայրահեղական իսլամի դերի աճով: Օրինակ, Ադրբեջանի հյուսիսում գտնվող Խաչմազ շրջանում տեղաբնակ լեզգիների մեջ սկսեցին հայտնվել Դաղստանից և Չեչնիայից եկած իսլամականներ: Նրանց անծանոթ կրոնական ծեսերն անհանգստություն են պատճառում ավանդական մուսուլմաններին: Ուստի, Ալիևի վարչակարգն ուշիուշով հետևում է զարգացումների ընթացքին:

### Հյուսիսային Ադրբեջան

Ադրբեջանի հյուսիսկովկասյան ժողովուրդներից են ավարները, չեչենները /նրանցից շատերը Ադրբեջանում հաստատվել են վերջերս/, լեզգիները[46], ցախուրներն ու մյուս փոքր խմբերը: Մոտ 250 000 լեզգիներ բնակվում են հարավային Դաղստանում /Ռուսաստան/ գտնվող Սամուր գետի երկու ափերին, մինչդեռ 178 000 լեզգիներ /Ադրբեջանի բնակչության 2,2 տոկոսը, ըստ 1999-ի մարդահամարի/ ապրում են հյուսիսային Ադրբեջանում: Տեղացի փորձագետները համարում են, որ նրանց իսկական թվաքանակը 250-260 հազարի է հասնում[47]: Լեզգիներն այդպիսի անջատ համայնքներով ապրում են 1860 թվականներից ի վեր, սակայն իրենց լիովին մասնատված սկսեցին զգալ միայն Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ մինչ այդ զուտ վարչական բնույթ ունեցող սահմանները միջազգային դարձան:

Ներկայումս լեզգիները Ադրբեջանի թվով երկրորդ ազգությունն են: Նրանք ապրում են Կուսարիում, որտեղ կազմում են բնակչության 91 տոկոսը, ինչպես նաև Խաչմազի, Շեքիի և Գուբայի շրջաններում: Բաքվում լեզգիները կազմում են բնակիչների 15 տոկոսը:

Լեզգիների և ադրբեջանցիների միջև լարվածությունները սկիզբ առան 1992 թվականին և իրենց գագաթնակետին հասան 1994 թվականին, երբ ղարաբաղյան ռազմաճակատում ադրբեջանցիները մեծ քանակությամբ զոհեր տվեցին: Այդ ժամանակ լեզգիները հրաժարվում էին զինվորագրվել ադրբեջանական բանակին, ինչը ադրբեջանցիների և լեզգիների դաժան ընդհարումների հանգեցրեց Դերբենդում, Դաղստանում և Ադրբեջանի Կուսարի շրջանում: Ղարաբաղյան պատերազմը սրեց միջէթնիկ լարվածությունները Ադրբեջանում, և ադրբեջանցի իշխանավորները հասկացան, որ քանի դեռ չի լուծվել Ղարաբաղյան հիմնահարցը, անհնար է զբաղվել մյուս փոքրամասնությունների խնդիրներով:

1991թ. Դաղստանում սկսված Սադվալի քաղաքական շարժումը կոչ արեց ձեռնամուխ լինել անկախ Լեզգիստանի ստեղծմանը: Դաղստանի ղեկավարներն այս շարժմանը չսատարեցին, և այն, ի վերջո, պաշտոնապես դադարեց գործել 1996 թ. ապրիլին: Այնուամենայնիվ, ձուլման հանդեպ տածած վախն ու իրենց համայնքի գոյությանը սպառնացող վտանգի զգացողությունը դեռևս բավականին զորեղ են, հաշվի առնելով նաև, որ մասնատված լինելու հանգամանքը թուլացնում է լեզգիների ինքնության պահպանման հնարավորությունը:

ԱՊՀ-ին միանալու Ադրբեջանի չկամությունը և մերձողական դիրքորոշումը ռուսական սահմանապահների կողմից ադրբեջանա-իրանական սահմանի հսկման նկատմամբ 1992-93 թվականներին հանգեցրեց ռուս-ադրբեջանական սահմանի խիստ վերահսկողությանը և արդա սահմանի լիակատար փակմանը չեչենական առաջին պատերազմի ժամանակ /1994-96 թ.թ./: Սահմանը վերաբացվեց 1996 թվականին, բայց լեզգիների անջատվածության խնդիրը շարունակում է գոյատևել, իսկ սահմանի խիստ հսկողությունը հանգեցնում է ռազմականացման և մաքսանենգության զարգացման, ինչպես նաև առաջ է քաշում երկքաղաքացիության հարցը: Դաղստանը ճանաչում է այս բաժանվածության խնդիրը, մինչդեռ Ադրբեջանը չի ճանաչում, ադրբեջանցիների՝ Իրանի և Ադրբեջանի տարածքներում մասնատվածության հիմնահարցի գոյությունը:

Լեզգիների մեծ մասը գիտի երկու կամ երեք լեզու, մասնավորապես՝ լեզգիերեն, ադրբեջաներեն և ռուսերեն: Ադրբեջանը աջակցում է լեզգիական լեզվի և մշակույթի պահպանմանը տեսական մակարդակով: Պետությունը հովանավորում է լեզգիերեն լեզվով թերթերի հրատարակումն ու ռադիո ծրագրերի հեռարձակումը: 1992թ. Կուսարիում հիմնվել է լեզգիական ազգային դրամատիկական թատրոն: Բաքվի մանկավարժների վերապատրաստման քոլեջը ունի իր մասնաճյուղը Կուսարիում, որտեղ ուսուցիչներ են պատրաստվում միջնակարգ դպրոցի ցածր դասարաններում լեզգիերեն դասավանդելու համար: Քոլեջը առաջարկում է նաև կրթաթոշակներ լեզվի ուսումնասիրման համար և հրավիրում է Դաղստանի լեզգի ուսանողներին մասնակցելու վերապատրաստման դասընթացներին: Տարեց լեզգիները լրջորեն հետամուտ են լեզգիերեն լեզվի ու մշակույթի պահպանմանը:

Ադրբեջանի դպրոցներում դասավանդման հիմնական լեզուները կամ ադրբեջաներենն է կամ ռուսերենը, սակայն, այն դպրոցներում, որոնք մեծաթիվ լեզգի աշակերտներ ունեն, լեզգիերեն լեզվի շաբաթական երկու դաս է անցկացվում: Դաղստանի լեզգիներով բնակեցված շրջաններում լեզգիերենը դպրոցների ցածր դասարաններում դասավանդման հիմնական լեզուն է, ինչպես խորհրդային Ադրբեջանում: 2001 թվականի օգոստոսի 1-ին սլավոնական այբուբենից լատինականին անցումը Ադրբեջանում լեզգիները չողջունեցին: Նրանք պնդում են, որ այդ փոփոխության հետևանքով խոչընդոտվում է իրենց կապը Ռուսաստանում ապրող ազգակիցների հետ, քանզի վերջիններս շարունակում են օգտագործել սլավոնական այբուբենը: Ադրբեջանի ղեկավարությունը սակայն, այս խնդրի առնչությամբ քայլեր չի ձեռնարկում:

Ավարներն ապրում են Ադրբեջանի հյուսիսում գտնվող Զաքաթալի ու Բելոկնի շրջաններում, և նրանց թիվը հասնում է 50 000-ի /Ադրբեջանի բնակչության 0,6 տոկոսը/[48], մինչդեռ ավարների մեծամասնությունը

ապրում է Դաղստանում՝ կազմելով տեղի խոշորագույն էթնիկ խումբը 600 000 թվաքանակով։ Ադրբեջանի հյուսիսի ազգամիջյան հարաբերություններում առկա է լարվածության գործոնը, մասնավորապես իրավապահ մարմինների գործողությունների ու հանցագործությունների առկայության պատճառով։ 2001թ. ընթացքում կատաղի ընդհարումներ տեղի ունեցան տեղի ավարների ու ոստիկանության միջև, որոնք մեծամասամբ էթնիկ ադրբեջանցիներ են։

Կան նաև տվյալներ, որ մեկ այլ հյուսիսկովկասյան էթնիկ խմբի ներկայացուցիչներ՝ չեչենները, ահաբեկչական գործողություններ են իրականացնում Ադրբեջանի հյուսիսային սահմանի տարածքում։ Այդօրինակ գործողություններ տեղի են ունեցել սկսած 2001թ. հունիսից և հետզհետե ավելի հաճախակի են դարձել։ Ներկայումս մոտ 20 000 չեչեններ, որոնք փախել են Չեչնիայում տեղի ունեցող կռիվներից, ապրում են Ադրբեջանում։ Ադրբեջանի իշխանությունները չեն ճանաչում նրանց ներկայությունը և գրանցում են վերջիններիս որպես փախստականներ կամ էլ ներկայացնում որպես անօրինական գաղթականներ։ Տեղի բնակչության շրջանում չեչեններն ունեն հանցագործների կամ թմրանյութերի մաքսանենգների համբավ։ Ադրբեջանցիներն էլ չեչենների ցածր վարկանիշի են արժանացել Ղարաբաղյան պատերազմում կրած պարտության պատճառով։ Չեչենների ներկայությունը Ադրբեջանում նպաստում է ռազմատենչ տրամադրությունների ձևավորմանը՝ վերջիններիս կողմից Ղարաբաղի համար պայքարելու պատրաստակամության պատճառով[49]։

### Հարավային Ադրբեջան

Թալիշները իրանական ժողովուրդ են, որոնք դավանում են իսլամի շիա ուղղությանը։ Նրանք ապրում են Ադրբեջանի հարավ-արևելքում, մեծամասամբ Լենկորանի ու Մասալիի շրջաններում, և առավելապես գյուղաբնակ են /97 տոկոսը/։ Խորհրդային ժամանակաշրջանում թալիշները որոշ դեպքերում չէին հաշվառվում մարդահամարների ընթացքում, սակայն ըստ 1989 թ. մարդահամարի նրանց թվաքանակը կազմում էր 21 200 մարդ /Ադրբեջանի բնակչության 0,3 տոկոսը/։ 1999 թ. մարդահամարը գրանցեց, որ Ադրբեջանում 76 800 թալիշ կա / երկրի բնակչության 1 տոկոսը/։ Որոշ ադրբեջանցի մասնագետներ համոզված են, որ թալիշների իրական թիվը երկրում կազմում է 200-250 հազար մարդ, բայց իշխանությունները չեն ցանկանում հավաստել ներկայացված թիվը[50]։

1993թ. հունիսին, Ադրբեջանում տիրող քաոսային իրավիճակի պայմաններում, երբ Ադրբեջանի Ժողովրդական ճակատը կորցրեց իշխանությունը, Բաքվում տեղի ունեցած հեղաշրջման կազմակերպիչ Սուրատ Հուսեյնովի աջակիցներից մեկի կողմից Լենկորանում հռչակվեց «Թալիշ-Մուգան հանրապետությունը»։ Սակայն, քանզի այն չէր վայելելում ժողովրդի աջակցությունը և հարմարվողական բնույթ ուներ, շարժումը հեշտությամբ ճնշվեց Ալիևի վարչակարգի կողմից։ Շարժման կազմակերպիչը դատապարտվեց երկարաժամկետ ազատազրկման։ Ներկայումս տեսակետ է հայտնվում, թե Լենկորանում աճում է Իրանի ազդեցությունը և որ այն է ավելի է մահմեդականացվում։ Իրանի ֆինանսական աջակցությամբ կառուցվում են մզկիթներ ու իսլամական դպրոցներ /մադրասաներ/ են բացվում։

## Վրաստան

### Հայեր

Հայերը Վրաստանի ամենախոշոր փոքրամասնությունն են կազմում։ 1989 թ. նրանց թիվը կազմում էր 437 200 մարդ/բնակչության 8,1 տոկոսը/, որոնց մեծ մասը կենտրոնացած էր Թբիլիսիում /ավելի քան 150 000, կամ քաղաքի բնակչության 12 տոկոսը/։ Այժմ հայկական համայնքի շարժունակ մասը արտագաղթել է երկրից, և հայերի թիվը կազմում է մոտ 350 000 մարդ[51]։ Հայերը զրկվել են նախկինում երկրի մայրաքաղաքում իրենց տնօրինած տնտեսական և քաղաքական լծակների մեծ մասից։

Մայրաքաղաքից դուրս հայերը կենտրոնացած են Ջավախքում՝ Վրաստանի հեռավոր հարավային շրջանում, որը սահմանակցում է Թուրքիային և Հայաստանին։ Այս շրջանում հայերը կազմում են բնակչության մոտ 95 տոկոսը[52]։ Ջավախքը մաս է կազմում Սամցխե-Ջավախքի շրջանին։ Սամցխեն հայերով ու վրացիներով խառը բնակեցված տարածք է։ Բուն Ջավախքը կազմված է երկու շրջաններից՝ Ախալքալաքից ու Նինոծմինդայից։

Ջավախքում ապրող հայերի մեծ մասը Օսմանյան կայսրության հալածանքներից փախած տարագիրների ժառանգներն են[53]։ Այստեղ դեռևս ուժեղ է «թուրքական վտանգի» զգացողությունը, առկա է բարձր համախմբվածություն ու լեռնային ժողովրդին բնորոշ ազգային վառ անհատականություն։ Խորհրդային շրջանում այս տարածքը փակ էր արտաքին աշխարհի համար։ Անվտանգության ապահովման նկատառումներով տեղի սոցիալական և տնտեսական զարգացումը արհեստականորեն պահպանվում էր ընդհանուր միջինից բարձր մակարդակի վրա։ 1990-ական թվականներին այս ռազմավարությունը դադարեց գործել, և այժմ Ջավախքում դժվարին խնդիր է դարձել կենսական բնականոն պայմանների ապահովումն իսկ։

Պատմական և մշակութային գործոնները էլ ավելի են խորացնում տարածքի մեկուսացումը և նպաստում ազգային ինքնության պահպանմանն ու օտարների հանդեպ անվստահության ձևավորմանը։ Այսօրինակ իրադրության արմատացմանը նպաստում են նաև գրեթե միատարր էթնիկ կազմը, վրացերենի թույլ իմացությունն ու երկրի մյուս շրջաների հետ թույլ կապերը[54]։

Ջավախքը Սամցխեի ցածրադիր շրջանների հետ միացնելու նախաձեռնությունը բախվեց տեղի հայերի բուռն դիմադրությանը, քանզի այն ընկալվեց որպես շրջանը առավել «վրացականացնելու» փորձ։ Վարչական կենտրոն ստեղծվեց Ախալցխայում, մի քաղաք, որը

թույլ կապեր ունի Ջավախքի հետ: Վարչարարական բարեփոխումների իրականացմանը միտված քայլերը, որոնք նախատեսում էին ավելի մեծ վարչական միավորներ կազմավորել, դժգոհությամբ ընդունվեցին նաև Վրաստանի էթնիկ միատարր այլ շրջաններում[55]: Ջավախքի հայերը հատկապես բացասաբար են վերաբերում իրենց շրջանի վարչակարգի հիմնականում վրացիներից կազմված աշխատակազմին, ինչպես նաև շրջանում Թբիլիսիից նշանակված մարդկանց ներկայությանը:

Շրջանն ունի քաղաքական երկու խմբավորում՝ Ջավախքն ու Վիրքը: Ջավախք կազմակերպությունը մեծ ազդեցություն ուներ վաղ 90-ականներին և հայտնի է Գամսախուրդիայի պաշտոնավարման ժամանակաշրջանում Ջավախքում ազգայնականության դրսևորումների սանձման համար գործադրած ջանքերով: Սակայն այդ ժամանակվանից ի վեր այն կորցրել է իր ազդեցությունը[56]: Այժմ ավելի լուրջ քաղաքական ուժ է Վիրք խմբավորումը[57]: Վիրքը կողմնակից է Սամցխեից Ջավախքի վարչական անջատմանը և Ջավախքի ինքնավար մարզի ստեղծմանը Վրաստանի կազմում[58]: Ինքնավարություն ստեղծումն ընկալվում է առավելապես իբրև անվտանգության երաշխիք, քան փոփոխությունների միջոց: Վրաստանում որպես քաղաքական կուսակցություն գրանցվելու Վիրքի ներկայացրած հայտը մերժվել էր: Վրաց ղեկավարությունն առաջարկել էր գրանցել այն որպես հասարակական կազմակերպություն, բայց Վիրքի անդամները չէին համաձայնվել:

Ջավախքում է գտնվում Ռուսաստանի 62-րդ ռազմակայանը, որը տեղակայված է Ախալքալաքում: Ջավախքի հայերի և ռուսական ռազմակայանի զինվորականների միջև ստեղծված բարի հարաբերությունները վրացիների կողմից ընկալվում են որպես իրենց անվտանգությանը սպառնացող վտանգ: Թբիլիսին պահանջում է, որպեսզի Ռուսաստանը դուրս բերի իր ռազմակայանը Ջավախքից մինչև 2004 թվականը, մինչդեռ ռուսները ցանկանում են պահպանել այն մինչև 2015 թվականը: Ըստ Ռուսաստանի ռազմակայանը կարևոր նշանակություն ունի որպես իր անվտանգության երաշխիք Կովկասի անկայուն տարածաշրջանում: Նախատեսվում էր, որ 1999թ. վրացական զորամիավորումները պետք է փոխարինեն ռուսական սահմանապահներին, երբ վերջիններս հեռանան Թուրքիայի հետ սահմանից, սակայն, ծրագրին այնպիսի դիմակայության բախվեց Ջավախքում, որ դրա իրականացումը ձախողվեց:

Ախալքալաքի ռուսական ռազմակայանը կարևոր նշանակություն ունի Ջավախքի տնտեսության համար: Ռազմակայանն աշխատատեղեր է ապահովում տեղի շատ բնակիչների համար, դրա գոյությունը սպառման շուկա է ստեղծում տեղական ապրանքների համար, ինչպես նաև ապահովում տարբեր ապրանքների ներկրումը Ռուսաստանից: Վրացիների կողմից Ջավախքում ռազմակայանը փակելուն միտված փորձերը բուռն հակադրության են բախվում: Տեղի հայերը երկյուղում են, որ իրադարձությունների այդպիսի զարգացման դեպքում ՆԱՏՕ-ի ռազմավարության համաձայն Ջավախք կմտնեն թուրքական զորքերը, կամ էլ վրացական զինվորական միավորումներ կուղարկվեն իրենց շրջան: Այսպիսի զարգացումը հակամարտության բորբոքման մեծ հավանականություն ունի, հաշվի առնելով նաև տեղի բնակչության զինված լինելու հանգամանքը և հավանականությունը, որ որևէ փոքր միջադեպ կարող է այն շարունակական բռնությունների առիթ այն:

Ջավախքում ապրող Վրաստանի քաղաքացիների նախանձն է շարժում Ռուսաստանի կողմից Հարավային Օսիային և Աբխազիային ազատ մուտքի պայմանակարգի տրամադրումը /առանց մուտքի արտոնագրերի/, քանզի շատ ջավախքցի տղամարդիկ նույնպես արտագնա աշխատանքի են փնտրում Ռուսաստանում: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե Վրաստանի ու Ռուսաստանի միջև չլուծված խնդիրների պատճառով պատժվում են Ջավախքի հայերը: Նրանցից շատերը փորձում են ռազմակայանի միջոցով ձեռք բերել ռուսական անձնագիր կամ էլ հայկական՝ անարգել երթևեկելու նպատակով:

Վրաստանի ու Հայաստանի միջև հարաբերությունները լարված են, բայց երկու երկրների ղեկավարներն էլ կարողանում են կայունություն պահպանել: Շնորհիվ պահպանվող կայունության Շևարդնաձեն փորձում է խուսափել ևս մեկ էթնիկ հակամարտությունից իր երկրի տարածքում, իսկ Քոչարյանը գիտակցում է, որ Վրաստանը մեկուսացված և շրջափակված Հայաստանի համար միակ տարանցիկ ճանապարհն է դեպի Ռուսաստան և Եվրոպա: 2001թ. Շևարդնաձեն պաշտոնական այց կատարեց Հայաստան և հավաստիացրեց հայ պաշտոնյաներին, որ իր կառավարությունը հավատարիմ է մնում Ջավախքի հայերի կացությունը բարելավելու խոստումներին: Վերնշյալ այցի ժամանակ երկու երկրների միջև բարեկամության, անվտանգության և համագործակցության մասին երկկողմ համաձայնագիր ստորագրվեց:

Երկու երկրների նախագահներն էլ, սակայն, գտնվում են իրենց ժողովուրդների ուժեղ ճնշման տակ: Վրաստանում աճում են հակահայկական ու օտարատյաց տրամադրությունները: Հայաստանում ընդդիմությունը մեղադրում է նախագահին Վրաստանում հայերի խնդիրներն անտեսելու, այդ թվում՝ Վրաստանի խառը բնակեցված տարածքներից հեռանալու նպատակով հայերի վրա գործադրվող ճնշումներին, Թբիլիսիում տնտեսական և քաղաքական դիրքերից հայերի դուրս մղմանը, Ջավախքի անհամաչափ զարգացմանը /միակ էներգատարն այդ շրջան գալիս է Հայաստանից/, տարանցիկ խնդիրներին և Թուրքիայի ու Ադրբեջանի միջև ռազմական համագործակցությանը չարձագանքելու համար:

2001թ. սեպտեմբերին հայկական խորհրդարանական պատվիրակությունը կոչ հղեց Եվրախորհրդին /ԵԽ/ ուսումնասիրություն կատարելու նպատակով հսկիչներ գործուղել Ջավախք[59]: Իսկ Վրաստանի կողմից ծրագրված մսխեթցի թուրքերի հայրենադարձը /տես էջ 20/, որը բախվում է էթնիկ հայերի կտրուկ դիմադրությանը, կարող է ևս մեկ անգամ պարզաբանել ԵԽ-ի հանդեպ հայերի ներկայիս դիրքորոշումը, քանզի մսխեթցի թուրքերի վերադարձը /հատկապես Ջավախքի շրջան- խմբ./ հանդիսանում էր ԵԽ-ին Վրաստանի անդամակցության պայմաններից մեկը:

### Աջարացիներ

Սև ծովի ափին գտնվող Աջարիան, Աբխազիայի նման, Խորհրդային Վրաստանի կազմում ինքնավար հանրապետություն էր: ԽՍՀՄ փլուզումից հետո այն գրեթե լիովին անկախացավ, մնալով Թբիլիսիի ֆորմալ ենթակայության տակ: Աջարիայի մայրաքաղաք Բաթումին որպես քաղաքական կենտրոն այլընտրանք է ներկայացնում Թբիլիսիին: Աջարիայի ղեկավար Ասլան Աբաշիձեն կառավարում է հանրապետությունը իբրև իր սեփական ֆեոդալական տարածքը, իսկ նրա ընտանիքի անդամները զբաղեցնում են երկրի կարևոր տնտեսական և քաղաքական պաշտոնները: Այնուամենայնիվ, Աջարիայում ներկայումս կայունություն է հաստատվել և անգամ որոշակի առաջընթաց գրանցվել:

Ունենալով Աբխազիայի ու Հարավային Օսիայի դառը փորձը՝ Շևարդնաձեն Աջարիայի նկատմամբ վարում է «ներքին գործերին չմիջամտելու» քաղաքականություն: Աջարիայի օրենսդրությունը, դատական համակարգն ու անվտանգության ուժերը կազմված են տեղացիներից, իսկ Վրաստանի տարածքային ամբողջականությանը ցուցաբերվող աջակցությունը լոկ կոչային արտահայտություն ունի: Ամենակարևորն այն է, որ կենտրոնական իշխանությունները չեն կարող համոզել Բաթումին, որպեսզի այն իրենց հետ կիսի նավահանգստի բեռնափոխադրումների մաքսային տուրքերից գոյացող բավական խոշոր գումարները:

Աջարիայում տեղակայված վրացական սահմանապահ զորքերը վերահսկվում են Աբաշիձեի վարչակարգի կողմից, որը զինվորներ է հավաքագրում տեղացիներից: Ռուսական ռազմակայանը Բաթումիում ևս մեկ կռվախնձոր է Ռուսաստանի ու Վրաստանի միջև: Այն ունի առավելապես աջարացիներից կազմված աշխատակազմ: Իհարկե, Թբիլիսին ցանկանում է, որպեսզի ռուսական զորքերը հնարավորինս շուտ ազատեն ռազմակայանը, սակայն, Ռուսաստանը ցանկանում է պահպանել այն մինչև 2015 թվականը: Բայց ռուսական զորքերի Աջարիայից հեռանալը հազիվ թե երկիրը վերադարձնի Թբիլիսիի ենթակայությանը: Մեկ տասնամյակի պատմություն ունեցող de facto անկախությունը ամրապնդել է աջարացիների անկախ ինքնությունը, ինչպես նաև նվազեցրել հարգանքը դեպի Թբիլիսիի իշխանավորները: Իսկ բարելավվող տնտեսական դրությունը ևս մեկ գործոն է, որը չի նպաստում status quo-ին վերադառնալուն:

Կարծիք կա նաև, որ Աբաշիձեն համազգային քաղաքական նկրտումներ ունի: Նրա գլխավորած Վերածննդի միություն կուսակցությունը մասնակցում է վրացական ընտրություններին, նպատակ ունենալով ծանոթացնել վրաց ընտրազանգվածին Աջարիայի ղեկավարի հետ: Շեշտը դրվում է հատկապես փոքրամասնություններով բնակեցված շրջանների վրա, ինչպիսին օրինակ Ջավախքն է, որտեղ կենտրոնական իշխանությունների հանդեպ դժգոհությունները բավականին լայն տարածում ունի:

### Ադրբեջանցիներ

Ադրբեջանցիները ներկայումս թվով երկրորդ փոքրամասնությունն են Վրաստանում և կենտրոնացած են մասնավորապես գյուղական շրջաններում Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով /Կվեմո-Քարթլի շրջանում/: 1989թ. նրանց թիվը հասնում էր 307 000-ի /բնակչ. 5,7 տոկոսը/, որոնցից 18 000-ը բնակվում էր Թբիլիսիում /1,4 տոկոս/: Պերեստրոյկայի ու Գամսախուրդիայի ղեկավարման շրջանում տեղի ադրբեջանցիներն ինքնավարություն ստանալու պահանջներ էին ներկայացնում՝ իրենց կարգավիճակը Վրաստանում բարձրացնելու ակնկալիքով: Սակայն, Ադրբեջանի աջակցությունն այս հարցում չստանալու պատճառով, ինչպես նաև շնորհիվ վրաց ղեկավարների զգույշ քաղաքականության, այս լարվածությունները հանդարտվեցին[60]:

Ներկայումս Կվեմո-Քարթլիի մարզպետը հակված է ցուցադրելու իր հավատարմությունը Թբիլիսիին: Տեղացի ադրբեջանցիներն ամենայն հավանականությամբ այդպեսի կրավորական կեցվածք կպահպանեն նաև հետագայում, քանզի նրանք զիտակցում են, որ Ալիևի վարչակարգն իրենց չի սատարի: Բացի այդ, ավելի քան 15 000 վրացիներ ապրում են Ադրբեջանի Զակաթալի շրջանում, այնպես որ երկու կողմերն էլ հակված են պահպանելու ազգամիջյան խաղաղությունը:

Մեծաթիվ բռնություններ և օրինախախտումներ են տեղի են ունենում մասնավորապես գործող սահմանային ու մաքսային համակարգի հետևանքով: Հաճախ վրաց սահմանապահները սպանում են սահմանը անցնող մաքսանենգերին /ազգությամբ ադրբեջանցի- խմբ./, որն էլ հուզումների տեղի է տալիս էթնիկ ադրբեջանցիների շրջանում: Էթնիկորեն խառը բնակության տարածքներում իրականացվող ոստիկանական վերահսկողությունը նույնպես խնդիրներ է հարուցում, քանզի ոստիկանները հիմնականում վրացիներ են:

Տեղի ադրբեջանական փոքրամասնության վրա իրենց ազդեցությունը ունեն նաև լեզվին /Կվեմո-Քարթլի շրջանում շատերը խոսում են միայն ադրբեջաներեն/, ուսումնառությանը, աշխատանք գտնելու նպատակով արտագաղթի դիմելուն, քաղաքականության մեջ ներգրավվածությանը, լրատվությանը /տեղի բնակչությունը մեծամասամբ դիտում է ադրբեջանական կամ ավելի հազվադեպ թուրքական հեռուստակայանները/ և օրենքներին առնչվող խնդիրները, ինչպես Ջավախքի հայերի դեպքում: Վրաստանի 235 խորհրդարանականներից միայն վեցն են ադրբեջանցի: 2001 թվականին Վրաստանի ադրբեջանաբնակ տարածքներում փակվեցին որոշ դպրոցներ, որտեղ դասավանդումն իրականացվում էր ադրբեջաներեն լեզվով: Ծրագրված էր նաև վերանվանել ադրբեջանական անվանումներ ունեցող գյուղերը, որը հարուցեց Ադրբեջանի մտավորականների բողոքը: Մտավորականների մի խումբ իր անհամաձայնությունը հայտնող հատուկ ուղերձ հղեց նախագահ Շևարդնաձեին[61]:

## Հյուսիսային կովկասցիներ

Վրաստանում բնակվող սակավաթիվ չեչենները և նրանց ազգակից քիստերը վերջերս լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում են հայտնվել Չեչնիայի ու Աբխազիայի հակամարտությունների կապակցությամբ, ինչպես նաև իսլամական ահաբեկչության համատեքստում:

Քիստերն ապրում են Կախեթի շրջանի Պանկիսի դաշտավայրում, որը գտնվում է Ախմետա շրջանի հյուսիսում Չեչնիայի հետ սահմանային տարածքում: Պանկիսիում ապրում են քիստեր /8 000 մարդ կամ շրջանի 65 տոկոսը/, վրացիներ /24 տոկոս/ և օսեր /11 տոկոս/[62]: Այստեղ ավանդական նորմերը նոր թափ ստացան Խորհրդային Միության փլուզման հետ մեկտեղ: Այսպես կոչված թեյփը , կամ կլանը, ղեկավարվում է որևէ տարեց մարդու կողմից, որը բարձր հեղինակություն է վայելում թեյփի բոլոր անդամների շրջանում: Կանայք ունեն խիստ սահմանափակ իրավունքներ և ենթարկվում են տղամարդկանց: Կանանց և աղջիկների պատիվը խստորեն հսկվում է, իսկ ցանկացած բռնություն խստորեն պատժվում: Բռնի ամուսնությունները, հարսերի առևանգումներն ու կանանց ու աղջիկների սպանություններն իրենց իսկ ընտանիքի անդամների կողմից «ընտանիքը պատվազրկելու» համար հետզհետե ավելի ու ավելի լայն տարածում են ստանում: Ընտանեկան վրեժխնդրությունն ամենակենսունակ սովորույթներից է:

Անվտանգության առումով Պանկիսին, թերևս, ողջ Կովկասում վատթարագույն վիճակում է: Նախկինում ավանդական բարձր ծնելիությունն ու աշխատատեղերի պակասը խթանում էին արտագաղթը դեպի Ռուսաստան, մինչդեռ այսօր այդ հնարավորություններն էապես նվազել են: Օգտվելով այն իրողությունից որ վրացական պետությունը Պանկիսի շրջան մուտք չունի չեչենական առաջին պատերազմից ի վեր, որին մասնակցում էին նաև որոշ երիտասարդ քիստեր, այս տարածքի դաշտավայրում թմրանյութերի ու զինամթերքի առևտրի ցանցեր են ստեղծվել, որոնք սեփական կայաններ ու ճանապարհներ ունեն: Տեղի բնակիչների մեծ մասը զենք ունի, որը թույլ չի տալիս արդյունավետ վերահսկողություն իրականացնել տարածքում և, ավելին, իրականում տեղի բնակչությանը զինաթափելու լուրջ փորձեր չեն էլ կատարվել: Եվ, եթե անգամ քիստական բնակչությունը չի սատարում հանցագործներին, ապա նրանց բարեկամներն անում են ամեն բան, որպեսզի խոչընդոտեն հանցագործների ձերբակալմանը: Արյունալի վրեժխնդրությունների նկատմամբ տածած վախը դժվարին է դարձնում նաև տեղի բնակիչների ու ոստիկանության համագործակցությունը:

1996 թվականին չեչենական առաջին պատերազմի ավարտից հետո Վրաստանի իշխանության և դե ֆակտո անկախ Չեչնիայի ղեկավար Ասլան Մասխադովի վարչակարգի փոխհարաբերությունները բարելավվեցին՝ անկախ Աբխազիայի հակամարտությունում չեչեն մարտիկների ունեցած դերակատարման հանգամանքից[63]: Չեչնիան փորձում էր դուրս գալ Ռուսաստանի կողմից պարտադրված շրջափակումից, և Վրաստանը տրամադրեց վերջինիս ելքի միակ հնարավոր ճանապարհը: Առավել ևս, որ երկու կողմերն էլ դժգոհություններ ունեին Մոսկվայից: Շևարդնաձեի համագործակցության դիմաց Մասխադովն օգնություն առաջարկեց վրացիներին Պանկիսիում ստեղծված լարվածությունը չեզոքացնելու հարցում, որը, սակայն, առանձնապես արդյունաբեր չէր:

Չեչնիայում երկրորդ պատերազմի հետևանքով չեչեն փախստականների մեծ հոսք ուղղվեց դեպի Վրաստան և, մասնավորապես, դեպի Պանկիսի: Ըստ վրացի փախստականների ու հարկադիր գաղթականների նախարարության տվյալների 2000 թվականի մայիսին փախստական չեչենների թիվը կազմում էր 7 148 մարդ, իսկ հոկտեմբերին այդ թվից 1600-ն արդեն վերադարձել էր Չեչնիա: Ռուսաստանը պնդում էր, որ չեչենական և «միջազգային ահաբեկիչները» տեղափոխվում են Պանկիսի քողարկված՝ որպես փախստականներ, և որ այդ կիրճը նրանց ծառայում է որպես վերականգնողական կենտրոն, ինչպես նաև զենք ու զինամթերք հայթայթելու աղբյուր: Թեպետ Վրաստանը կտրականապես հերքում է վերոնշյալ պնդումը, Վրաստանում հավատարմագրված միջազգային դիվանագետները կարծում են, որ Ռուսաստանն այդ պնդումների համար բավարար հիմքեր ունի[64]: Մոսկվան դիմել էր, որպեսզի Վրաստանը սահմանագծի հսկողություն իրականացնելու նպատակով արտոնի ռուսական զորքերի մուտքը Պանկիսի կամ կազմակերպվի համատեղ հսկողություն ռուս-վրացական ոստիկանության ուժերով: Սակայն, երբ Վրաստանը երկու առաջարկն էլ մերժեց, Ռուսաստանը փակեց իր սահմանները Վրաստանի հետ և Ռուսաստան մեկնող վրաց քաղաքացիների համար սահմանեց մուտքի պարտադիր արտոնագրային պայմանակարգ: Իսկ 2001 թվականի աշնանը չեչեն գրոհայինների կողմից ձեռնարկված հարձակումները Աբխազիայի վրա հավաստեցին դաշտավայրում վերջիններիս գոյության վերաբերյալ պնդումների իրավացիությունը[65]: Վրաստանում Միացյալ Նահանգների ժամանակավոր հավատարմատարը փետրվարի 11-ին հայտարարեց, որ Պանկիսի կիրճում կան մի քանի տասնյակ աֆղանացի գրոհայիններ, և որ նրանք կապ են պահպանում Հորդանանում ծնված չեչեն ռազմական հրամանատար Խատաբի հետ, որն իր հերթին կապված է Բեն Լադենի հետ: Ամերիկացի դիվանագետը եզրակացրեց, որ Պանկիսի կիրճը սպառնում է Վրաստանի անվտանգությանը և որ Միացյալ Նահանգները պատրաստ են օգնություն տրամադրելու կիրճում տեղակայված իսլամական գրոհայինների դեմ պայքար մղելու համար:

Տարբեր հավատներ դավանող խմբերի միջև առկա լարվածությունները լրացուցիչ բարդություններ են ստեղծում: Քիստերն ավանդաբար սուննի մուսուլմաններ են: Ծայրահեղական իսլամը Պանկիս ներխուժեց չեչենական առաջին պատերազմի ժամանակ, երբ քիստ կամավորականները կապ հաստատեցին իսլամական գրոհայինների հետ: Այս կապերն առավել ամրապնդվեցին միջպատերազմական ժամանակաշրջանում: Ծինուբանին, որը նախկինում օսեթական գյուղ էր, և ուր վրացական ոստիկանները չեն համարձակվում մտնել, դարձավ ծայ-

րահեղական իսլամի կենտրոնը: Իսկ Աբխազիայում գերված իսլամական գրոհայինները խոստովանեցին, որ Պանկիսում գործում են մարտիկների վարժեցման ճամբարներ[66]:

Պանկիսի քրիստոնյաները նույնպես որոշակի կրոնական փոփոխությունների են ենթարկվում: Բազմաթիվ ուղղափառ քրիստոնյա վրացիներ ու օսեր փոխել են իրենց դավանանքը՝ անսալով բողոքական քարոզիչներին, որոնք զուգակցում են կրոնական քարոզն ու օգնության տրամադրումը, որի չափը կախված է տվյալ անձի աղոթքներին մասնակցության հաճախականությունից[67]: Հիշյալ զարգացումների ազդեցության երկարակեցությունը, սակայն, վիճարկելի է:

1990-ական թվականներին Պանկիսում վատթարացան ազգամիջյան հարաբերությունները: Նախ, Հարավային Օսիայի հակամարտության պատճառով շատ օսեր ստիպված եղան լքել Վրաստանի տարբեր շրջանները, այդ թվում՝ նաև Պանկիսին: Աշխատատեղերի բացակայությունը խթանեց արտագաղթը: Երիտասարդներն ու աշխատունակ մարդիկ լքեցին տարածքը, իսկ մնացյալները, որոնք հիմնականում տարեց քիստեր էին, սկսեցին տեղափոխվել օսերի ամայացած գյուղերը: Այդտեղ մնացած օսեթական բնակչությունը ճնշումների է ենթարկվում քիստերի կողմից, մինչդեռ վրացական ոստիկանությունն  ի զորու չէ հակազդել, հաշվի առնելով նաև հանցագործությունների ահագնացող չափերը: Լարվածությունների սկզբնաղբյուրը դարձավ 1992 թվականին Ռուսաստանում բռնկված ինգուշա-օսեթական հակամարտությունը, քանզի քիստերը էթնիկ սերտ կապեր ունեն ինգուշների հետ: Շատ քիստեր զենք ձեռք բերեցին Չեչնիայի առաջին պատերազմի ժամանակ: Այդ ժամանակվանից կացությունը վատթարացավ, տեղ գտան խոշոր եղջերավոր անասունների առևանգումներ, օսերի, փշավերի ու տուշինների նկատմամբ գործադրվեցին բռնություններ և առևանգվեցին մարդիկ: Օսերը դիմեցին նախ նախագահ Շևարդնաձեին, սակայն, ապարդյուն, ապա Լյուդվիգ Չիբիրովին՝ Հարավային Օսիայի «նախագահին», այնուհետև Հյուսիսային Օսիայի նախագահին: Չիբիրովը Պանկիսի էթնիկ օսերին առաջարկեց տեղափոխվել և բնակություն հաստատել Հարավային Օսիայում:

Պանկիսի օսերը բողոքում են, որ իրավապահ մարմինները գողությունները, ֆիզիկական բռնություններն ու թմրադեղերի վաճառքը կանխելուն միտված քայլեր չեն ձեռնարկում: Տեղի օսեթական և վրացական գյուղերի որոշ բնակիչներ ասում են, որ ստեղծված կացության պատճառով այլևս անհնարին է ապրել իրենց բնակավայրերում: Քիստերը ստիպեցին օսերին լքել Ծինուբանին՝ ավանդական օսեթական գյուղը, և գյուղ ներմուծեցին շարիաթի օրենքները: Այլ տեղերում կացությունն աննշան չափով առավել բարվոք է: Այն մարդիկ,  ովքեր մատնում են ավազակներին, կարող են ենթարկվել մահացու ծեծի: Տեղի են ունենում անտառահատումներ, իսկ կտրված թանկարժեք փայտը արտահանվում է Պանկիսից, բնակիչների աճեցրած բերքը հաճախ թալանվում է: Օսերը վախենում են իրենց երեխաներին դպրոց ուղարկել: Այսպիսով, տեղում շարունակում են ապրել առավելապես թոշակառուները, իսկ երիտասարդները փորձում են հեռանալ տարածքից[68]: Կախեթիայի մոտակա վրացական գյուղերի հետ հարաբերությունները նույնպես լարված են: Կախեթիայի գյուղացիները ստեղծել են ինքնապաշտպանության տեղական խմբեր, պնդելով, որ ստիպված են դիմել այդ քայլին,  քանզի վրացական պետությունն ի զորու չէ ապահովել իրենց անվտանգությունը:

Տեղի բնակիչները կարծում են, որ անվտանգության առումով կացության վատթարացումն ու աճող ազգամիջյան լարվածությունները պայմանավորված են նաև Չեչնիայից փախստականների ներհոսքով[69]: Իսկ փախստականներն էլ իրենց հերթին պնդում են, որ կացության այդօրինակ մեկնաբանումը պարզապես հարմար է տեղացիներին: Այսպիսով, տեղացիների ու փախստականների միջև ստեղծված լարվածությունը հետզհետե աճում է[70]: Լարվածությունը խթանող վատթարագույն գործոնն ըստ Պանկիսի բոլոր բնակիչների տեղական և կենտրոնական իրավապահ մարմինների լիակատար անգործությունն է, քանի որ վերջիններս պարզապես  դադարել են հսկել Պանկիսին:

Անկախության և ծայրահեղ ազգայնականության ժամանակաշրջանի հաստատումից ի վեր բացասական փոփոխությունների է ենթարկվել նաև վերաբերմունքը Կախեթիայի Կվարելի շրջանում բնակվող ավարների հանդեպ : 1989 թվականից ի վեր ավարների վրա ճնշում էր գործադրվում, որպեսզի վերջիններս լքեն տարածքը: Երբ 1990 թ. հունիսին վրացական ռազմականացված ոստիկանական խմբերը շրջապատեցին ավարներով բնակեցված Թիվի գյուղը, ավարները օգնություն հայցեցին Դաղստանի ղեկավարությունից: Որոշում ընդունվեց վերաբնակեցնել Կվարելիի ավարներին Սուխոկումսկում[71]: Գամսախուրդիայի իշխանության տապալումից հետո առկա լարվածությունները հանդարտվեցին, և շատ ավարներ որոշեցին մնալ Վրաստանում, սակայն նրանք շարունակում են իրենց կաշկանդված զգալ անկախ Վրաստանում:

**Մսխեթցիների հայրենադարձությունը**

Մսխեթցի մուսուլմանները կամ մսխեթցի թուրքերը[72] /նրանց մեծամասնությունը  հավաստում է, որ թուրքական ծագում ունի, սակայն, այլոք  կարծում են, որ իրենք վրացական ծագումով մուսուլմաններ են/ Սամցխե-Ջավախեթիայից արտաքսվել էին Կենտրոնական Ասիա 1944 թվականին: 1989 թ. մսխեթցիները վերապրեցին Ուզբեկստանում նրանց դեմ կազմակերպված ջարդը: Խորհրդային բանակայինները նրանց ինքնաթիռներով տեղափոխեցին Ադրբեջան /որտեղ նրանցից ոմանք դարձան Ադրբեջանի քաղաքացիներ/, ինչպես նաև Ուկրաինա ու Հարավային Ռուսաստան, որտեղ մսխեթցիների ներկայությունը ցանկալի չէ ո՛չ տեղի բնակչությանը, ո՛չ էլ շրջանային ղեկավարությանը: Համաձայն 1989 թվականի մարդահամարի տվյալների մսխեթցիների թիվը հասնում էր 207 000 -ի, իսկ ներկայիս թվաքանակը կազմում է 270-320 հազար մարդ: 2001 թվականի տվյալնե-

րով 90-ից 110 հազար մախեթցիներ ապրում են Ադրբեջանում, որտեղ նրանց նկատմամբ իրականացվող տեսական խաղաղականությունն ու դրսևորվող վերաբերմունքն ընդհանուր առմամբ դրական են[73]: Ադրբեջանը, որը չի ցանկանում փչացնել հարաբերությունները Վրաստանի հետ, ընդունում է, որ մախեթցիները կարող են վերադառնալ Վրաստան, սակայն միայն այն դեպքում, եթե Վրաստանը դա ցանկանա[74]:

Մախեթական փոխրամասնության կազմակերպություններից են Վաթանը գրանցված Ռուսաստանում 1994 թվականին, և Հըսնան, գրանցված Վրաստանում 1992 թվականին: Վաթանը հանդես է գալիս հօգուտ մախեթցիների թուրքական ծագման, մինչդեռ Հըսնան միավորում է այն մախեթցիներին, ովքեր հակված են ընդունելու այն տարբերակը, թե մախեթցիները վրացական արմատներ ունեն՝ ցուցափոյք վերադարձի կարելիություն ստեղծելու ակնկալիքով: Վրաց հայրենադարձների միությունն ու Լաքիվշահ Բարասաշվիլիի անվան հիմնադրամը Վրաստանում ստեղծվել են նրանց ուժերով, ովքեր մտահոգ են, որ Հըսնան էական առաջընթացի չի կարող հասնել մախեթցիների վերադարձը Վրաստան ապահովելու գործում[75]:

Վրաստանին 1999 թվականին Եվրախորհրդի անդամ դառնալու համար առաջադրված պայմաններից մեկը տասներկուամյա ժամանակահատվածում մախեթցիների հայրենադարձության ապահովումն էր: 2001 թվականի մարտին մախեթցիների հայրենադարձության ծրագրի օրինագիծը ներկայացվեց ԵԽ-ին: Սակայն, նկատի առնելով, որ վրացիների և հայերի միջև իրական կամ կարծեցյալ էթնիկ բախումներ են տեղի ունեցել մախեթցիների տեղահանումից առաջ[76], առկա է վտանգ, որ վերջիններիս վերադարձը կբախվի ուժային դիմադրության: Շրջանային կառավարությունները սասարում են իրենց շրջանների բնակչությանը, լրատվամիջոցներն էլ արձագանքում են գոյություն ունեցող անհանգստություններին:

1990-ական թվականներին Միգրացիայի Միջազգային Կազմակերպությունը /ՓԻԿ/, Միացյալ Ազգերի Փախստականների գծով գերագույն հանձնաժողովի /ՄԱՓԳՀ/ հետ համատեղ ջանքեր էին գործադրում մախեթցիների վերաբնակեցումը Վրաստանում իրագործելու ուղղությամբ[77]: Բաց հասարակության ինստիտուտի /Սորոսի անվան հիմնադրամ/ կողմից մշակված հարկադիր միգրացիայի ծրագիրը նպատակ ուներ այս կապակցությամբ հավաքագրել խաղաղական հասարակության ողջ ռեսուրսները: Մախեթցիների խնդիրը ուսաղրության կենտրոնում հայտնվեց Հաագայի /սեպտեմբեր 1998/ և Վիեննայի /մարտ 1999/ միջազգային հանդիպումների ընթացքում: Այդուհանդերձ, ընդամենը 650 մախեթցի թուրքեր են մինչ այժմ վերադարձել Վրաստան: Ավելին, 1994- 1997 թվականներին մախեթցիներին վրացական խաղաղացիություն չէր տրվում: Ի հետևանս ԵԱՀԿ-ի ու ՄԱՓԳՀ-ի գործադրած միացյալ ճնշման, ցարդ խաղաղացիություն է շնորհվել միայն հասուկենտ մարդկանց:

Այն մախեթցիները, որոնց հաջողվել է վերադառնալ, իրենց համարում են վրացիներ, ովքեր խլամ են ընդունել թուրքերի ճնշման տակ՝ նրանց կողմից Մախեթիան 1578 թվականին զավթելուց հետո[78]: Վրաստանում նրանց փաջալերում են ընդունել կամ վերականգնել իրենց վրացական ազգանունները[79] : Թբիլիսին պնդում է, որ ազգամիջյան խաղաղությունը պահպանելու համար ավելի նպատակահարմար է մախեթցիներին բնակեցնել Վրաստանի տարբեր շրջաններում, այլ ոչ իրենց հայրենի տարածում:

Հազիվ թե մախեթցիներից շատերն են ցանկանում վերադառնալ հարավային Վրաստանի անհյուրընկալ տարածք, որը կլիմայական ծանր պայմաններ, վարչական թույլ ենթակառուցվածք և կաթվածահար տնտեսություն ունի, որտեղից անգամ տեղի բնակչությունն է ձգտում է արտագաղթել[80]: Մախեթցիներից շատերի վերադառնալու ցանկությունն առավելապես խաղաղական պահանջի արտահայտություն է, այն պահանջի, որը նրանք իրենց պատմական իրավունքն են համարում:

Որոշ մախեթցիներ սկսել են գաղթել Թուրքիա: Վերջինս ֆինանսավորել է 5 000 մախեթցիների վերաբնակեցումը արևելյան Անատոլիայում, սակայն դեմ է հետագա ներգաղթին:

# Փոքրամասնությունները նոր պետություններում

## Փոքրամասնություններ և կրոն

Հետխորհրդային ժամանակաշրջանից ի վեր կրոնը չափազանց կարևոր դերակատարում ունի Կովկասում: Անկախության շրջանի դժվարությունների ու վայրիվերումների պայմաններում կրոնը ստանձնեց ազգային ինքնության հիմնասյան գործառնությունը` հանձնառելով հոգևոր ուղեցույցի դերը և ապահովելով հոգեկան բարեհարմարությունը: Սոցիալական բնագավառում այն հաստատում է մի խմբի ինքնության տարբերությունը մյուս խմբերից, իսկ որոշ դեպքերում օգտագործվում է որպես քաղաքական զենք:

Հարավկովկասյան երեք հանրապետություններում էլ եկեղեցին առանձնացած է պետությունից: Հայերն ու վրացիները մեծամասամբ քրիստոնյա են, իսկ ադրբեջանցիները դավանում են մուսուլմանության շիական ուղղությունը: Այս պետությունները հարգում են նաև ուրիշ ավանդական կրոնների գոյությունն ու ներկայությունը: Ադրբեջանում անարգել գործում է ռուսական ուղղափառ եկեղեցին /1989 թվականին մուսուլմանները կազմում էին երկրի բնակչության 87 տոկոսը, քրիստոնյաները 12 տոկոսը, հրեաները 0,5 տոկոսը, իսկ 1999 թվականին ուղղափառ և առաքելական քրիստոնյաները կազմում էին Ադրբեջանի բնակչության 2 տոկոսից փոքր ինչ ավելին, պաշտոնապես գրանցված հրեաների թիվը կազմում էր 8 900 մարդ կամ 0,1 տոկոս/: Եզդիները Հայաստանում և մուսուլմանական խմբերը Վրաստանում /որոնց թվին են պատկանում օրինակ ադրբեջանցիներն ու չեչենները/ նույնպես կարող են ազատորեն դավանել իրենց կրոնները: Երեք պետություններում էլ կան հրեական փոքրաթիվ կրոնական խմբեր:

Ոչ ավանդական կրոնական փոքրամասնական խմբերը, ինչպիսին են Եհովայի վկաները, բոլոր երեք պետություններում էլ ճնշումների են ենթարկվում և որոշակի պաշտպանություն են գտնում միմիայն այն պատճառով, որ միջազգային հանրությունը ճնշում է գործադրում այդ պետությունների վրա: Հայաստանում Եհովայի վկաները հետապնդվում են պետությունում գործող օրենքների հիման վրա, որը պայմանավորված է Եհովայի վկաների զինվորական ծառայությունից խուսափելով[81]: Վրաստանում Եհովայի վկաները, բապտիստներն ու հիսունականները հաճախ ենթարկվում են կատաղի հարձակումների աջակողմյան ուղղափառների կողմից, որոնք վայելում են տեղական կառավարման մարմինների և ոստիկանության ծածուկ աջակցությունը և որոնց դեմ կառավարությունն անկարող է պայքարել[82]:

1999 թվականի սեպտեմբերին Եվրամիության խորհրդարանական պատվիրակությունը հայտարարությամբ հանդես եկավ, որում դատապարտվում էր կրոնական փոքրամասնությունների, լրագրողների ու հասարակական կազմակերպությունների նկատմամբ բռնությունների գործադրումը և կոչ էր արվում ցուցաբերել կրոնական հանդուրժողականություն: Իսկ մարդու իրավունքների դիտորդական կազմակերպությունը քննադատում էր ԱՄՆ-ի կառավարությանը կրոնական փոքրամասնությունների հարցի նկատմամբ հաստատուն դիրքորոշում չունենալու համար, պնդելով, որ վերջինս այս եղանակով հետամուտ է իր որոշակի ռազմավարական շահերին[83]:

Հայաստանում Եհովայի վկաների հալածանքն առնչվում է զորակոչին և այլընտրանքային զինվորական ծառայության մասին օրենքի բացակայությանը: Ի հետևանս դրա բազմաթիվ Եհովայի վկաներ բանտարկվել են: Ադրբեջանում ևս հանդուրժողականությունը ոչ ավանդական կրոնական խմբերի հանդեպ թույլ հիմքեր ունի: Սակայն, 1999 թվականին ավետարանչական քրիստոնյաների վրա կատարված բազմակի հարձակումներից հետո նախագահ Ալիևը հանդես եկավ հայտարարությամբ, որով երկրի քաղաքացիներին ավելի լայնախոհ կրոնական հանդուրժողականության ցուցաբերելու կոչ հղեց, որի հետևանքով կառավարությունը պաշտոնապես գրանցեց Եհովայի վկաներին 1999 թ. դեկտեմբերին:

Ռուս քրիստոնյա փոքրամասնությունները, ինչպիսին են դուխոբորներն ու մոլոկանները, որոնք փախուստ էին դիմել ցարական Ռուսաստանից կրոնական հետապնդումների պատճառով և բնակություն էին հաստատել հեռավոր Կովկասում, ճնշման են ենթարկվում տարածաշրջանից նրանց դուրս մղելու նպատակով, թեև պետությունները նրանց արտաքսելու հստակ քաղաքականություն չեն վարում: Այս ճնշումների հետ կապված բողոքները մեծամասամբ առնչվում են այն հարցին, որ տեղացիները տեղափոխվում են փոքրամասնություններով բնակեցված գյուղերը` ոտնձգություններ կատարելով կանանց և երեխաների նկատմամբ, իսկ ոստիկանությունը քայլեր չի ձեռնարկում, որպեսզի կանխի այդ գործողությունները: Նմանօրինակ զարգացումների հետևանքով, օրինակ Ջավախեթիայում, ընդամենը 800 դուխոբորներ են մնացել, մինչդեռ տասը տարի առաջ նրանց համայնքի թիվը հասնում էր 3 500-ի:

Մեծամասամբ մահմեդական Ադրբեջանում գոյություն ունեն նախաիսլամական ժամանակաշրջանի գերիշխող կրոնը հանդիսացող զրադաշտականություն դա-

վանող խմբեր: Մարգարե Զարատուստրան, որը ենթադրաբար ծնվել է մ.թ.ա. 7-րդ դարում, ներկայիս Ադրբեջանի տարածքում հիմնել էր մի կրոն, որը ենթադրում էր աշխարհի երկվությունը արտահայտված գերագույն աստծո ու չար ոգու տիեզերական պայքարի մեջ: Իսլամի հաղթանակից հետո շատ զրադաշտականներ փախան Հնդկաստան և մինչ Խորհրդային Միության փլուզումը սովորաբար ուխտագնացության էին գալիս Ադրբեջան Ապշերոնյան թերակղզու սուրբ վայրերում պաշտամունքի ծես կատարելու համար: Ադրբեջանում հանդուրժողաբար են վերաբերում զրադաշտականություն դավանողներին: Զրադաշտական կրոնին պատկանողներ կան նաև Հայաստանում:

## Պետական քաղաքականություն

Հարավկովկասյան երեք հանրապետությունների տնտեսական ծանր կացությունը, իշխանության լծակները օգտագործելու հնարավորությունների և փոքրամասնությունների հանդեպ դիրքորոշման տարբերությունների փոխկապակցվածությունը շատ կարևոր գործոն է փոքրամասնություններին վերաբերվող զարգացումները գնահատելու համար: Երկրների շրջանները ընդհանուր առմամբ հետ են մնում մայրաքաղաքներից տնտեսական բարեկեցության առումով, գազա- և էլեկտրամատակարարումը, ճանապարհները ու ենթակառուցվածքները ցածր մակարդակի վրա են: Փոքրամասնության ներկայացուցիչները սովորաբար բնակվում են հեռավոր շրջաններում, այդ պատճառով նրանք գտնվում են ամենից ծանր վիճակում: Նրանք պարբերաբար պարտություն են կրում ֆինանսավորում և ռեսուրսներ ստանալու ծանր պայքարում, զիջելով մյուս խմբերին, որոնք առավել կազմակերպված լոբբիստական ուժ են ներկայացնում, ավելի լավ են ներկայացված մայրաքաղաքներում և վայելում են կառավարող վարչակարգի բարեհաճությունը: Իրերի այսպիսի դրությունը իրականում շատ ավելի զորեղ է, քան օրենքի տառը, մասնավորապես նկատի առնելով, որ օրենքի նկատմամբ տածած հարգանքը այնքան էլ մեծ չէ:

Փոքրամասնությունները բնակչության այնպիսի փոքրաթիվ մասն են կազմում Հայաստանում, որ նրանց ներկայությունը իշխանությունների կողմից անտեսվում է, մանավանդ, որ իրականում իշխանություններին ավելի շատ անհանգստացնում են տնտեսական խնդիրները և Ղարաբաղյան հարցը: Հայաստանի թվով ամենամեծ փոքրամասնական խումբը՝ եզդիները, հաճախ չի ներգրավվում քաղաքական որոշումներ կայացնելու գործընթացներում, ինչպես նաև զրկվում է իր ինքնությունը պահպանելու հնարավորություններից: Փոքրամասնություններին տեղ տալու խորհրդային շրջանում վարվող քաղաքականությունը, ինչպես նաև հասարակական կյանքում և կրթական բնագավառում նրանց մասնակցության ապահովումն արդեն անցյալում են, իսկ դրանք նոր եղանակներով փոխարինելու քաղաքականություն չի մշակվել: Դա էլ անհանգստության հիմք է տալիս եզդիներին: Այսպես օրինակ, հայկական նոր անձնագրերում ազգությունը չնշելու հանգամանքը եզդիներին աստիճանական ձուլման մտավախություն է պատճառում: Պետական իշխանությունները նաև ձեռնպահ մնացին քուրդ-եզդիական ինքնության բաժանվածության խնդրին գործնական լուծում տալուց, այսինքն չսահմանեցին, թե արդյոք վերջիններս երկու տարբեր խմբեր են, թե ոչ: Ակնկալվում է, որ երբ հրապարակվեն վերջին /2001-ի հոկտեմբերին անցկացված/ մարդահամարի տվյալները, այս իրավիճակի մեջ պարզություն կմտցվի:

Տարածաշրջանում ռուսական փոքրամասնությունը նույնպես պետական հովանավորություն չի վայելում, և ռուսաց լեզուն աստիճանաբար դուրս է մղվում տարածաշրջանից, իսկ ռուսական դպրոցները փակվում են: Ռուսաստանի կառավարության գործնական աջակցությունը բավարար չէ Հարավային Կովկասում ռուսաց լեզվուն ու մշակույթը պահպանելու համար:

Դժվարին խնդիր է ներկայացնել փոքրամասնությունների նկատմամբ Վրաստանում իրականացվող պետական քաղաքականությունը: Պետական իշխանությունը չի տարածվում ողջ երկրի վրա: Մինչդեռ հենց այդ թույլ կառավարվող տարածքներում են ապրում երկրի փոքրամասնությունները: Եվ, քանի որ այդ տարածքները կենտրոնից հեռու են, թույլ զարգացած և տնտեսական գրավչությունից զուրկ, իշխանությունները ներդրումներ կատարելու կամ պետական աջակցություն հասկացնելու առանձնապես միտված չեն: Ադրբեջանում պետությունը, ունենալով իշխանական ամուր լծակներ և հետևելով Խորհրդային Միության օրինակին, ավելի հետևողական քաղաքականություն է վարում փոքրամասնությունների հանդեպ:

## Սահմանադրական քայլեր

Ադրբեջանի Հանրապետության սահմանադրությունը ենթադրում է միացյալ պետական կառուցվածք, մերժելով որևէ ինքնավար իրավունքներ երկրի փոքրամասնությունների համար, ինպես նաև բացառելով որևէ պայման Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ, եթե վերջինս վերամիավորվի Ադրբեջանին: Սա էր պատճառը, որ 1990-ական թվականներին լեզգիների կողմից բարձրացված քաղաքական և մշակութային ինքնավարության պահանջները որևէ իրավական լուծում չստացան: Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները նշանակվում են կենտրոնի կողմից, միևնույն ժամանակ նախագահ Ալիևը անձամբ ուշադիր հետևում է փոքրամասնություններով բնակեցված տարածքների վարչական մարմիններում կատարվող նշանակումներին: Եվ այն դեպքում, երբ նախագահի վարչակազմում և խորհրդարանում կազմավորված են տարբեր ազգությունների հարցերով հանձնաժողովներ, փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող կարևորագույն քաղաքական մարմինը շարունակում է մնալ պետական անվտանգության նախարարությունը:

Վրաստանի Սահմանադրությունը որևէ կերպ չի անդ-

րադառնում երկրում հնարավոր դաշնային համակարգի ստեղծման հարցին: Մինչև աբխազական ու հարավօսեթական հակամարտությունների կարգավորումն այդ հարցն առկախ է մնում: Այս հանգամանքը անորոշություն է ստեղծում: Դաշնային համակարգի գաղափարը ժողովրդականություն չի վայելում, քանի որ վրաց մեծամասնության տեսանկյունից Աբխազիայի, Հարավային Օսիայի ու Աջարիայի ինքնավար կարգավիճակն էր, որ բերեց նրանց փաստացի անջատմանը երկրից: Եվ, անշուշտ, այս համատեքստում Ջավախքի հայերի կողմից ներկայացվող ինքնավարության պահանջները բացասականորեն են ընկալվում: Տեղական իշխանությունները նույնպես նշանակվում են Թբիլիսիի կողմից, սակայն տեղական ուժերի պայքարը կարևոր դեր ունի այն հարցում, թե նրանցից ում են ականջալուր մայրաքաղաքում: Տեղական ընտրությունները, որոնք կարող էին բարձրացնել փոքրամասնությունների ներկայացուցչությունը, նախատեսված էր անցկացնել 2001 թվականի աշնանը, սակայն ընտրությունները հետաձգվեցին բյուջետային խնդիրների առկայության պատճառաբանությամբ, մինչդեռ գլխավոր պատճառներից մեկն, ամենայն հավանականությամբ, 2001 թ. աշնանը իշխանական օղակներում տիրող խառնաշփոթ իրավիճակն էր:

## Լեզուն և քաղաքացիական ինտեգրացիան

Փոքրամասնություններով բնակեցված տարածքներում Վրաստանի կառավարությունը հիմնականում անփոփոխ է թողել դեռևս Խորհրդային ժամանակաշրջանից ժառանգած կրթական համակարգը: Այն առաջին հերթին ենթադրում է փոքրամասնությունների լեզուներով տարրական և միջնակարգ կրթություն ստանալու հնարավորություն: Բացի այդ, որոշակի աջակցություն է ստանում նաև տեղական բարձրագույն հաստատություններում փոքրամասնությունների լեզուներով կրթություն ստանալու հնարավորություն ընձեռելու խնդիրը, որի օրինակներից են ուսուցիչների վերապատրաստման քոլեջները: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ լեզվի միջոցով քաղաքացիական ինտեգրացիան ապահովելու նոր պահանջները համարժեք լուծում չեն ստացել: Տեղերում պետության կողմից չեն կազմակերպվել վրացերենի դասընթացներ փաքրամասնությունների համար: Այսպիսով, վրացերեն սովորել ցանկացող անձինք զրկված են այդ հնարավորությունից[84]: Ներկայումս փոքրամասնությունների ներկայացուցիչներին դժվար է հասկանալ վրացական օրենքները, քանի որ վերջիններս հրապարակվում են միայն վրացերեն լեզվով և երբեմն թարգմանվում անգլերեն լեզվով: Եվ, քանի որ փոքրամասնությունները սովորաբար այդ լեզուներից ոչ մեկին չեն տիրապետում, նրանց հասարակական կազմակերպությունները Արևմուտքի ֆինանսավորմամբ նախաձեռնել են վրացական օրենսդրությունն անգլերենից ռուսերեն թարգմանելու գործը: Սակայն, թարգմանության ընթացքում անխուսափելիորեն տեղ գտնող անճշտությունները բերում են խառնաշփոթի: Արդ, Վրաստանի քաղաքացիական ինտեգրացիայի հարցերով խորհրդարանական հանձնաժողովը մտադիր է թարգմանել վրացական օրենքների հիմնական փաթեթը հիմնական փոքրամասնությունների լեզուներով[85]: Պետական լեզվի մասին օրենքի նախագիծն արդեն պատրաստ է: Ավելին, 2001 թվականի սկզբներին Շևարդնաձեի հանձնարարությամբ ավելի ակտիվ ընթացք էր ստացել փոքրամասնություններով բնակեցված տարածքներում վրացերեն լեզվի պարտադիր դասավանդումը: Սակայն, անցյալում տեղ գտած նմանօրինակ նախաձեռնությունները հիմնականում այդպես էլ մնացել են դեկլարատիվ մակարդակի վրա:

Փոքրամասնությունների ներկայացուցիչների վրացերենի թույլ իմացությունն առնչվում է նաև այնպիսի խնդրի հետ, ինչպիսին է վարչական մարմիններում ներգրավվելու խնդիրը: Քաղաքացիական ծառայողների քննություններն անցկացվում են վրացերեն լեզվով, թեպետ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ժամկետները փոքր-ինչ հետաձգվել են: Սակայն, քիչ հավանական է, որ տեղական կառավարման մարմինների ներկայացուցիչները կարողանան կատարել այդ պահանջները: Մյուս դժվարությունն այն է, որ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում դատավորների պաշտոնում նշանակվում են միայն այն անձինք, որոնք տիրապետում են վրացերեն լեզվին: Դատավարություններն ընթանում են թարգմանիչների միջոցով, և տեղացիները մշտապես բողոքում են անարդար վճիռների կայացման դեմ:

Եվ, քանի որ ռուսերեն լեզուն չի ստանում պետական աջակցություն, փոքրամասնությունների երիտասարդ սերունդները հակված են խոսելու միայն իրենց մայրենի լեզվով: եթե այս միտումը զարգանա, ապա փոքրամասնությունները շուտով հնարավորություն չեն ունենա շփվելու մնացած բնակչության հետ:

Այն, որ փոքրամասնությունները վրացերեն լեզվին վատ են տիրապետում, խոչընդոտում է նաև նրանց մասնակցությունը կրթական և մշակութային գործընթացներին՝ դրանք անմատչելի դարձնելով վերջիններիս համար: Ռուսերեն լեզվով հրապարակումները սովորաբար ապահովում էին միջմշակութային հարաբերությունները զարգացնելու համար անհրաժեշտ դաշտը, սակայն այդպիսի հրապարակումների թիվը կտրուկ կրճատվել է: Ռուսերեն լեզվով հրապարակումները լույս են տեսնում միայն որոշ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ, ինչպիսին, օրինակ, Կովկասյան տունն է, որը միաժամանակ իրականացնում է կովկասյան այլ լեզուների դասավանդումը: Բարձրագույն կրթությունը նույնպես վրացերեն լեզվով է կազմակերպված և, այդպիսով, անհասանելի է մայրաքաղաքից դուրս ապրող փոքրամասնությունների համար: Այս ամենը հանգեցնում է նրան, որ փոքրամասնությունների երիտասարդ ներկայացուցիչները գերադասում են բարձրագույն կրթույթունը ստանալ կամ իրենց պատմական հայրենիքում կամ էլ Ռուսաստանում: Բացի այդ, փոքրամասնությունները երկրում տեղ գտնող զարգացումների վերաբերյալ իրազեկվելու չափազանց սահմանափակ

հնարավորություններ ունեն: Վրացերենի վատ իմացության հետևանքով նրանք զրկված են հեռուստատեսության կամ ռադիոյի միջոցով տեղեկացվելու հնարավորությունից, և, թեև գործում է ռուսերեն լեզվով վրացական հեռուստաալիք, հեռարձակման վատ որակն ու հաճախակի հովհարային անջատումները զգալիորեն նվազեցնում են վերջինիս արդյունավետությունը: Վրացական ռադիոն նույնպես գրեթե չի սփռվում երկրի հեռավոր շրջաններում: Վերոնշյալը նպաստում է այն զգացողության ամրապնդմանը, որ փոքրամասնությունների ներգրավումը վրացական պետության կազմում լոկ պատմության անսպասելի դիպված էր:

Աբխազիայի Գալի շրջանում, որը սահմանակից է Վրաստանին, կրթության հարցը շարունակում է ցավոտ խնդիր մնալ: Թեպետ աբխազերենը հայտարարված է երկրի պետական լեզու, Գալիի բնակչության մեծ մասը վրացիներ են և խոսում են միայն վրացերեն լեզվով, ինչն ինքնին ենթադրում է, որ միջնակարգ կրթությունը պետք է իրականացվի այդ լեզվով: Ինչ-որ չափով կրթական գործընթացն այդպես էլ կազմակերպվում է, քանի որ այստեղ դեռևս մասամբ պահպանվել է խորհրդային կրթական համակարգը: Այդուամենայնիվ, աբխազներն այն կարծիքի են, որ աբխազերենը պետք է հիմնական լեզու դառնա: Մյուսները պնդում են, որ Աբխազիայի վրաց փոքրամասնությանը պետք է մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունք վերապահվի:

Ադրբեջանում, ի տարբերություն Վրաստանի, դեռևս խորհրդային ժամանակներից փոքրամասնությունները գերազանց տիրապետում էին ադրբեջաներենին: Ռուսերենը նույնպես բավականին լայն գործածություն ունի Բաքվում և վայելում է պետության ուշադրությունը: Շրջաններում, սակայն, իրավիճակը փոխվում է: Խնդիրն այն է, թե ինչպե՞ս հետագայում պահպանել փոքրամասնությունների լեզուն ու մշակույթը: Անցումը լատինական գրին ըստ նախագահ Ալիևի 2001 թվականի սեպտեմբերի 1-ի հրամանի, որը պետք է մոտեցներ ադրբեջաներենը թուրքական այբուբենին, փոքրամասնությունների անհանգստությունը հարուցեց: Լատինական այբուբենին անցումը չի ընդունվում նաև ադրբեջանցիների մեծ մասի կողմից:

## Ճնշումներ և հասարակական վերաբերմունք

Վրաստանում էթնիկ փոքրամասնությունների հանդեպ պաշտոնապես հովանավորվող ճնշման քաղաքականություն չի վարվում: Amnesty International /Միջազգային Ամնիստիա/ կազմակերպությունը զեկուցել է ոստիկանության կողմից էթնիկ ադրբեջանցիներին ծեծի ու տանջանքի ենթարկելու դեպքերի մասին երկրի Բոլնիսսի շրջանում[86]: Սակայն նույն կազմակերպությունը զեկուցել է նաև բնիկ վրացիների դեմ ուղղված նույնօրինակ գործողությունների մասին, այնպես որ, վերոնշյալ դեպքերն ավելի շուտ երևան են բերում երկրում մարդու իրավունքների առումով տիրող ընդհանուր կացությունը, քան թե ազդարարում կոնկրետ փոքրամասնությունների նման վերաբերմունքի թիրախ հանդիսանալու իրողությունը: Քաղաքական ներկայացվածությունը, սակայն, առավել խնդրահարույց է: Հայերը Վրաստանի 235 անդամներից բաղկացած խորհրդարանում ունեն ընդամենը չորս ներկայացուցիչ, իսկ ադրբեջանցիները՝ վեց: Հարկ է նշել, որ փոքրամասնությունների ներկայացուցիչներից բոլորը չէ, որ տիրապետում են վրացերեն լեզվին, այնպես որ, դեռևս պարզ չէ, թե նրանք ինչպե՞ս են մասնակցում խորհրդարանի աշխատանքներին[87]:

Թերևս, ավելի մեծ անհանգստության տեղիք է տալիս հասարակության վերաբերմունքը փոքրամասնությունների նկատմամբ: Սուր բանավեճեր են ընթանում այն հարցի շուրջ, թե արդյո՞ք հարկ է վրացական փաստաթղթերում գրանցել ազգային պատկանելությունը: Իշխանության ներկայացուցիչների կարծիքով ազգային պատկանելության նշումը կարող է երկպառակության հիմք դառնալ: Գրանցման կողմնակից էթնիկ վրացիները պնդում են, որ ազգային պատկանելության չնշելը վտանգավոր է այն առումով, որ վրացիներն այդ դեպքում կարող են արագորեն կորցնել իրենց յուրահատուկ ինքնությունը և քանակապես զիջել այն խմբերին, որոնց ծնելիությունը բարձր ցուցանիշներ ունի:

Փոքրամասնությունների դիրքորոշումը հետևյալն է. նրանք առանձնապես չեն ցանկանում փոխել իրենց ինքնավարությունների ստատու քվոն: Սակայն, նրանք չեն ցանկանում նաև, որպեսզի Թբիլիսիի քաղաքականությունը վճռորոշ դեր ունենա իրենց կյանքում, լինի դա ռազմակայաններից ռուսական զորքերի դուրսբերումը, Ռուսաստանի հետ պարտադիր արտոնագրային պայմանակարգի կիրարկումը, կամ վրացական պետության հատկանիշների հարկադիր կիրառումն իրենց շրջաններում: Կենտրոնական ղեկավարությունն անհանգստացած է փոքրամասնությունների վրացերեն սովորելու, ինչպես նաև վրացական դրամանիշն օգտագործելու կամ վրացի քաղաքացիների հետ ինտեգրվելու ցանկության բացակայությամբ: Փոքրամասնությունները դժգոհում են, որ պետությունն անուշադրության է մատնել շրջանները, չի վճարում թոշակներն ու աշխատավարձերը, չի ապահովում կրթության ու առողջապահության բնականոն պայմաններ և չի ձեռնարկում վրացերեն լեզուն սովորելու հնարավորություն ապահովող միջոցներ: Մի խոսքով, երկու կողմերն էլ չեն կատարում իրենց սոցիալական պարտավորությունները:

Ադրբեջանում պետությունն իրական կամ կարծեցյալ անջատողականներին ձերբակալում և դատական պատասխանատվության է ենթարկում: Օրինակ, թալիշներն ու լեզգիները երկարաժամկետ ազատազրկման են ենթարկվում իրենց կողմից իրականացված «ահաբեկչական գործունեության» համար: Վերոնշյալի վկայություններից են 1993 թ. Բաքվի մետրոպոլիտենի պայթյունը, որի կազմակերպման համար մեղադրվեցին լեզգի անջատողականները, ինչպես նաև 1993 թ. ռուս սահմանապահների վրա հարձակումները, որոնք կազմակերպվել էին «Լեզգի ժողովրդի իմամի» և նրա աջա-

կիցների կողմից, որոնք և ազատագրման դատապարտվեցին երկուսից տասնհինգ տարի ժամկետով: 1996-97 թվականների դատավարության ընթացքում մեղադրյալները խոստովանեցին որ Ադրբեջան են եկել ռուս սահմանապահ զորքերի վրա հարձակումների կազմակերպման համար ավարների, ադրբեջանցիների, լեզգիների և այլ էթնիկ խմբերի աջակցությունը ստանալու մտադրությամբ՝ նպատակ ունենալով այդօրինակ գործողություններով անջատել Դաղստանը Ռուսաստանի Դաշնությունից: Վերոնշյալ գործողությունների կազմակերպման համար Ադրբեջանի ղեկավարությունն առանց լուրջ հիմքեր ունենալու մեղադրեց գաղտնի գործող լեզգիական «Սադվալ» ազգային ազատագրական կազմակերպությանը[88]:

Սադվալ կազմակերպությանը հրապարակավ իր տեսակետը հայտնելու հնարավորության չընձեռելը, վերջինիս կարծեցյալ կապը հայաստանյան անվտանգության ծառայությունների հետ և ընդհանրապես 1994 թվականի ռմբակոծման գործի դատավարության ընթացքում տեղեկատվության պակասը հանգեցրեցին այն բանին, որ հասարակության մեջ «Սադվալի» նկատմամբ բացասական կարծիք ձևավորվեց: Որոշ իրավապաշտպանների կարծիքով պետությունը ճիշտ էր վարվել՝ դատապարտելով «Սադվալի» մեղադրվող անդամներին[89]: Պետությունը ճնշում է նաև հասարակական ընդվզումները: Այդպես եղավ, օրինակ, 2000 թ. նոյեմբերին Շեքիում, որտեղ և փոքրամասնությունների և մեծամասնության ներկայացուցիչները ոստիկանության կողմից բռնությունների ենթարկվեցին: Մյուս կողմից, շատ լեզգիներ ապրում են հենց Բաքվում ու բավականին բարձր պաշտոններ զբաղեցնում քաղաքացիական ծառայության ոլորտում, բանակում և խորհրդարանում: Ալիևի վարչակարգը վստահեցնում է, որ կայունություն պահպանելու մտահոգությամբ, ապահովել է փոքրամասնությունների, ինչպես նաև կանանց համամասնական ներկայացվածությունը պետական ծառայության ոլորտում: Պետությունը ֆինանսական և քաղաքական աջակցություն է ցուցաբերում պաշտոնապես ճանաչված փոքրամասնությունների կազմակերպություններին, որոնցից է, ասենք, Սամուրի լեզգիական ազգային կենտրոնը: Ի տարբերություն Ադրբեջանի Վրաստանում բոլոր բարձր պաշտոններում նշանակվում են էթնիկ վրացիները, և բոլոր վարչական նշանակումները, մասնավորապես իրավապահ մարմիններում, կատարվում են էթնիկ պատկանելիության հաշվանիշով:

## Միջազգային ու տեղական նախաձեռնություններ

Հարավային Կովկասը միջազգային բազմաթիվ կազմակերպությունների, արևմտյան պետությունների և միջազգային հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավման բեմահարթակ է: Վերջիններս ցանկանում են Հարավային Կովկասում ընթացող բարեփոխությունները ուղղորդել դեպի ազատ շուկայական տնտեսության կազմավորումն ու ազատական, լիովին ինքնուրույն ժողովրդավարության հաստատումը: Սակայն, նույնիսկ միջազգային կազմակերպությունների ընդգրկուն մասնակցության հանգամանքում փոքրամասնություններին հասցեագրված նախաձեռնությունները սակավաթիվ են:

ՄԱԿ-ն ու նրա կազմակերպությունները հիմնականում կենտրոնացան գոյություն ունեցող հակամարտությունների լուծման և զարգացման խոչընդոտների հաղթահարման վրա: ՄԱԿ-ն իր կամավորների օգնությամբ նախաձեռնեց Վրաստանի փոքրամասնություններով բնակեցված տարածքների, ինչպես օրինակ, Ջավախքի, համայնքային զարգացման ծրագրեր: Միգրացիայի Միջազգային Կազմակերպությունը և ՄԱԿ-ի Փախստականների գծով բարձրագույն հանձնակատարը 1990-ական թվականներին իրենց ջանքերը նպատակաուղղեցին թուրք-մսխեթցիների հայրենադարձման խնդրի լուծմանը, որը, սակայն, էական արդյունքներ չտվեց:

ԵԱՀԿ-ն ու Եվրոպայի Խորհուրդը /ԵԽ/ երկու այն կարևորագույն կազմակերպություններն են, որոնք տարածաշրջանում աշխատում են փոքրամասնությունների հանդեպ միջազգային չափանիշերին համապատասխանող վերաբերմունք ձևավորելու ուղղությամբ: Փոքրամասնությունների պաշտպանության գործում ԵԽ-ի հիմնական միջազգային գործիքները Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին կանոնադրությունն ու Ազգային փոքրամասնությունների պահպանման շրջանակային կոնվենցիան /ԱՓՊՇԿ/ են, որոնք ուժի մեջ են մտել 1998 թվականին: ԵԱՀԿ-ը փոքրամասնությունների խնդիրները ուղղորդում է դեպի այսպես կոչված «հումանիտար հարթության» ոլորտ, որտեղ պետք է իրականացվեն քաղաքական այնպիսի պարտավորություններ, ինչպիսիք են մարդու իրավունքների, ժողովրդավարական կառույցների գործունեության և օրենքի գերակայության ապահովմանը միտված քայլերը: ԵԱՀԿ-ի ազգային փոքրամասնությունների գծով գերագույն հանձնակատարը, որը ԵԱՀԿ-ի շրջանակներում զբաղվում է փոքրամասնություններին առնչվող խնդիրներով, հատկապես շեշտադրում է հակամարտությունների կանխարգելման անհրաժեշտությունը:

### Եվրոպայի Խորհուրդ

Եվրախորհուրդը Վրաստանն ընդունեց իր կազմում 1999 թվականին, երբ վերջինս ստորագրեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: Այս իրողությունը, սակայն, էական բարելավում չբերեց: Համաձայն Մարդու իրավունքների դիտորդական կազմակերպության 2001 թվականի համաշխարհային զեկույցի «Վրաստանում մարդու իրավունքների առանց այդ էլ վատթար կացությունն էլ ավելի է վատթարացել»[90]: Տեղի իրավապաշտպանները ևս պնդում են, որ կացությունն, իրոք, վատթարացել է, քանզի մինչ Եվրախորհրդին անդամակցելը երկրի ղեկավարությունն առավել զգոն էր միջազգային հանրության կարծիքի նկատմամբ: Իսկ եվրոպա-

կան այդ կառույցին Վրաստանի անդամակցությունից հետո վերացավ հետագա բարեփոխումներ իրականացնելու այդ խթանը ևս: Միևնույն ժամանակ, տեղական հասարակական կազմակերպությունները նույնպես առանձնապես ակտիվ չեն ԵԽ-ի չափանիշները իրավախախտումների դեմ օգտագործելու հարցում և ԵԽ-ն չեն դիտարկում որպես մի գործիք, որի միջոցով հնարավոր է բարեփոխել տվյալ բնագավառը:

ԵԽ-ն պնդել էր, որպեսզի Վրաստանը, որպես անդամակցության նախապայման օրենք ընդունի ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև թուրք-մսխեթցիների հայրենադարձության վերաբերյալ: Մինչդեռ, Վրաստանի խորհրդարանի քաղաքացիական ինտեգրացիայի հարցերով հանձնաժողովի կարծիքով այդպիսի օրենքի ընդունումն անիմաստ է այն պատճառով, որ գործնականում անհնարին է առանձնացնել այն փոքրամասնություններին, որոնք պետք է պաշտպանություն վայելեն[91]: Հանձնաժողովի կարծիքով փոքրամասնությունների մասին հստակ օրենքի ընդունումը կապահովի միայն հավաք բնակություն հաստատած փոքրամասնություններին և չի պաշտպանի նրանց, ովքեր բնակվում են խառը բնակչությամբ վայրերում: Հանձնաժողովն առհասարակ կասկածի տակ է առնում մարդու իրավունքների ներկայացված օրենսդրության կիրարկման անհրաժեշտությունը:

Հայաստանն ու Ադրբեջանը դարձան ԵԽ-ի անդամ միաժամանակ՝ 2001-ի հունվարին, և թեև երկու երկրներում էլ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ցուցանիշները ցածր են, Ադրբեջանի կառավարությունն ավելի փոքր առաջընթաց է գրանցել վերոնշյալ բնագավառում, քան Հայաստանը: Առկա կացության արձագանքը ԵԽ Խորհրդարանական Վեհաժողովի կողմից երկու երկրներին նրանց անդամակցությունից հետո ներկայացված պահանջների երկար ցանկն է, որը ներառում է նաև ազգային փոքրամասնությունների վերաբերյալ օրենքի ընդունումը[92]:

Հայաստանում քաղաքացիական հասարակությունը ներկայացնող խմբերն առավել պատրաստակամ են միջազգային կազմակերպությունների հետ ԵԽ-ի անդամակցությունը որպես երկրի ղեկավարության վրա ճնշում գործադրելու միջոց համագործակցելու խնդրում[93]:

## ԵԱՀԿ

Վրաստանում ԵԱՀԿ-ի առաքելությունը հիմնվեց 1992-ի նոյեմբերին: Ներկայումս այն իր 62 անդամներից բաղկացած միջազգային աշխատակազմով ԵԱՀԿ-ի խոշորագույն ներկայացուցչությունն է Կովկասում: Առաքելությունը գործունեություն է ծավալել երեք ուղղություններով[94].

- Հարավային Օսիայում հակամարտությունների վերսկսման կանխում համատեղ խաղաղարար ուժերի միջոցով, քաղաքական բանակցությունների կայացմանը ցուցաբերվող աջակցություն և հակամարտության կողմերի միջև վստահության մթնոլորտի ձավորում.

- «հումանիտար հարթության» մակարդակում գործընթացների զարգացման խթանում ողջ Վրաստանում, այդ թվում՝ մարդու իրավունքների և փոքրամասնությունների իրավունքների առնչվող կացության դիտարկում, որի օրինակներից մեկը ԵԱՀԿ-ի կողմից Սամցխե-Ջավախքի հիմնահարցի առնչությամբ մշակված վաղ կանխարգելման ծրագիրն է.

- Չեչնիայի ու Ինգուշեթիայի հատվածում ռուս-վրացական սահմանագծի դիտարկում:

Քանզի Վրաստանը ԵԽ անդամ պետություն է՝ ԵԱՀԿ առաքելությունը ստիպված է Վրաստանի ղեկավարության հետ համաձայնեցնել ձեռնարկվող քայլերը: Եվ, հաշվի առնելով, որ երկարաժամկետ առաքելությունների իրականացման համար անհրաժեշտ է ստանալ ընդունող երկրի քաղաքական համաձայնությունը, այդ քայլերը սովորաբար ավելի շուտ գործընկերային, քան թելադրող բնույթ ունեն: Այս հանգամանքը հաճախ թույլ չի տալիս առաքելությանը տարբնույթ խնդիրների առնչությամբ հանդես գալ հասարակության դիրքերից: Այդ պատճառով փոքրամասնությունների ներկայացուցիչների շրջանում կարծիք է ձևավորվում, թե ԵԱՀԿ-ն երկրի ղեկավարության տեսակետի արտահայտիչն է: Այսպես օրինակ, նշվել է, որ ԵԱՀԿ-ն բացեիբաց չդատապարտեց երկրի նախագահական ու խորհրդարանական ընտրություններում տեղ գտած զանգվածային խախտումները, և անտեսելով կառավարության կողմից կատարված ընտրախախտումները, շարունակեց օգնություն տրամադրել պետությանը[95]: ԵԱՀԿ-ի նկատմամբ ձևավորված այս կարծիքն, անշուշտ, լիովին արդարամիտ չէ, քանզի, ընդունելով ընտրությունների վերջնական արդյունքները, վերջինս իր մտահոգությունը հայտնեց տեղ գտած ընտրախախտումների կապակցությամբ և ոչ հրապարակավ, սակայն, ճնշում գործադրեց Վրաստանի կառավարության վրա: Այդուհանդերձ, ԵԱՀԿ-ի ավելի կոշտ դիրքորոշում ընդունելու անկարողությունը վնասեց կազմակերպության նկարագրին:

ԵԱՀԿ-ի Բաքվի ու Երևանի գրասենյակների գործունեությունն ավելի նեղ շրջանակներ ունի և հիմնականում նպատակաուղղված է տվյալ երկրներում ԵԱՀԿ-ի սկզբունքների իրականացմանը: Վերոնշյալ գրասենյակների գործունեության ոլորտներն են ընտրական գործընթացների օրինականության դիտարկումը, կապերի ու փոխանակումների ապահովումը, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտում հասարակության զգոնության բարձրացմանը և էթնիկ ու կրոնական խմբերի հանդեպ հանդուրժողական մթնոլորտի ձևավորմանը միտված աջակցությունը: ԵԱՀԿ-ի կողմից Ղարաբաղյան հակամարտության հարցերով անմիջական պատասխանատուն ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչն է, իսկ հակամարտության խնդիրներով անմիջականորեն զբաղվում է ԵԱՀԿ-ի կողմից ստեղծված Մինսկի խումբը, որը գործող նախագահի անձնական ներ-

կայացուցչի ընդունած որոշումների անմիջական իրագործողն է: Մինսկի խումբը, որի պաշտոնական նստավայրը չեզոքության պահպանման նկատառումներով տեղակայված է Թբիլիսիում, գրասենյակներ ունի նաև Երևանում, Բաքվում ու Ստեփանակերտում:

Հարավային Կովկասում տեղի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող տարբեր խմբերի հետ մեկտեղ աշխատում են նաև Արևմուտքի դոնոր երկրների կողմից ֆինանսավորվող բազմաթիվ միջազգային հասարակական կազմակերպություններ:

### Եզրակացություններ

Մարդու իրավունքների ոլորտում ընդունված չափանիշների պահպանման մակարդակի բարձրացմանը միտված միջազգային կազմակերպությունների գործունեությունը առավել դրական արձագանքի արժանացավ Հայաստանում, և, որոշ չափով, Ադրբեջանում, քանի որ այս երկրների կառավարությունները ավելի զգայուն են միջազգային կարծիքի նկատմամբ: Նույնը, սակայն, չի կարելի ասել Վրաստանի վերաբերյալ: Անկախությունից հետո տարածաշրջանի երկրների ընդհանուր զարգացումը չի համապատասխանում ակնկալիքներին, և միջազգային կազմակերպությունները արդեն երկմտում են, թե արդյո՞ք կովկասյան հասարակությունների հետ կապված իրենց հույսերը արդարացված էին: Վերջերս Կարմիր Խաչի Միջազգային Ֆեդերացիայի Վրաստանից հեռանալու փաստը, որը որևէ երկրում իր նախադեպը չունեցած իրողություն է, վերոնշյալ տրամադրությունների նախանշանն է[96]: Իսկ ԵԽ վրաստանյան գրասենյակի աշխատակցի դաժան սպանությունը 2001 թ. դեկտեմբերին պարզապես ցնցեց Կովկասում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին:

## Նավթ և օգնություն

Բացի միջազգային կազմակերպությունների կողմից դրսևորված հետաքրքրությունից Արևմուտքի սկզբնական շահագրգռվածությունը Կովկասի տարածքով պայմանավորված էր երկու գործոնով՝ հայկական հզոր սփյուռքի առկայությամբ և Ռուսաստանի նեոիմպերիալիստական ձգտումներով: ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունը դարձավ այն խոշորագույն դոնորը, որը 1992-2000 թվականների ընթացքում Հայաստանին տրամադրեց ընդհանուր առմամբ 1,3 միլիարդ ԱՄՆ դոլարի օգնություն: Սփյուռքի աղբյուրները նույնպես մեծ օգնություն են տրամադրել Հայաստանին: Դրա օրինակներից է 1988-ի դեկտեմբերին Սպիտակի երկրաշարժից հետո տնտեսական ու ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման համար հատկացված օժանդակությունը, Հայաստանը Ղարաբաղի հետ կապող ավտոմայրուղու կառուցումն ու մշակույթի վերածնունդն ապահովելուն միտված միջոցառումները: Ի հակառակն՝ ԱՄՆ-ի օժանդակությունը Ադրբեջանին սահմանափակվել է ԱՄՆ Կոնգրեսի Ազատության աջակցման ակտի 907 /ա/ բանաձևով, որն արգելում է այլ երկրներին շրջափակման ենթարկող վարչակարգերին օգնություն տրամադրել: 2002 թվականին, ի պատասխան «ահաբեկչության դեմ պատերազմում» Ադրբեջանի ցուցաբերած աջակցությանը, ԱՄՆ Կոնգրեսը կասեցրեց վերոնշյալ բանաձևի գործողությունը:

Վրաստանի և Ադրբեջանի ղեկավարները հմտորեն օգտագործեցին Արևմուտքի հակաիմպերիալիստական տրամադրությունները: Կասպից ծովի ռեսուրսները Ադրբեջանի համար հաղթաթղթի դեր խաղացին: Իսկ Վրաստանն օգտագործեց Արևմուտքի և Ռուսաստանի միջև առկա հակասությունները ներկայանալով որպես Արևմուտքի դաշնակից, որի միջոցով հետամտում էր Ռուսաստանի վերահսկողությունից ձերբազատվելու նպատակը: Այդ քաղաքականությունն արգասաբեր հետևանքներ ունեցավ. 1992- 2001 թվականների ընթացքում ԱՄՆ-ի բյուջեից 986 միլիոն դոլարի օգնություն է տրամադրվել Վրաստանին, որի հետևանքով ԱՄՆ-ից օգնությունը ստացող եվրասիական 12 երկրների շարքում Վրաստանն, արդ, տրամադրված օգնության ծավալների չափով գրավում է չորրորդ տեղը: Բացի այդ, նույն ժամանակահատվածում ԱՄՆ կառավարությունն ավելի քան 334 միլիոն դոլարի մարդասիրական օգնություն տրամադրեց Վրաստանին[97]: Եվրամիությունը տարեկան 30 միլիոն եվրո օգնություն է տրամադրում տարածաշրջանին, ինչպես նաև զիջում վարկային պարտավորությունները ու այլ դոնորների հետ համատեղ տեխնիկական օժանդակություն տրամադրում[98]: Սակայն տրամադրվող օգնության արդյունքները այնքան էլ հուսադրող չեն: Զարգացումը խթանելու փոխարեն տրամադրվող օգնությունն իրականում հանգեցրեց տարածաշրջանի կախվածությանը օգնող կողմերից: Ավելին, սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո իրադրությունը փոխվեց, և Ռուսաստանը դարձավ Արևմուտքի դաշնակիցը: Մոսկվայի այն պնդումները, թե Վրաստանի անտարբերությունը «միջազգային ահաբեկչությանը» զարգացման հնարավորություն է ընձեռել /իր տարածքում/, արդեն ավելի համոզիչ հնչեցին, և ԱՄՆ-ն առավել լրջությամբ սկսեց վերաբերել Պանկիսի կիրճում զինված խմբերի առկայությանը ու նրանց կողմից զենքի օգտագործման խնդրին:

Արևմուտքի հետաքրքրությունը Կովկասի նկատմամբ պայմանավորված է նաև Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսներով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Կասպից ծովի հինգ առափնյա երկրները՝ Ադրբեջանը, Իրանը, Ղազախստանը, Ռուսաստանն ու Թուրքմենստանը, տարբեր նախաձեռնություններով հանդես եկան՝ նպատակ ունենալով ներդրողներ գրավել ավազանի նավթի ու բնական գազի պաշարների հետազոտման ու շահագործման համար և մրցակցության մեջ մտան միմյանց հետ՝ Կասպից ծովի ափամերձ պաշարներին տիրանալու համար: Կասպից ծովի էներգետիկ պաշարները, անշուշտ, կարևորություն ունեն տարածաշրջանի նորանկախ երկրների համար, սակայն, համաշխարհային ծավալների կտրվածքով էական նշանակություն չունեն: Կասպից ծովը կարող է մատակարարել համաշխարհային նավթի մոտ երեք

տոկոսը /տեղի ընդհանուր պաշարները կազմում են մոտ 17 միլիարդ բարել, գրեթե այնքան, որքան Հյուսիսային ծովի պաշարները/: Կան բավականին իրատեսական հաշվարկներ, որոնց համաձայն ևս քսան միլիարդ բարել նավթ պարունակվում է Կասպից ծովի նավթահանքերում: Ըստ մասնագետների Կասպից ծովի նավթը ռազմավարական նշանակություն ունի ավելի շուտ Եվրոպական Միության, և մասնավորապես՝ Հարավային Եվրոպայի երկրների, քան ԱՄՆ-ի համար[99]:

Անկախությունից ի վեր Կասպից ծովի պաշարների խնդիրն ուղեկցվում էր լարվածություններով ու տարաձայնություններով, որի հետևանքով ձգձգվում էր դրանց շահագործումը: Վիճահարույց երեք պատճառներն են. նոր նավթատարերի ուղղությունները, Կասպից ծովի իրավական բաժանումն ու գործարարության մթնոլորտը:

Հարավային Կասպից գործող և ծրագրվող հիմնական նավթամուղներն են.

- Բաքու /Ադրբեջան/ -Նովոռոսիյսկ /Ռուսաստան/: Նավթատարը շահագործվում է Ադրբեջանի միջազգային կառավարման ձեռնարկության /ԱՄԿՁ/ կողմից, որը նավթ է արտահանում Ադրբեջանից: Նավթատարին անօրինական միացումները և Չեչնիայում տիրող անկայունությունը 1990-ականների կեսերին ստիպեց Ռուսաստանին կառուցել շրջանցիկ նավթատար, որն անցնում է Դաղստանի տարածքով:

– Բաքու-Սուպսա /Վրաստան/ «վաղ նավթի» նավթատարը, որը նույնպես շահագործվում է ԱՄԿՁ-ի կողմից, ողջ հզորությամբ սկսեց աշխատել 1999 թ. մարտից և դարձավ Կասպից ծովից եկող առաջին, ոչ Ռուսաստանի տարածքով անցնող նավթուղին:

– Աթիրաու /Ղազախստան/ - Նովոռոսիյսկի կասպյան նավթատարի կոնսորցիումի ուղին, որն առավելապես Ռուսաստանի տարածքով է անցնում, վերջնական շահագործման է հանձնվել 2001 թվականի ամռանը:

– Բաքու-Ջեյհան /Միջերկրական ծովի ափին, Թուրքիա/ նավթատարը, որի՝ որպես արտահանման հիմնական նավթուղու, շահագործման վերաբերյալ համաձայնություն է կայացել Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի և ԱՄՆ-ի կառավարությունների միջև 1999-ի նոյեմբերին Ստամբուլում ստորագրված համաձայնագրով: Այս 1 730 կիլոմետր երկարությամբ նավթատարն անցնելու է Վրաստանի տարածքով: Նավթատարի այդ ուղղության ընդունմանն աջակցել է ԱՄՆ-ն: 1990 թ. Ռուսաստանը դեմ էր այդ նավթատարի կառուցմանը, սակայն 2001 թվականին դադարեց դիմակայել:

Վերը նշված խնդիրներից երկրորդը Կասպից ծովի իրավական բաժանման խնդիրն է, որը կարող է անորոշ ժամանակով խոչընդոտել վիճահարույց նավթահորերի շահագործումը: Հինգ առափնյա երկրները դեռևս համաձայնության չեն եկել պաշարների բաժանման բոլորի կողմերի համար ընդունելի տարբերակի շուրջ:

Թեպետ գործարարական մթնոլորտը բավականին բարելավվել է, որոշակի անընդունելի ռիսկային գործոններ դեռևս պահպանվում են: Ավելին, Կասպիական ավազանի ենթակառուցվածքում գոյություն ունեն լուրջ բացթողումներ, որոնք շտկելու համար զգալի ֆինանսական ներդրումներ են պահանջվում. Առայժմ առկա են դժվարություններ ավանդաբար ֆինանսական միջոցներ տրամադրող աղբյուրների, ինչպես, ասենք, մասնավոր բանկերի ներդրումները ներգրավելու հարցում: Կասպից ավազանի տարածաշրջանում ստեղծված որոշակի քաղաքական լարվածության նվազմանը կարող է նպաստել Համաշխարհային Բանկի ջանքերով տրամադրված դրամական օժանդակությունը:

Հարավային Կովկասում գործող միջազգային հասարակական կազմակերպությունները հիմնականում շեշտը դրեցին հակամարտությունների լուծման վրա, և միայն մի քանիսն իրենց գործունեությունը կենտրոնացրեցին փոքրամասնությունների խնդիրների վրա: Այդ թվում էին Բաց հասարակության ինստիտուտի հարկադիր միգրացիայի ծրագրերը, որոնց նպատակն էր ապահովել թուրք-մեսխեթցիների հայրենադարձությունը: Լեզգիական համայնքի կացությունն ուսումնասիրելու համար «Միջազգային տագնապ» կազմակերպությունը հետազոտական առաքելություն գործուղեց Ադրբեջան: Ներկայումս այն իրականացնում է «Վրաստանի շրջաններ» ծրագիրը, որի մեջ ներառված է նաև Սամցխե-Ջավախքի շրջանը: Իսկ Արագ կանխարգելման և արագ արձագանքման ֆորումը /ԱԿԱԱՖ/ զեկույցներ է պատրաստում տարածաշրջանում տեղ գտած տագնապահարույց պատահարների մասին: Տեղացի գործիչները նույնպես ներգրավված են փոքրամասնությունների հարցերով իրականացվող աշխատանքներում, որոնցից է, օրինակ, «Բազմազգ Վրաստան» /Մնոգոնացիոնալնայա Գրուզիա/ հասարակական կազմակերպությունը, կամ Երիտասարդ իրավաբանների ընկերակցությունը, որը մասնաճյուղեր ունի Վրաստանի շրջանների մեծ մասում և նպատակ ունի նպաստել օրենքի գերակայության հաստատմանն ու բարձրացնել քաղաքացիների մասնակցությունը քաղաքական գործընթացներին: Թբիլիսիում գործող «Կոկըսըս Հաուզը» /Կովկասյան Տուն/ բազմալեզու կրթության խթանմանը նպաստող գործունեություն է ծավալել և աջակցում է փոքրամասնությունների լեզուներով հրատարակումների լույս ընծայմանը:

Որոշ վրացական հասարակական կազմակերպություններ ակտիվորեն հանդես եկան 1999 թ. Վրաստանում ազգայնականության վերելքի դեմ, որի համար առիթ դարձավ վրացական նոր անձնագրերում ազգային պատկանելության գրանցման հարցը: Վրաստանի Քաղաքացիական կացության մասին օրենքի նախագծով առաջարկվում էր վերացնել ազգային պատկանելության գրանցումը նոր անձնագրերում /այն սկսել էին նշել խորհրդային անձնագրերում/, թողնելով միայն քաղաքացիությունը /Վրաստանի քաղաքացիություն Վրաստանի բոլոր քաղաքացիների համար/: Սույն առաջարկը բողոքներ հարուցեց: Օրենքի նախագծի հակառակորդները պնդում էին, որ այդ քայլը կբերի վրացիների ձուլմանը այլ խմբերի հետ, քանզի վրացիների շրջանում ծնելիության ցուցանիշն ավելի ցածր է և պահանջում էին,

որպեսզի ազգային պատկանելությունը պարտադիր կարգով գրանցվի անձնագրերում: Հասարակական կազմակերպությունները դաշն կազմեցին հանրության կարծիքը օրենքի հակառակորդների դեմ ուղղորդելու նպատակով և հասարակական արշավ սկսեցին: Վեճերն այնքան թեժացան, որ նախագահ Շևարդնաձեն ստիպված եղավ միջամտել: Վերջնական որոշումը հետաձգվեց, և օրենքն ուժի մեջ չմտավ: Ներկայումս ազգային պատկանելությունը գրանցվում է ծննդյան վկայականներում, իսկ անձը հավաստող այլ փաստաթղթում չի նշվում:

Ադրբեջանում Մարդու իրավունքների կենտրոնն ուշադրությամբ հետևում է լեզգիների կացությանը և հրատարակում «Լեզգիական Նորություններ» էլեկտրոնային թերթը: Խաղաղության և ժողովրդավարության ինստիտուտը /Բաքու/ Ադրբեջանի փոքրամասնությունների հիմնահարցերի ուսումնասիրություններ է կատարում[100]:

# Վերջաբան

Կորցնելով խորհրդային իշխանության ընդգծված հովանավորությունն ու հայտնվելով մեծամասնություններին դեմ առ դեմ՝ Հարավային Կովկասի փոքրամասնությունները դարձան անկախության ժամանակաշրջանում տեղ գտած փոփոխությունների ամենաանմիջական տուժողները։ Փոքրամասնությունները կարծես դուրս մնացին միջազգային հանրության ուշադրությունից, քանզի Վրաստանի ու Ադրբեջանի կառավարությունները չէին ողջունում արտաքին միջամտությունը՝ վախենալով էթնիկ պահանջների սրումից։ Միևնույն ժամանակ, տեղի ունեցած բախումներից հետո տարածաշրջանի իշխանություններին հաջողվեց հավասարակշռություն պահպանել, որի շնորհիվ ազգամիջյան լարվածությունները նոր բախումների չբերեցին։ Վրաստանում պետությունը մինչ այժմ չի կարողացել բազմազանության պահպանմանը միտված քաղաքականություն մշակել։ Միևնույն ժամանակ, պետական իշխանությունը չափազանց թույլ է ծրագրված ձուլման կամ կենտրոնաձիգ քաղաքականություն իրականացնելու համար։ Նշված գործոնների առկայության հետևանքով որոշ փոքրամասնություններ հնարավորություն ստացան փաստացի ինքնավարություն ձեռք բերել։ Ինչևէ, ապագան անորոշ է և մեծավ չափով կախված իշխանության փոփոխությունից և գալիք ղեկավարներից։

Ինչ վերաբերում է չլուծված հակամարտություններին, ապա աբխազները, օսերն ու ղարաբաղցիները Վրաստանին կամ Ադրբեջանին միանալու նվազն ցանկություն իսկ չունեն։ Շատ դժվար է համոզել այդ տարածքների ղեկավարներին ու բնակչությանը, թե այդ ճանապարհով կարելի է որևէ արդյունքի հասնել, մասնավորապես հաշվի առնելով Վրաստանում տիրող տնտեսական և սոցիալական խառնաշփոթը և Ադրբեջանի շրջաններում տիրող աղքատությունը։ Տարածված կարծիքը կա, որ նախկին պետություններին միանալու դեպքում անջատվողականները ավելի շատ բան կկորցնեն, այն է իրենց անվտանգությունն ու գերակայող քաղաքական դիրքը։ Ավելին, ոչ վրացական, ոչ էլ ադրբեջանական բանակը մոտ ապագայում լուրջ ռազմական վտանգ չեն կարող ներկայացնել։ Այսպիսով, անկարող լինելով հաշտվել իրենց տարածքների կորստյան հետ, Վրաստանն ու Ադրբեջանը միևնույն ժամանակ հնարավորություն չունեն անջատված տարածքները միացնել իրենց ո՛չ խաղաղ, ո՛չ էլ ռազմական ճանապարհով։ Ամենայն հավանականությամբ, ներկայիս ստատուս քվոն կպահպանվի, սակայն պահպանումը ևս որոշակի վտանգ է պարունակում։ Նախ, սահմանամերձ գոտիներում շարունակական բնույթ կրող փոքրածավալ բռնությունները կարող են վերաճել լուրջ մարտերի։ Երկրորդ, Վրաստանում և Ադրբեջանում քաղաքական իշխանափոխության համար ծավալված պայքարը կարող է չլուծված հակամարտությունները քաղաքական շահարկումների թիրախ դարձնել։

Ապագա վայրիվերումների հնարավորությունը միայն ենթադրելի է։ Մի կողմից, հասարակության տրամադրությունները Հարավային Կովկասում միտված են սոցիալական անտարբերության ձևավորմանը, քանզի տնտեսական ու սոցիալական կյանքի կտրուկ վատթարացումը հանգեցրել է այն բանին, որ ի տես քաոսային իրավիճակի խորացման հարմարվողական միտումներ են ձևավորվում։ Օրենքի և կարգուկանոնի բացակայությունը բերել է անձնական անապահովության զգացողության ձևավորմանը, որը ստվերում է ավելի լայնաբնույթ քաղաքական խնդիրները։ Տարածաշրջանում արմատացել է հասարակության կրավորականությունը։

Մյուս կողմից, խորանում է սոցիալական լարվածությունը, իսկ ընդվզումներն ավելի հաճախակի են դառնում։ Հյուսիսային Ադրբեջանում տեղ գտած բռնությունները և 2001 թ. մայիսին վրացական բանակում տեղի ունեցած խռովությունները, որոնց հիմքը սոցիալական ու տնտեսական զրկանքներն էին, ազդանշանում են, որ հետագայում հավանական բախումներն առավել սոցիալական, քան ազգամիջյան ուղղվածություն կունենան։

# Առաջարկություններ

1. Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի կառավարությունները պետք է ապահովեն և մատչելի դարձնեն փոքրամասնությունների մասնակցությունը իրենց երկրների քաղաքական, սոցիալական ու տնտեսական կյանքին՝ միջազգային նորմերին համապատասխան: Կառավարման և վարչական համակարգերը պետք է այնպիսի կառուցվածք ունենան, որը կապահովի փոքրամասնությունների ու կանանց մասնակցությունը որոշումների ընդունմանն ու իրագործմանը: Օրենսդրական գործընթացներում պետք է հատուկ դեր արտոնվի փոքրամասնությունների ներկայացուցիչներին կամ փոքրամասնությունների ներկայացուցչական կառույցներին, ինչպես օրինակ, օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու, նախնական լսումների կազմակերպման և փոքրամասնություններին վերաբերող որևէ օրինագծի դեպքում հատուկ քվեարկության իրավունքի վերապահումը:

2. Օգտակար կարող է լինել Հարավային Կովկասին Արևմուտքի ցուցաբերած օժանդակության ուսումնասիրության և գնահատման կազմակերպումը և արդյունքների մասին առաջատար հասարակական կազմակերպություններին իրազեկումը: Այդպիսի նախաձեռնությունը կխթանի տեղի քաղաքացիական հասարակության ակտիվությունը: Կառավարական գործակալությունները, դոնորները ու հասարակական կազմակերպությունները, որոնք ֆինանսավորում են տարբեր մակարդակի սոցիալական ծառայությունների զարգացմանը նպատակաուղղված նախաձեռնությունները, պետք է երաշխավորեն, որ այդ ծրագրերում ներառված են փոքրամասնությունների խնդիրները, այդ թվում՝ կայունության ապահովման համար անհրաժեշտ դիտարկումն ու գնահատումը: Վերջիններս պետք է ամենայն կերպ աջակցեն բոլոր խմբերին ու ժողովրդներին և այդ խմբերին պատկանող կանանց, ծերերին, հաշմանդամներին ու երեխաներին:

3. Տեղացի ու միջազգային գործիչները պետք է գործունեություն ծավալեն հանդուրժողականության ու փոխադարձ հարգանքի մթնոլորտ ձևավորելու ուղղությամբ: Պետություններից առավել մեծ ջանքեր են պահանջվում ծայրահեղ ազգայնական դրսևորումները դատապարտելու, ինչպես նաև դրական միտումները քաջալերելու ուղղությամբ: Հասարակական կազմակերպությունները պետք է զբաղվեն փոքրամասնություններին առնչվող խնդիրների ավելի լայն շրջանակով: Կառավարությունները պետք է միջմշակութային-ուսուցողական արդյունավետ միջոցառումներ իրականացնեն և մշակեն մշակութային - լեզվական համապատասխան ուսումնական ծրագրեր, որոնք բոլոր էթնիկ խմբերին թույլ կտան պատկերացում կազմել իրենց բազմամշակութային հասարակության մասին և ըմբռնել, որ հասարակությունը ընդհանուր արժեքներ է կրում, սակայն այդ արժեքները կարող են զարգանալ միայն ժողովրդավարական մթնոլորտում ձևավորվող փոխհարաբերությունների առկայության դեպքում:

4. Սոցիալական և մշակութային տարբերությունների ճանաչումը պետք է դիտարկվի որպես դրական, այլ ոչ բացասական միտում: Այն ինստիտուտները, որոնք նպատակ ունեն խրախուսելու ու զարգացնելու փոքրամասնությունների մշակութային ժառանգությունը, պետք է աջակցություն ստանան ու քաջալերվեն: Դոնորների ու միջկառավարական կազմակերպությունների յուրաքանչյուր գործողությանը պետք է ներկայացնի հետևյալ պահանջը՝ փաստարկել, որ այն բացասական ներգործություն չի ունենա մշակութային և լեզվական բազմազանության վրա: Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի կառավարությունները պետք է քայլեր ձեռնարկեն լեզվական ու մշակութային բազմազանությունը պահպանելու ուղղությամբ: Միջազգային հանրությունը պետք է աջակցի կառավարություններին այնպիսի անկախ կառույցների զարգացման գործում, ինչպիսիք են փոքրամասնությունների իրավապաշտպան կազմակերպությունները, որոնք ունակ են արտակարգ իրավիճակներում հանգուցալուծման առաքելություն ստանձնել, ինչպես նաև պայմաններ ստեղծել երկխոսության ու խորհրդատվության հաստատման համար:

5. Վրաց-հայկական հարաբերությունները կտրուկ վատթարանում են: Հարկ է անհապաղ միջոցներ ձեռնարկել աճող լարվածությունը մեղմելու և խնդիրների լուծմանը միտված քայլեր ձեռնարկելու ուղղությամբ:

6. Կովկասում ծայրահեղական իսլամի խնդրին վերաբերյալ վստահարժան ուսումնասիրություն գրեթե չի կատարվել, մինչդեռ հարցը լայնորեն շահարկվում է: Օգտակար կլիներ աջակցել այդօրինակ ուսումնասիրության անցկացմանը, որն առավել ճշգրիտ պատկերացում կտա խնդրի վերաբերյալ՝ վերացնելով տարածված և վնասաբեր կաղապարապատկերացումները: Իսկ իսլամատյացությունը պետք է արմատախիլ արվի բոլոր մակարդակներում Մ° դպրոցներում և° լրատվամիջոցներում:

7. Քանի որ թուրք մեսխեթցիների վերադարձը Վրաստան գրեթե անհավանական է, ավելի ճիշտ կլինի կենտրոնացնել միջազգային ջանքերը նրանց բարեկեցությունը ներկայիս բնակության երկրներում ապահովելու վրա:

8. Չափազանց կարևոr է միջոցներ ձեռնարկել ադրբեջանական ու հայկական հասարակությունների միջև վստահության ձևավորման ուղղությամբ: Մասնավորապես, պեsf է հնարավորինս կոնկրետացնել հետագա fաղաfական ծրագրերի բովանդակությունը: Չի բացառվում, nr խնդիրը ժողովրդի ավելի լայն շերsերի հետ առավել թափանցիկ եղանակով fննարկելու ժամանակն է:

Փոfրամասնությունների իրավունfների միջազգային խումբը /ՓԻԽ/ ողջունում է Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի կառավարությունների ներգրավումը մարդասիրական ու մարդու իրավունfների մի շարf միջազգային կազմակերպություններում, ինչպես նաև այդ երկրների Սահմանադրություններում միջազգային չափանիշների կիրարկումը: ՓԻԽ-ը կոչ է անում այդ երկրների կառավարություններին անհապաղ fայլեր ձեռնարկել մարդու իրավունfների ազգային և միջազգային ընդունված չափանիշները կիրառելու ուղղությամբ: Այդ չափանիշների խախտումների համար առաջին հերթին պատասխանատվություն պեsf է կրեն կառավարությունները, անվտանգության ծառայությունները, ինչպես նաև ոչ պետական հատվածի ներկայացուցիչները: Կառավարությունները նաև պեsf է fայլեր ձեռնարկեն 1992 թվականին ՄԱԿ-ի կողմից ընդունված Փոfրամասնությունների մասին հռչակագրի պահանջները կատարելու ուղղությամբ: Իսկ միջազգային հանրությունը պեsf է հավաստարապես դիտարկի այդ միջոցառումների իրականացումը բոլոր երկրներում և հավաստիանա, nr իրականացումը բոլոր պետություններում համապատասխանել է միջազգային չափանիշներին:

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1 Կենտրոնական հետախուզական գործակալություն /ԿՀԳ/, *Համաշխարհային փաստերի գիրք. Հայաստան* [http://www.cia.gov/cia/publications/factbook/geos]

2 ԿՀԳ, *Համաշխարհային փաստերի գիրք, Վրաստան* [http://www.cia.gov/cia/publications/factbook/geos]

3 Քերթիս Գ. Է. եւ Սանի Ռ.Ձ., *«Հայաստան», Հայաստան, Ադրբեջան և Վրաստան. երկրների ուսումնասիրություն*, խմբ. Գ.Է.Քերթիս, Լենհեմ, Մերիլենդ, Բերնան, մայիս 1995 թ., էջ 1-38:

4 Ռեդգեյթ, Ա.Ե. «*Հայերը*», Բլէքվել, 1998. Այլ աղբյուրները որոշես կրոնափոխության տարեթիվ նշում են մ.թ. 310 թվականը:

5 Հայոց ցեղասպանության վերաբերյալ այլընտրանքային կարծիքները, տես՝ Թուրք-ամերիկյան ընկերակցությունների համագումարի ինտերնետային էջում [www.ataa.org/ataa/ref Ս.Ջ. Շոու և Ե. Շոու, *Օսմանյան կայսրության և ժամանակակից Թուրքիայի պատմություն*, հատ. 2 Թուրքկայա Աքայով, *«Հայերն առանց դիմակի»*, / Բրիտանական զեկույց, 1895 թ./, Ձ. Մաք Քարթի, *«Անատոլիա -1915. Թուրքերը նույնպես զոհվել են»*, Բոստոն Գլոբ, *25* ապրիլի 1998 թ.

6 Նիֆոլ, Ջ., *«Ադրբեջան»*, Քերթիսի նշվ. աշխ., էջ. 79-111

7 Ուաքսոն, Ե., *«Վրացիներ» և առանձին* հոդվածներ աջարացիների, լազերի, մեսխեթցիների եւ սվանների վերաբերյալ, Համաշխարհային մշակույթների հանրագիտարան, հատ. 6, ԽՍՀՄ, 1993թ.

8 Հյուիթ, Ջ., /Ե.Ուաքսոնի հետ համատեղ/, *«Աբխազները»*, Համաշխարհային մշակույթների հանրագիտարան, հատ. 6, ԽՍՀՄ, 1993 թ., էջ. 5-10: Աբխազների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տես՝ «*Աբխազներ»* ուղեցույցը ( Ջ. Հյուիթի խմբագրությամբ), Լոնդոն, Քառզոն Պռես, 1998 թ.

9 Այլընտրանքային կարծիքի համար տես՝ Պ. Մագդաշյան, *«Հայաստան. տնտեսական պառակտումը խորանում է»,* Համաշխարհային խաղաղության զեկույցների ինստիտուտ , կովկասյան ծառայություն, N 106, նոյեմբեր, 2001թ.

10 Հեղինակի հարցազրույցները մարդու իրավունքների պաշտպանության խմբերի հետ Բաքվում, սեպտեմբեր, 2001թ.

11 Տես, օրինակ՝ *« Ո՞վ կարող է երաշխավորել խաղաղական կայունությունը Վրաստանում »,* ՌԱԵ/ԱՌ/ *հետազոտական զեկույց, հատ. 4, N 42, 20 դեկտեմբերին, 2001 թ.*

12 Քինգ Կ., «Պոտյոմկինական ժողովրդավարություն. 4 առասպել հետխորհրդային Վրաստանի մասին», Նէյշընլ Ինթերեսթ, 2001 թ. ամառ

13 Իրադարձությունների ժամանակագրության վերաբերյալ տես *«Վրաստանի նախագահը փորձում է կարգավորել խառը»,* ՌԱԵ/ԱՌ, հետազոտական զեկույց, հատ. 4, N 37, 7 նոյեմբերի, 2001թ.

14 Դեվդարիանի, Ջ., *«Վրաստան. Վրաստանի քաղաքացիների միությունը /ՎՔՄ/ անհույս պառակտված է»,* ՊԽՋԻ, Կովկասյան զեկույցների ծառայություն, N 104, 6 նոյեմբերի 2001թ.

15 Երկանյան, Ա. *«Անկարան մեղմում է Հայաստանի շրջափակումը»,ՀԽՋԻ* , Կովկասյան ծառայություն, N 18, 11 փետրվարի 2000 թ.

16 Իրանի քաղաքականության և նպատակների ավելի կոշտ մեկնաբանությունը տես՝ Նիսման, Դ., *«Իրանը եւ Անդրկովկասը»* [http://ourworld.compuserve.com/homepages/usazerb/223.htm]

17 Հակամարտության խնդիրների վերլուծությունը տես՝ Հերձիգ, Ե., «*Նոր Կովկասը. Հայաստան, Ադրբեջան և Վրաստան»,* Լոնդոն, 1999 թ.

18 Նույն տեղում:

19 Գնահատականները բխում են Ռուսաստանի Պետդումայի Պաշտպանության հարցերով կոմիտեի լսումներից, Նովիչկով, Ն., Ջէյնս Դիֆենս Ուիկլի, 027/015, 16 ապրիլի1997թ., հաստատված են սվյալ գործով զբաղվող՝ Ռուսաստանի զինվորական դատախազության աշխատակցի կողմից հեղինակի հետ քննարկման ընթացքում, դեկտեմբեր 2001 թ., Մոսկվա

20 Հերձիգ, նշվ. աշխ.

21 *«Հայաստան և Ադրբեջան. խաչմերուկներ Ղարաբաղո՞ւմ», Դը Էքոնոմիստ,* 21-7, ապրիլ, 2001 թ., էջ. 49

22 Բանակցությունների վերաբերյալ ավելի մանրամասն տես՝ *«Բանակցություններ Լեռնային Ղարաբաղի շուրջ. դեպի ու՞ր ենք գնում»,* Հարվարդի Համալսարան, Ջ.Ֆ. Քենեդիի անվան կառավարման համալսարան, կաստիական ուսումնասիրությունների ծրագիր, 23 ապրիլի 2001թ.

23 Վաալ, Տ. դե *«Հատելով սահմանը. Մտորումներ Լեռնային Ղարաբաղի խաղաղ գործընթացի շուրջ»,* հաշտության ռեսուրսները, պրակտիկ նշումներ 3

24 Օրինակ, Ադրբեջանի ազատական կուսակցության առաջնորդ Լալա-Շովկեթ Գաջիևան ասել է, որ Ադրբեջանի նախագահի ընտրվելու դեպքում անձամբ կղեկավարի ռազմական գործողությունները Ղարաբաղյան նոր պատերազմում. Տես՝ Ֆուլեր, Լ., ՌԱԵ/ԱՌ, *կովկասյան զեկույց, 21 դեկտեմբերի 2001թ.* [http://rferl.org/caucasus-report]

25 Մասվենա, Ա., *«Վրաստան. խաղաղությունն անհրաժեշտ է մնում էթնիկ խճանկարում», «Փնտրելով խաղաղություն Եվրոպայում և Եվրասիայում». հակամարտության կանխման և խաղաղության հաստատման գործողությունների տեսություն (* Պ. վան Տոնգերեն, Հ. վան դե Վին

Ջ. Վերհովենի խմբագրությամբ), Բոլդեր, Կոլորադո, Լին Ռայներ Փաբլիշերս, 2002 թ.

26 Երկուստէ մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տես՝ Մարդու իրավունքների դիտարկում, *Վրաստան/Աբխազիա. «Պատերազմական օրենքների խախտումը եւ Ռուսաստանի դերը հակամարտության հարցում»,* հատ. 7, N 7 [http://www.hrw.org/reports/1995/Georgia2.htm]

27 Դա լայնորեն քննարկվում է, տես՝ Ուոլքեր, Ն., *«Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն Կովկասում. անջատողական հակամարտությունները Չեչնիայում, Աբխազիայում և Լեռնային Ղարաբաղում»,* ժողովրդավարական հաստատությունների հզորեցման նախագիծ, Հարվարդի համալսարան, Ջ. Ֆ.Քենեդիի անվան կառավարման համալսարան, Քեմբրիջ, Մասաչուսեթս, փետրվար 1998 թ.

28 *«Ի՞նչ կանխատեսումներ ունի Աբխազիան Ռուսաստանի հետ իր ապագա հարաբերությունների վերաբերյալ»,* Ռադիո Ազատ Եվրոպա /Ազատություն ռադիոկայան, կովկասյան զեկույց, 29 հոկտեմբերի 2001թ. հատ. 4, N 36

29 Տես Հերձիգ, նշվ. աշխ.

30 ՌԱԵ/ԱՌ, Նյուսլայն, 2 հուլիսի 2001թ.

31 Ըստ Վրաստանի դաշտոնյաների *«Աբխազիա/Վրաստան. նոր պատերազմական գործողությունները կործանում են խաղաղության հեռանկարները»,* ՌԱԵ/ԱՌ, Նյուսլայն, 27 մայիսի 1998 թ., Պրագա

32 Ցխովրեբաշվիլի, Տ., *«Ռուսաստանը թուլացնում է աբխազական լարվածությունը»,* ՀԽԶԻ, կովկասյան զեկույցների ծառայություն, N 102, 22 հոկտեմբերի 2001թ.

33 Հակամարտության դատմության վերաբերյալ տես՝ Հերձիգ, նշվ. աշխ.

34 Մասվեևա, նշվ. աշխ.

35 Տես՝ ՌԱԵ/ԱՌ, Նյուսլայն, 10 հունվարի 2002 թ. համապարփակ և հավաստի վիճակագրություն միգրացիայի վերաբերյալ առկա չէ:

36 2001 թ. հոկտեմբերին Հայաստանում անց է կացվել մարդահամար, որի արդյունքների հրապարակումը դեռևս սպասվում է:

37 Յունուսով, Ա., *«Ադրբեջան», «Ազգամիջյան հարաբերությունները և հակամարտությունները հետխորհրդային պետություններում»,* խմբ. Վ.Ա.Տիշկով և Ե.Լ.Ֆիլիպովա, Տարեգիր 2000 թ., Մոսկվա, Ազգաբանության եւ մարդաբանության ինստիտուտ, Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիա, 2001 թ., էջ. 296-316

38 Նույն տեղում

39 Գրիգորյան, Մ., *«Մի բուռ Ռուսաստանը Հայկական լեռնաշխարհում»,* Հայացք Երևանից, N 2 (23), փետրվար 2000 թ., էջ. 20-3

40 Մարդու իրավունքների քրդական նախագիծ /ՄԻՔՆ/, մեջբերում ՄԻՔՆ զեկույցից, *«Քրդերը նախկին ԽՍՀՄ-ում»*, նոյեմբեր 1996 թ. [http://www.gn.apc.org/www.khrp.org/country]

41 Այս բաժնում տեղեկատվության մեծ մասը հիմնված է Հայաստանում եզդիների վերաբերյալ Մարինա Քուրքչյանի ուսումնասիրության վրա, որը պատրաստվել է 1996 թ. ՄԱԿԶԾ համար. Տես նաև՝ Գրիգորյան, Մ., *«Լեռներում մեծանալով»*

42 Տես, օրինակ, *«Քրդերը Հայաստանում»*, Քուրդիշ Լայֆ, 1995 թ. գարուն [http://www.xs4all.nl/~tank/kurdish/htdocs/lib/armen.html]

43 Կրիկորյան, Օ., «Եզդիները/քրդերը Հայաստանում», ՄԻՆԵԼՐԵՍ, 16 մայիսի 1999 թ.

44 Նույն տեղում այլ քննարկումներին տեղեկանալու համար տես՝ Կրիկորյան, Օ., *« Կռիվն կրա՞կ է բորբոքվում. Քրդական ազգային ազատագրական շարժում»,* Կռունկ/Հայկական նորությունների ցանց [http://groong.usc.ed/ro], or online at [http://www.freespeech.org/

45 Մասվեևա, Ա., *«Իսլամիստական մարտահրավերը հետխորհրդային Եվրասիայում»,* Քաղաքական իսլամը և հակամարտությունները Ռուսաստանում և Կենտրոնական Ասիայում», խմբ. Լ. Ջոնսոն եւ Մ. Եսենով, Ստոկհոլմ, Միջազգային հարաբերությունների շվեդական ինստիտուտ, 1999 թ., էջ. 36-47

46 Լեզգիների վերաբերյալ տես՝ Մասվեևա, Ա. և Մաք Քարթնի, Կ., *«Քաղաքականության պատասխանները էթնիկ համայնքի բաժանմանը. Լեզգիները Ադրբեջանում»,* Փոքրամասնությունների և խմբերի իրավունքների հարցերի միջազգային ամսագիր, թիվ 5, 1998 թ., էջ 213-52

47 Յունուսով, նշվ. աշխ.

48 Նույն տեղում:

49 Հեղինակի հարցազրույցները Բաքվում, այդ թվում նաև Ազեր Հազրեթի /Լրագրողների միություն/ և Արզու Աբդուլլաևայի /առողջապահության գործակալություն/ հետ, սեպտեմբեր, 2001թ.

50 Նույն տեղում:

51 Վրաստանում Հայաստանի դեսպանության գնահատականների համաձայն, հեղինակի հարցազրույց, Թբիլիսի, ապրիլ, 2001թ.

52 Նինոցմինդայի վիճակագրական գրասենյակի համաձայն 2000 թ. հայերը կազմել են 95,9 տոկոս, ենթադրվում է, որ Ախալքալաքը նույնպիսի կազմ ունի, 1989 թ. հայերը Նինոծմինդայում կազմել են 89,6, իսկ Ախալքալաքում 91,3 տոկոս

53 Խմբ. Ներսիսյան, Մ.Գ., *«Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում»,* Երևան , Հայաստան, 1983 թ.

54 Մասվեևա, Ա., *«Միջազգային հանրությունը մտնում է հակամարտության կանխմանը. Վրաստանի Ջավախքի շրջան», «Խոսումից դեպի գործողություն. ՄԱԿ-ի հնարավորությունների ամրապնդումը հակամարտությունների կանխման գործում»,* խմբ. Կ. Վերմեստր եւ Կ.Լ. Սրիրամ, Բոլդեր, Կոլորադո, Լին Ռայներ Փաբլիշերս, 2002 թ.

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

55 Դարչիաշվիլի, Դ., *«Հարավային Վրաստան. անվտանգության նպաստակները և խնդիրները»* զեկույց, դաsrաստված Writenet-ի կողմից, UNHCR-ի «ԱՊՀ, տեղական մոնիտորինգի նախագիծ», մարs 1999 թ.

56 Հեղինակի հարցազրույցը Ջավախքի փոխխաղափաղեs Նորիկ Կարապետյանի և Ջավախքի այլ ներկայացուցիչների հետ, Ախալքալաք, ապրիլ 2001 թ.

57 Հեղինակի հարցազրույցը «*Վիրքի*» անդամների հետ, ապրիլ 2001թ.

58 Հեղինակի հարցազրույցը «*Վիրքի*» անդամների, այդ թվում «*Վիրքի*» համանախագահներ Դավիթ Ռոստակյանի և Մել Թոփուզյանի հետ, Ախլքալաք, ապրիլ, 2001թ.

59 Ալավերդյան, Դ., *«Հայաստանը վրացական երկընտրանքի առջև»,* ՀԽԶԻ, Կովկասյան զեկույցների ծառայություն, N 102, 22 հոկտեմբերի, 2001թ.

60 Կուլխիանիձե, Ա., *«Հայկական և ադրբեջանական փոքրամասնությունները Վրաստանում. Վրաստանի ազգային և արտաքին քաղաքականության մասին»,* «Էթնիկ և տարածաշրջանային հակամարտությունները Եվրասիայում», խմբ. Ա. Մալաշենկո, Բ. Կոփիեթերս և Դ.Տրենին, հատ. 1, Կենտրոնական Ասիա և Կովկաս, Մոսկվա, Վես Միր, 1997 թ., էջ. 170-82, էջ 179

61 *«Էթնիկ ադրբեջանցիների խնդիրները Վրաստանում»*, Ռարf 31, օգոստոս, 2001 թ., մեջբերված է ՄԻՆԵԼՐԵՍ-ում, 1 սեպտեմբերի 2001թ.

62 Այս թվերը մոտավոր են, քանի որ համապատասխան մարդահամար չի անցկացվել

63 Ռուսաստանի երկրորդ արտավին նախորդող ժամանակահատվածի վերլուծությունների վերաբերյալ տես՝ Սկակով, Ա. Յ., *«Վրաց-ղաղստանյան և վրաց-չեչենական հարաբերությունները», «Նոր Եվրասիա. Ռուսաստանը և մերձավոր տարածաշրջանի պետությունները»,* խմբ. Ե.Կոժոկին, Մոսկվա, Ռազմավարական ուսումնասիրությունների ինստիտուտ, 1998 թ., էջ 80-109

64 Հեղինակի հարցազրույցները Թբիլիսում 2001 թ. ապրիլին և հուլիսին

65 Իսկանդարյան, Ա.. Պարաստեվ, Ա., Ավագյան, Գ., «*Կոդորի կիրճի իրադարձությունները»,* 2001 թ, Կովկասյան ոչ կառավարական կազմակերպությունների համաժողովի հետազոտական առաքելություն, ԱՊՀ կոնֆերանսի UNHCR աշխատանքային խումբ և Վ.Ռ. Նելսոնի անվ. հասարակական հարաբերությունների ինստիտուտ, Զալոգիկալու, 2001թ.: Առաքելության գնահատականները հիմնված են նաև աբխազական կողմից գերության մեջ գտնված մարտիկների հետ անցկացված հարցազրույցների վրա, տես նաև՝ ՌԱԵ/ԱՌ զեկույցները, հոկտեմբեր-նոյեմբեր 2001 թ.

66 Աղլիբա, Ի. և Սբորով, Ա., մեջբերումը Աբխազիայի պաշտպանության փոխնախարար Գարի Կուպալբայից *«Վրացիները լցվում են են Կոդորի կիրճ, աբխազները պատրաստվում են պատերազմի»,* N 187, 12 հոկտեմբերի 2001թ.

67 Տեղի ինչպես վրացի, այնպես էլ օս կանայք բողոքել են, որ երբ իրենք բաց են թողել աղոթքները, Նոր Առաքելական Եկեղեցու գերմանացի քարոզիչները սննդի իրենց բաժինը տվել են ուրիշներին այդ կերպ նրանց ճշտապահության դաս տալով, տես՝ «Պանկիսի կիրճ. Հիմնահարցերը լուծում են դահանջում», Թբիլիսի, Կովկասյան ոչ կառավարական կազմակերպությունների համաժողով, 2001 թ., էջ 35

68 Հարցազրույցներ Դումաստուրի եւ Հալացանի գյուղերի օս բնակիչների հետ, տես՝ Կոկոևա, Ա., *«Օսերը Պանկիսի կիրճում», «Պանկիսի կիրճ»,* նշվ. աշխ, էջ. 30-5

69 Տեղացի վրացիների 55, օսերի 27 և քիստերի 40 տոկոսը Պանկիսի անվտանգության վատթարացման համար մեղադրում են չեչեն փախստականներին, տես՝ *«Պանկիսի կիրճ»,* նշվ. աշխ, էջ 9

70 Հեղինակի հարցազրույցը *«Կովկասյան տանը»,* Թբիլիսի, սեպտեմբեր 2001թ.

71 Սկակով, նշվ. աշխ, էջ. 82-3

72 Տես նաև՝ *«Թուրք-մսխեթցիներ. Լուծումներ և մարդու անվտանգություն»,* Բաց հասարակության ինստիտուտ, դեկտեմբեր, 1998 թ,, Շիհի, Ա., և Նահայլո, Բ., «Ղրիմի թաթարները, Վոլգայի գերմանացիները եւ մսխեթցիները», Լոնդոն, ՓԻԽ, 1980 թ.

73 Յունուսով, Ա., *«Թուրք-մսխեթցիներ. երկու անգամ վտարված ժողովուրդ»,* Բաքու, Խաղաղության և ժողովրդավարության ինստիտուտ, 2000թ., էջ 94

74 Նույն տեղում, էջ. 9

75 Նույն տեղում, էջ. 87

76 Տես օրինակ՝ Բաազով, Զ.,*«Վրաստան. անցանկալի մսխեթցիներ»*, ՀԽԶԻ, Կովկասյան զեկույցների ծառայություն, N 106, 20 նոյեմբերի 2001թ.

77 «Նախկին ԽՍՀՄ-ի արտաքսված ժողովուրդների. Մսխեթցիների դեպքը», Միգրացիայի միջազգային կազմակերպություն, Ժնև, հունվար 1998 թ.

78 Յունուսով. նշվ աշխ., էջ 101՝ Անհնարին է վստահաբար ասել, թե որքանով են վերադարձած մեսխեթները հավասում իրենց վրացական ծագմանը

79 Բարատաշվիլի, Կ., *«Մսխեթցի մուտլմանների վրացական ազգանունների մասին»,* Կավկազսկի ակցենտ, N 15 (40), օգոստոս, 2001 թ., էջ 6

80 Դեհդաշտ-Ռասմուսեն, Ռ., *«Պատմական և արդիական խնդիրները և մսխեթցիների Վրաստան վերադառնալու վերաբերյալ առաջարկները».*

«Հակամarsnությունները Հarավային Կովկասում» սեմինarին ներկայացված հոդված, Խաղաղության հեsազոsման sեղեկաsվության բաժին, ԲոնՆ, Զarգացման և խաղաղության հիմնադrամ, Բեռլին, 15 հունվarի, 2001թ.

81 Միջազգային համանեrում, նշվ. աշխ.

82 *«Վrասsան. Շնarղնաչեն պեsf է վերջ sա կrոնական բռնությանը», Հյումնն Ռայթս Ուոչ*, 9 նոյեմբերի 2001թ.

83 *Հյումնն Ռայթս Ուոչ* , Համաշխarհային զեկույց, 2001 թ. «Վrասsան. Մarդու իrավունքների զarգացումները» [http://www.hrw.org]

84 Հarցազrույցներ sեղի բնակիչների հեs Ախալքալաքում և Նինոsմինդայում, աprիլ, 2001թ., հաssաsված է նախագահի ազգամիջյան հarցերով խոrհrդական Ալեքսանդr Գեrասիմովի հեs հarցազrույցի ընթացքում, Թբիլիսի, աprիլ 2001թ.

85 Հեղինակի հarցազrույցը Վrասsանի խոrհrդաrանի քաղաքացիական ինsեգrացիայի կոմիsեի նախագահ Գելա Կվarածխելիայի հեs, Թբիլիսի, հուլիս, 2001թ.

86 Միջազգային համանեrում, «Հիմնահarցերը Եվrոպայում», հունվar-հուլիս, 2001 թ.

87 Հեղինակի հarցազrույցը Ախալքալաքից պաsգամավոr Մելիք Ռաիսյանի հեs, Ջավախքի, աprիլ 2001թ.

88 *«Լեզգիներ. Իrավիճակի գնահաsական»*, հեsազոsական առաքելության զեկույց, *Միջազգային sագնապ, Լոնդոն, 1997թ.*

89 Հեղինակի հarցազrույցը Էլդar Զեյնալովի, Մեհթի Մեհթինի և Arզու Աբդուլաևայի հեs, Բաքու, սեպsեմբեr, 2001թ.

90 *Հյումնն Ռայթս Ուոչ*, Համաշխarհային զեկույց 2001թ., նշվ. աշխ. [http://www.hrw.org]

91 Հեղինակի հarցազrույցը Գելա Կվarածխելիայի հեs, նշվ. աշխ.

92 Տես, օrինակ՝ *Հյումնն Ռայթս Ուոչ*, Համաշխarհային զեկույց 2001թ. «Ադrբեջան. Միջազգային հանrության դերը» [http://www.hrw.org]

93 Միքայել Դանիելյանը (Հելսինկյան ասոցիացիայի նախագահ, Հայաsսան), Եվrոպայի Խոrհrդին հղել է նամակ, բողոքելով Հայաsսանի ԵԽ անդամակցության դեմ՝ հիմնավոrելով, ոr մarդու իrավունքների չափանիշները eրկrում չափազանց ցածr մակarդակում են (հեղինակի հarցազrույցը Միքայել Դանիելյանի հեs), սեպsեմբեr, 2001թ,, Եrևան

94 Հեղինակի հarցազrույցը Իվar Վիկիի հեs, Վrասsանում ԵԱՀԿ առաքելության փոխնախագահ, Թբիլիսի, աprիլ, 2001թ.

95 Հեղինակի հarցազrույցը Arարաs Եսոյանի հեs, Բarեփոխումների և Ժողովrդավarական զarգացման աջակցության կենsrոնի նախագահ, Ախալքալաք, աprիլ, 2001 թ.

96 Բաազով, Զ., *«Կarմիr Խաչը լքում է Վrասsանը»*, ՀԽԶԻ, Կովկասյան զեկույցների ծառայություն, N 107, 29 նոյեմբերի 2001թ.

97 Հաղորդագrություն Էռլ Գասsից, USAID, Թբիլիսի, 27 նոյեմբերի, 2001թ.

98 Հաղորդագrություն Լէյլ Վայսներից, ԵՄ Պarենային անվsանգության ծrագիr, Թբիլիսի, 14 նոյեմբերի 2001թ.

99 Օrինակ, Թեrի Ադամսի ելույթը Չէքըմ Հաուզ-ում sեղի ունեցած *«Կասպիական էներգեsիկ ներդrում 2001. Նոr իrականություններ»* խոrագrով քննarկմանը, Միջազգային հarաբեrությունների թագավոrական /Royal/ ինսsիsուs, 14 հունիսի 2001թ.

100 Այս օrինակները սպառիչ չեն և նպաsակ ունեն հնarավոrության սահմաններում ընթերցողին համապաsասխան օrինակներ ներկայացնել:

Arbatov, A., Charles, A.H. and Olson, L. (eds), *Managing Conflict in the Former Soviet Union: Russian and American Perspectives*, CSIA, MIT Press, 1997.

*The Caucasus and the Caspian*, seminar series, 'Strengthening democratic institutions project', vols. I–III, Cambridge MA, Harvard University, 1996–8.

*Caucasus Report*, Radio Free Europe/Radio Liberty [www.rferl.org]]

*Central Asian Survey*

Cohen, J. (ed.), *Question of Sovereignty: the Georgia-Abkhazia Peace Process*, Accord, International Review of Peace Initiatives, Conciliation Resources, no. 7, 1999.

*Contemporary Caucasus Newsletter*, Berkeley, University of California.

Coppieters, B., Darchiashvili, D. and Akaba, N. (eds), *Federal Practice: Exploring Alternatives for Georgia and Abkhazia*, Brussels, VUB Press, 2000 (English) and Moscow, Ves Mir, 1999 (Russian) [also on http://poli.vub.ac.be/]

Coppieters, B., Nodia, G. and Anchabadze, Yu. (eds), *Georgians and Abkhazians: The Search for a Peace Settlement*, Koeln, Sonderveröffentlichung des Bundesinstituts für Ostwissenschaftliche und Internationale Studien, 1998 [also on http:// poli.vub.ac.be/]

Curtis, G.E. and Suny, R.G., 'Armenia', in G.E. Curtis (ed.), *Armenia, Azerbaijan, and Georgia: Country Studies*, Lanham, MD, Bernan, May 1995.

Dale, C., 'The dynamics and challenges of ethnic cleansing: the Georgia-Abkhazia case', *Refugee Survey Quarterly*, vol. 16, no. 3, 1997, pp. 77–109.

Dawisha, K. and Parrott, B., *Conflict, Cleavage, and Change in Central Asia and the Caucasus*, Cambridge, Cambridge University Press, 1994.

Garb, P., 'Ethnicity, alliance building and the limited spread of ethnic conflict in the Caucasus', in D.A. Lake, and D. Rothchild (eds), *The International Spread of Ethnic Conflict: Fear, Diffusion and Escalation*, Princeton, NJ, Princeton University Press, 1998.

Goldenberg, S., *Pride of Small Nations: The Caucasus and Post-Soviet Disorder*, London and New Jersey, Zed Books, 1994.

Hansen, G., *Humanitarian Action in the Caucasus: A Guide for Practitioners*, Humanitarianism and War Project, and Local Capacities for Peace Project, Providence, Watson Institute, Brown University, 1998.

Herzig, E., *The New Caucasus: Armenia, Azerbaijan and Georgia*, London, RIIA/Pinter, 1999.

Hewitt, G.(ed.), *The Abkhazians: A Handbook*, London, Curzon Press, 1998.

Human Rights Center of Azerbaijan, *Newsletter*

Hunter, S., *The Transcaucasus in Transition: Nation-Building and Conflict*, Washington, DC, Center for Strategic and International Studies, 1994.

Jonson, L. and Esenov, M. (eds), *Political Islam and Conflict in Russia and Central Asia*, Stockholm, Swedish Institute of International Affairs, 1999.

Lynch, D., *The Conflict in Abkhazia: Dilemmas in Russian 'Peacekeeping' Policy*, Discussion Paper, London, RIIA, 1998.

MacFarlane, S.N., Minear, L. and Shenfield S., *Armed Conflict in Georgia: Case in Humanitarian Action and Peacekeeping*, Providence, Watson Institute, Brown University, Occasional Paper no. 21, 1996.

Matveeva, A. and McCartney, C., 'Policy responses to an ethnic community division: Lezgins in Azerbaijan', *International Journal on Minority and Group Rights*, no. 5, 1998.

Nasmyth, P., *Georgia: In the Mountains of Poetry*, Richmond, Curzon Press, 1998.

Sriram, C.L. and Wermester, K. (eds), *From Promise to Practice: Strengthening UN Capacities in Conflict Prevention*, Boulder, CO, Lynne Rienner Publishers, 2002 (forthcoming).

Suny, R.G., *Transcaucasia, Nationalism and Social Change: Essays in the History of Armenia, Azerbaijan and Georgia*, Ann Arbor, University of Michigan Press, 1996.

Tongeren, P. van, Veen, H. van de and Verhoeven, J. (eds), *Searching for Peace in Europe and Eurasia: An Overview of Conflict Prevention and Peacebuilding Activities*, Boulder, CO, Lynne Rienner Publishers, 2002.

Waal, T. de, *Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War*, New York, New York University Press, 2002 (forthcoming).

Walker, C.J. (ed.), *Armenia and Karabagh: The Struggle for Unity*, London, Minority Rights Group, 1991.

Walker, E.W., *No Peace, No War in the Caucasus: Secessionist Conflict in Chechnya, Abkhazia and Nagorno-Karabakh*, Cambridge, MA, Harvard University Press, 1998.

*WarReport*, 1995–8, London, Institute for War and Peace Reporting, currently IWPR Caucasus Reporting Service [www.iwpr.net]

*Working Paper Series*, Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies, University of California, Berkeley [http://socrates.berkeley.edu/~bsp]

*Yerevan Press Club Bulletin*